



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. Աղաբաբյան
Պատկերասրահ

12/28/24 1906

91.99
-15



891.99
Q-15 *ար.*

19 NOV 2018
13 MAY 2005

ԱՆՈՒՇԱԻԱՆ ԱՐՈՎԵԱՆ

800
31-ԱԲ



Պ Ե Տ Կ Ե Ր Ն Ե Ր

(գրագրական կեանքից)

10/2

Ա. Գ. Ի. Բ.



Թ. Ի. Ֆ. Լ. Ս.

Տպարան Մովսէս Վարդանեանցի
Типография М. Вартанянна. Гановская № 3.
1906

37

6005 VAN EY

16795

89199

$$\frac{1000}{75}$$

W-15

Up-15 | Upward and Downward
movement of the

A-717

20/1/80

Գրքայինների վաճառումից գույացած գումարդիւնըը նշանակվում է հայ-թուրքական ընդհարման հայ աղէտեալների օգտին:

2 ԱՅՆԻԿԸ¹⁾

(մանկական յիշողութիւններից)

I.

Ես զեռ երեք տարեկան եմ եղել, որ հայրս վախճանուել է, որին շատ դժուար եմ յիշում. բայց պապըս լաւ միտքս է, նա բահանայ էր: Այն ժամանակ մեր զիւղում մեզանից հարուստ ոչ որ չկար: Բացի ստուարաթիւ տաւար—ոչխուրից, ձիաների ջոկերից ու մեղուի փէթակներից, մենք սեփական հողեր էլ ունէինք:

Դժբաղդաբար պապս էլ շուտով վախճանուեց և մենք, զրկուելով մի խելացի կառավարչից, զրկուեցինք նաև մեր բոլոր դովլաթից ու հողերից:

Պապիս մահից յետոյ շատ շանցած՝ հօրեղբայրներիս մէջ երկպառակութիւն ծագեց, որին հետեց բաժանքը: Թէև մենք մեր կարողութիւնից զրկուել էինք, բայց տնային առարկաներ շատ ունէինք, մանաւանդ գորգեր, կապերտներ ու պղնձեղէն: Այդ առարկաները, նմանապէս և անշարժ կայքը վիճակար-

1) Պատկերներին մեծ մասը արտատպած է «Նոր-դար»-ից:

կուլթիւնով էին բաժանում: Վիճակը կամ ինչպէս գիւղում են ասում՝ չորի գցողները ես ու բոյրս էինք:

Այնքան առարկաներից ես ոչ մի բանի վրա աչք չունէի. սակայն երբ հերթը կաշիներին եկաւ, սիրտս սկսեց արագ բաբախել: Մենք ունէինք չորս հատ եզի կաշի, դրանցից մէկը մեր ուժեղ ու գեղեցիկ Ծիրան անունով եզի կաշին էր, որին կենդանութեան ժամանակ շատ էի սիրում և այժմ սրտանց ցանկանում էի, որ նրա կաշին մեզ բաժին ընկնէր: Ուստի բոլորս հետ ծածուկ պայմանաւորուեցինք, որ մեզանից ով չորի գցելու լինի, միւսը աչքով ցոյց տալ մօրս բռնած չորի, որպէս զի Ծիրանի կաշուի վրա գցենք: Այդպէս էլ արեցինք, աջողուեց ու ես չափազանց ուրախացայ:

Բաժանուելուց յետոյ ես ու բոյրս մեր այլի մօր հետ առաջին անգամ առանձին բնակարան բաշտուելով՝ սոսկում գլացինք: Մայրս մեզ միշտ սիրտ էր տալի և մենք, որ նրա մէջ մեծ հեղինակութիւն էինք տեսնում, հանգստանում էինք: Որպէս զի մենակութիւնը մեզ վրա տխուր ներգործութիւն չունենար, մայրս հօրեղբայրներիս երեխաներին յաճախ կանչում էր մեզ մօտ ճաշելու:

Ասում են՝ երեխայի մտքից բանը չի ընկնիլ, և այդ ճշմարիտ է: Բաժանուելիս, ի միջի այլոց, մեզ բաժին ընկաւ մեր հեշտաեղբ, մի պոկպոկակեր կոտորած չայնիկով: Այդ չայնիկը խեղճ մօրս զահլան տարել էր. թէպէտ մենք հիւր եկած միջոցին ու տօն օրերին էինք միայն թէյ պատրաստում, բայց մի կողմից շատ էր ամաչում մայրս հիւրերի առաջ կոտորած

չայնիկից թէյ ածելիս, միւս կողմից էլ համարեա կէսը թափվում էր:

Մենք ոչ մի կերպ չէինք կարողանում այնքան խնայողութիւն անել, որ մի նոր չայնիկ գնէինք: Փոքր էի ես, բայց այդ հանգամանքը խոր տպաւորութիւն էր թողնում իմ մատաղ սրտի վրա: Եւ թէպէտ ոչ որի բան չէի ասում, բայց մտքումս միշտ ազաչում էի Աստծուն, որ ինձ շուտով աջողութիւն տալ ուսումս աւարտելու, որպէս զի այնուհետեւ մի պաշտօն ճարելուս պէս, հէնց առաջին վաստակիցս մի նոր չայնիկ գնէի մօրս համար: Այդ չայնիկի հոգսը այնպէս էր տպաւորուել սրտիս վրա, որ մի գիշեր երազում տեսնում էի հանդուցեալ հօրս մեր շեմքի վրա կանգնած, այն դիրքով ու տարազով, ինչպէս փորագրուած է նրա պատկերը գերեզմանաբարի վրա.— նա ժպիտը դէմքին դառնում էր մեզ այս խօսքերով. «վախիլ մի՛ր, դօշաղ կացէր, ինչ ներդ է պակաս, ասեցէք՝ առնեմ»: «Չայնիկ չունենք, սպի, մի չայնիկ առ», ուրախ ուրախ պատասխանեցի ես ու իսկոյն գարթնեցի:

Անսահման սէր ունէի ես դէպի ուսումը. մայրս նոյնպէս սրտանց փափաղում էր ինձ ուսման տալու որպէս զի «ռանչպար» չ՛դառնայի, ինչպէս ինքն էր ասում: Նա միշտ խրատում էր ինձ կարգալ—գրել սովորել, որ կազակները ինձ էլ միւս գիւղացիներին պէս ծեծելով կոռ ու բէգեար չ՛տանէին: Սկզբից մօրս խրատների իմաստը լաւ չէի ըմբռնում, բայց մի օր, վարժապետիս մօտից տուն վերադառնալիս, տեսայ թէ ինչպէս կազակները մեր գիւղացի Մամա-

ջանանց Պօղոսին մտրակներով անդժաբար ծեծում էին: Իմ մանկական սիրտը անդիտակցօրէն բողոքեց այդ գաղանթեան դէմ. և որովհետեւ ձեռքիցս ոչինչ չէր գալիս—սրտիս ճաքելուց լաց եղայ: Տուն դալուս պէս մօրիցս հարցրի թէ արդեօք Մամաշանանց Պօղոսը գիր գի՞տէ: Բացատրական պատասխան ստանալով՝ հաղորդեցի նրան տեսածս անցըր:

— Տես, որդի, ասաց մայրս, որ ասում եմ. դէ՛ աշխատիր գրել—կարդալ սովորել, որ բեզ էլ այդպէս ծեծելով բէգեար չ'տանեն:

Այդ օրից էլ աւելի եռանդ աւելացաւ իմ մէջ գէպի ուսումը: Երեակայութեանս առաջ պատկերանում էր՝ իբրեւ թէ ուսում առած մեծ մարդ եմ դարձել ես և գիւղը վերադառնալով երբ տեսնում եմ գիւղացիներին ծեծելիս, այդ անսիրտ կազակներին խիստ պատժի եմ ենթարկում և առհասարակ արդելում եմ այդ անարդ ծեծը:

Իր տեղում մոռացայ յայտնել, որ մեր բաժանուելուց անմիջապէս յետոյ, մայրս տուեց ինձ մեր գիւղացի մի յայտնի տիրացուի մօտ կարդալու, որի յայտնի լինելը նրա ռուսերէն գիտենալուն էր կայանում: Նրա դպրոցը իրանց գումն էր: Իմ մի գրագէտ հօրեղբօրիցս արդէն տետրն ու մի կանոն սաղմոսը վերջացրել էի. նոր ուսուցիչս հայերէնից ժամագրքի վրա դաս տուեց, ռուսերէնից էլ ազգութեան: Ինձ ու մօրս համար մի հանդիսաւոր տօն էր այն օրը, երբ «Համբարձցի գաշս իմ 'ի լերինս» փոխը բերան սերտելով, նախօրօք մեր մարագի կտրան վրա փորձ էի կատարում, որ իրիկուան ժամասա-

յութեանը եկեղեցում ասեմ: Մայրս իրան շատ բաղդաւոր էր զգում, որ արդէն փոխ ասող տղայ ունի. նա յոյս էր տածում, որ ժամանակին բահանայ կ'դառնամ ես ու պապիս տեղը կ'ընեն:

Գիւղական ուսումը արդէն աւարտել էի. տետրը, սաղմոսը, ժամագիրքը և աւետարանը վերջացրել էի. ռուսերէնից էլ ազգութեան, լոռնօյէ ու լուսնիկը անցել էի: Այժմ պակասում էր ինձ, այսպէս ասած, բաղաբային ուսումը, որի համար նիւթական միջոց չ'կար: Այնուամենայնիւ մեր կոտրած չայնիկի հոգսը մտքիցս չէր հեռանում:

II.

Այդ ժամանակ իմ մի հօրեղբայրը X գիւղի հաշտարար դատաւորի մօտ բարտուղարի պաշտօն էր կատարում: Նա ինձ տարաւ իր մօտ և յանձնեց տեղի եկ. ծխական դպրոցը. իսկ ինքը կէս օրերից յետոյ պարապում էր ինձ հետ յատկապէս ռուսերէնից:

X գիւղն ուղեորուելիս, հրաժեշտի ժամանակ նկատեցի, որ մայրս արտասուքը սրբում է ինձանից ծածուկ. չայնիկի վշտի պէս մի վիշտ էլ այդ դարձաւ ինձ համար:

Մենք միայն մի ձի ունէինք, որ հօրեղբայրս էր հեծած. ճանապարհի համեմատաբար լաւ տեղերը երբեմն ինձ էլ էր նստեցնում իր գաւակին: Որով-

հետև ճանապարհը տանում էր քարքարոտ ձորերի միջով ու անտառոտ սարերի վրայով, մեծ մասը ես ոտքով էի գնում: Ոտքով քայլելուցս սրունդներս այնպես էին յոգնում, որ թւում էր թէ փայտից են. ձին հեծնելուն պէս նիրհս գալիս էր: Կէս քնած, կէս արթուն՝ իմ աչքերին զանազան երևոյթներ—պատրանքներ էին երևում. ճանապարհի երկու կողմերի ծառերը մերթ մարդիկ էին դառնում՝ պար բռնած, մերթ զազաններ կամ մի տեսակ զարհուրելի հրէշներ—որոնք անձոռնի ատամները բացած, իմ վրա ծաղրում լինէին կասես:

X գիւղի դպրոցում շուտով գրաւեցի երեք բահանայ ուսուցիչներին ուշադրութիւնն ու համակրանքը, նմանապէս և բոլոր աշակերտներին: Ես ընդունուած էի իբրև առաջին աշակերտ երկրորդ դասարանում: Մի բանի ժամանակից յետոյ, մինչև անգամ ուսումնարանում դասեր էլ էի տալիս ուսուցիչներից մէկի կամ միւսի բացակայութեան միջոցին: Բայց և այնպէս մեր կոտրած չայնիկը մտքիցս չէր հեռանում:

Մի օր մեր ուսուցիչ քահանաներից մէկը մկրտութիւն ունէր. և որովհետև տիրացուն բացակայ էր, նրա փոխարէն ինձ տարաւ իր հետ: Իբրև տիրացուի վարձատրութիւն, քսան կոպէկ էլ ինձ տուեցին. թէև ես սրտանց հրաժարվում էի փող ընդունելուց, բայց ուսուցչիս ստիպելովը վերցրի: Տուն վերադառնալիս մտայ մի խանութ, որտեղ ուրիշ բաների հետ չայնիկներ էլ էին ծախում. մի փոքրիկ ու սիրուն չայնիկ ընտրելով, սկսեցի սակարկութիւն

անել. խանութպանը յիսուն կոպէկից սակաս չ'տուեց: Ապագայում մի նոյնպիսի դէպքի յոյսով, այդ քսան կոպէկանոցը թաշկինակիս ծայրում պինդ կապած, տուն գնացի: Երևակայութեանս առաջ պատկերանում էին նման օրինակ դէպքեր, որոնցից երեսուն կոպէկ վարձատրութիւն էի ստանում ու այն չայնիկը մօրս ուղարկում:

Մի անգը, որ տեղի ունեցաւ մեր դպրոցում, ուզում եմ մէջ բերել: Նոր տարու նախընթաց օրն էր. մեր կրօնուսոյց քահանան աշակերտներին ուշադրութեան հրաւիրելով, յայտնեց որ հետեալ օրը բոլորս գալու ենք դպրոց, որ այնտեղից գնայինք իրանց տուն կաղանդի տօնը հանդիսով տօնելու, երգելով ու ճառ կարդալով: Այնտեղ պէտք է լինէին բացի մեր ուսուցիչներից ու հոգաբարձուներից, նաև գիւղի յայտնի առաջաւոր մարդիկ: Իբրև առաջին աշակերտ, ճառը ես պէտք է կարդայի, որի սեղրութիւնը իսկոյն ինձ յանձնուեց արտադրելու համար:

Տէր—հայրը աւելացրեց մօտաւորապէս և հետեալ խօսքերը. «որդիք, կարծեմ ամենաիդ էլ բաջ յայտնի է, որ մեր ազգային նախնաւանդ սովորութեան համաձայն, ձեր բոլորիդ սրբազան պարտականութիւնն է վաղուան օրը աշխատող ուսուցիչների համար ընծաներ բերելը, գորօրինակ՝ զլխով շաքար, գինի, օղի և այլն: Ուրեմն, սիրելի որդիք, գիտեմ որ ձեր ծնօգներին կ'հասկացնէք այդ, իսկ նրանք ձեր ցանկութիւնը ուրախութեամբ կրկնաւորեն»:

Գլխով շաքարի անունը տալիս՝ տէր—հայրը առանձնապէս ինձ վրա մի խորհրդաւոր հայեացք գցեց: Բայց չէ՞ որ ես ծնողներ չունէի, որ իմ ցանկութիւնը ուրախութեամբ կատարէին. ես մինչդեռ մի չայնիկ գնել չէի կարողանում, շաքարի գլուխը ինչո՞վ գնէի: Ուրեմն կամ կաղանդի հանդիսին չ'պէտք է մասնակցէի ես, կամ դատարկաձեռն պէտք է գնայի: Սակայն ես ցանկանում էի եւ հանդիսին մասնակցել և՛ ուսուցիչներին համար ընծայ տանել:

III.

Միւս օրն առաւօտունից ուսումնարանի գանգակի ղողանջիւնը արդէն հրաւիրում էր աշակերտներին, իսկ ես անզգայի պէս էի. դպրոց գնալ չէի ուզում:

Շատ չ'անցաւ, տեսնեմ աշակերտներից երկուսը ետեիցս են եկել թէ՛ «շուտով արի՛, տէրաէրները քեզ են սպասում»: Ես սլատասխանեցի, որ շուտով կերթամ. սակայն ինքս աթոռին մօտենալով, գրէթէ վայր ընկայ վրան, քան թէ նստեցի: Հօրեղբայրս աշկարա տեսնելով, որ ուսումնարան գնալ չեմ ուզում, հարցրեց պատճառը.—հարկադրուած էի ուղիղը խոստովանելու: Նա սաստիկ գայրացաւ այդ անկանոնութեան դէմ,—մանաւանդ ինքն էլ քիչ ժլատ էր—և ստիպեց որ վստահօրէն գնամ, առանց որ և է ընծայի: Ես դեռ տատանվում էի, երբ երկրորդ

անգամ ետեիցս եկան. ինչ արած, գնացի: Ճանապարհին ձեռքիս քսան կոպէկով երկու լիմոն գնեցի, որպէս զի բոլորովին դատարկ ձեռքով չգնամ տէր հօր մօտ: Լիմոնները այն խանութում գնեցի, որտեղ որ չայնիկն էի ընտրել: Իմ ընտրած չայնիկը բոլորի միջից աչքի էր ընկնում իր գրաւչութեամբ:

Ոտքս նոր էի դպրոցի շնմբից անվստահօրէն ներս դրել, որ տէր—հայրը նախ ձեռքերիս նայելով, ապա դէմքիս այնպիսի մի խէթ հայեացք գցեց, որ տեղիս ու տեղս մնացի մեխուած...: Վերջապէս բոլոր աշակերտներս մեր ուսուցիչների ուղեկցութեամբ գնացին տէր—հօր տունը. այնտեղ էին արդէն հոգաբարձուներն ու գիւղի մեծամեծերը: Ճառը սօսողութեամբ կարդացի. խմբովին երգեցինք և հանդիսից յետոյ միւրգ բաժանեցին աշակերտներին: Բայց իմ ձեռքերը չ'պարզուեցին դէպի մրգեղէնի մատուցարանները: Հոգաբարձուների ու գիւղի առաջաւորների հետանալուց յետոյ, տէր—հայրը ցուցակով կանչեց այն աշակերտներին, որոնք ընծայ էին տարել. իսկ ինձ՝ իմ սակաւութիւ վիճակակիցներովը արձակեց: Նրանց ամենաին մի—մի գիրք էր բաժանել. շաքարի գլուխ տանողներին աւելի մեծ գրքեր էր տուել: Այս հանգամանքը այնպիսի զօրեղ տպաւորութիւն արեց ինձ վրա, որ քիչ էր մնում թէ չայնիկը մոռանայի:

Մի օր, տեղական հողատէր ազնուականներից մէկը մեծ հրաւերը ունենալով, տէր-հօրից երկու երգեցիկ աշակերտ էր խնդրել հիւրերի առաջ երգելու համար: Ընտրուածներից մէկը ես էի: Խնջոյքը

վերջանալուց յետոյ տան տէրը յիսունական կոպէկ նուիրեց մեզ: «Ջան, Տէր-Աստուած, ասացի մտքումս, ուզիդ իմ ընտրած չայնիկի գինն է»: Մինչև տուն հասնելս և այդ ամբողջ իրիկունը էլ ոչ մի բան չէր գրադեցնում ինձ. միմիայն չայնիկի մասին էի մտածում և ուրախանում այն հեռանկարով՝ թէ ինչպէս էին ուրախանալու մայրս ու քոյրս այդ սիրուն չայնիկը ստանալով: Ինձ համար միանգամայն անհասկանալի էր ընկերոջս տրտունջը, որ իբրև մեր ստացած յիսունական կոպէկը քիչ է. ես գոնէ սրտանց դո՛ւն էի: Դժբաղդաբար ուրախութիւնս երկար չտևեց. ագնուական պարոնի խնջոյքում իմ հօրեղբայրն էլ էր հրաւիրուած, որը իրիկունը վերադառնալուն պէս, ածուխ գնելու պատրուակով, իմ յիսուն կոպէկը պահանջեց: Ի՞նչ ունէի ասելու, տուեցի. տուեցի՝ բայց իմ փայփայած քաղցր յոյսերը մի ակնթարթում խորտակուեցին...:

X գիւղի դպրոցը աւարտելուց յետոյ, ուսուցիչներս բոլորն էր խորհուրդ էին տալիս Թիֆլիզ գնալու, ուսումնս շարունակելու համար: Ինքս էլ բուն ցանկութիւն ունէի ուսման. մանաւանդ որ դասերիցս դուրս թերթել էի մեր ազգային սիրած գրողների գրուածքները, որոնք փոխել էին արդէն իմ մէջ մինչև այդ ժամանակ ղէպի ուսումն ունեցածս զաղափարը: Առաջ հակումն ունէի օֆիցեր կամ շինովնիկ դառնալու. իսկ այժմ ցանկանում էի լինել մեծ բանաստեղծ, հռչակաւոր վիպասան և երեսակայում էի, թէ ինչպէս հասարակութիւնը իմ

երկերը կարգալով կ'հիանար: Այդ ցանկութիւնը շատ խոր արմատներ էր գցել իմ մտտազ սրտի մէջ:

Հետեալէս, երբ դպրոցից հեռանալով մեր գիւղը գնացի, այնտեղ սկսեցի ինքնօգնութեամբ պատրաստուել, որպէս զի հետագայ ուսումնական տարուց կարողանայի ընդունուել Թիֆլիզի միջնակարգ դպրոցներից մէկում: Բայց և այնպէս, մեր կոտրած չայնիկը երբէք մտքիցս չէր հեռանում:

Մեր գիւղում ապրելով, X-ի դպրոցական ընկերներիս և նոյն իսկ դպրոցի ու վարժապետներիս կարօտը բաշտում էի: Չափազանց կարօտել էի մանաւանդ իմ ուսերէնի ուսուցչի ոսկէ մագերով, չալ աչբերով քրոջը, որը հասակակից էր ինձ: Անձկանօք էի յիշում այն երջանիկ րոպէները, երբ դպրոց գնալիս կամ վերադառնալիս, այդ չքնաղ աղջիկը իրանց տան առաջ կանգնած, ժպտը ղէմքին, զրաւիչ հայեացքով նայում էր ինձ... Ի դէպ՝ պատմեմ մի անցք. — սիրահարութեանս մասին ես պատմել էի իմ դասարնկերներից մէկին. սա էլ իր հերթում միւսին և այսպէս, իմ կամքին հակառակ, ամբողջ դասարանը գիտէր իմ զաղտնիքը: Մեր ուսերէնի ուսուցիչը, բերականութեան դասի ժամանակ, երբ մի անգամ առաջարկեց ինձ մի կարճ նախադասութիւն կազմել ու լուծել, ես ասացի. «Я люблю твою сестру». վերջին բառը զեռ բոլորովին չաւարտած՝ ամբողջ դասարանը բռնկեց ծիծաղի փռտկոցով. խեղճ ուսուցիչը մնացել էր շուարած: Վերջը թքեց ու դասարանից դուրս գնաց: Ամաչելուց՝ ուզում էի, որ գետինը պատռուէր, մէջն ընկնէի:


Աշուն էր. հարկաւոր էր մի ելք մտածել ինձ համար: Մայրս այդ նպատակով ծախեց մեր միակ կովը. — միմիայն Թիֆլիզ գնալու ճամփի ծախսերը հոգալու համար. իսկ այնտեղ դիմելու էինք մեր ազգականներին, որ ինձ ուսման տային. — Թիֆլիզում բաւականի աղղականներ ունէինք մենք: Երբ ամեն բան պատրաստ էր, ճանփայ ընկանք. մեզ ուղեկցում էր քեռիս իր ձիով, որին ծանր բեռն էր բարձած: — Կովի զինք մսխելով՝ զաթա — նազուք, իւղ, մեղր, հաւ ու ձու էր իրար զցել մայրս՝ իբրեւ ընծայ մեր ազգականների համար, ուստի մայրս ու ես հերթով էինք ձին հեծնում: Հակառակի պէս եղանակն էլ անձրեային էր. շատ տանջանք կրելով, երկու օրում մի կերպ տեղ հասանք: Առաջին անգամ բազար տեսնելս էր. ուստի երբ Թելէթի սարի կատարից Թիֆլիսը երևաց, դրա տեսքը ապշեցնող ներգործութիւն արաւ ինձ վրա:

Թիֆլիսում մի աւուրի չափ զեզերելով, չաջողուեցաւ ինձ ուսումնարան մտնել. պատճառը, զխաւորապէս, նիւթականի պտկասութիւնն էր: Ազգականներս զանազան պատճառներ մէջ բերելով՝ մերժեցին: Նրանց թուած պատճառներից մէկը, թէ արդեօք քննութիւն կարող եմ տալ, — ինքն ըստ ինքեան բարձուեցաւ մէջ տեղից: Զուգադիպաբար ազգականներիս մէկի տանը, որտեղ մայրս ու ես իջած էինք, մի օր ճաշի էր հրաւիրուած տեղի գիշերօթիկ-

ների զպրոց պահողներից մէկը, որի անունն ինձ հրպել տուեցին: Դպրոցատէր պարտաւրէրութեամբ իմացաւ, որ եկած եմ ուսանելու. ուստի ճաշից անմիջապէս յետոյ, մի քանի գլխաւոր առարկաներից հարցաքննելուց յետոյ յայտնեց, որ իր զպրոցի երկրորդ դասարանում կրնդունէ ինձ: Դրժբազդաբար, ինչպէս ասացի, ամենքն էլ անկարող զտնուեցան իմ ուսման ծախսերը հոգալու:

Այդ միջոցներում զառամեալ Սարգիս եպիսկոպոս Հասան — Ջալալեանը տպրում էր Թիֆլիսի հիւրանոցներից մէկում: Նա պապիս վաղեմի մտերիմ բարեկամն էր ու մօրս էլ լաւ ճանաչում էր. այդ հիման վրա վստահացած, մայրս մի օր ինձ հետը վերցնելով, դիմեց սրբազանին և թախանձանքով խնդրեց, որ նա իր հաշուով ինձ ուսման տայ: Սակայն իմ կոյր բազկից սրբազանն էլ ձեռքերը պատին քսեց — «փողն ուր է, որդի, բոլորը կերան — բամեցին, տեսնում ես ծերացել, հիւանդացել եմ. մինչև անգամ իմ թաղման համար էլ բան չէ մնացել»: Մինչդեռ քսանուեօթը հազար ըուրլի կտակեց ազգին, որպէս զի հարկը տարուց յետոյ մի շարք հայկական դպրոցներ բացուեն իր յիշատակին:

Ուրիշ ոչ մի բարեբարի կամ յոյսի տեղ չ'գիտէինք մենք, մնացել էինք մոլորուած: Ազգականներս երկար ու բարակ խորհրդակցելուց յետոյ, վճռեցին ինձ խանութի աշկերտ տալ. մինչև անգամ մի յայտնի խանութատիրոջ հետ խօսել էին իմ մասին: Բայց այդ պաշտօնը ինձ հափազանց խորթ ու զգուելի էր թվում. ես ամբողջ հույով ու



սրտով միմիայն ուսում առնել էի ցանկանում, ուրիշ ոչինչ: Հակառակ դէպքում գիւղում հողագործ լինելը ինձ աւելի հաճելի էր քան թէ խանութի աշկերտ կամ թէկուզ հարուստ վաճառական լինելը: Մայրս էլ չէր կամենում խանութի աշկերտ տալ ինձ, ուստի Թիֆլիսը թողնելով, վերադարձանք մեր գիւղը:

Քաղաքում եղած միջոցներին, երբ մայրս ու ես այս կամ այն ազգականի մօտ էինք զնալիս լինում, յիշում եմ՝ ինչպէս դէս ու դէն էի նայում ես - գեղեցիկ շինութիւններին, հարուստ խանութներին, զուգուած հասարակութեանը և այլն. բայց իմ բարի և անշահասէր մայրը ոչ մի կողմի վրա չէր նայում, չ'նայելով որ գիւղի կին էր: Ընդհակառակը, երբ անցնելիս էինք լինում այն փողոցով, որտեղ յախճապակեայ անօթեղէնների խանութներն էին, նկատում էի, որ մայրս աչքի տակից հայեացք էր գցում դէպի այդ խանութների ներսը, որտեղ ուրիշ առարկաների հետ գեղեցիկ շայնիկների շարքերն էին դարսած:

V.

Գիւղում իմ առաջին զործն այն եղաւ, որ հօրեղբօրս օգնելով, անտառից փայտ կրեցինք նրա լծկանով, որպէս զի ձմեռը մենք էլ օգտուէինք այդ փայտից: Այնուհետև դէպքից օգուտ քաղելով, — որով-

հետև այդ ձմեռ մեր գիւղում դպրոց պահող չ'կար — ազգականներիս մէկի սենեակում երեսունաչափ տղաներ ժողովեցի ու սկսեցի դասատուութեամբ պարապել: Ե՛հ, փառք Աստուծոյ, վարժապետ էլ դարձայ:

Երեխաներից շատերը մեր ազգականները լինելով, որոնք էլ չքաւոր ծնօղների զաւակներ, դարձեալ եկամուտի աղբիւր չ'ունէի: Ամբողջ ութ ամիս նրանց հետ պարապելով, միայն երկուսից վարձ ստացայ, մէկից մի տալլաթի վերարկու, որը ծածկելով ինքնաբաւական կերպով ուսումնարան էի յաճախում, իսկ միւսից՝ մի բուրլի փող: Այդ բուրլուց ուղեցի վերջապէս իմ ուխտած շայնիկը գնել, բայց մայրս չըյօժարուեց, առարկելով որ աւելի անհրաժեշտ բանի համար է հարկաւոր մսխել:

Մի դէպք, որ սկիզբ դրեց իմ ապագային, այն էր, որ վարժապետ ժամանակս մի օր մի քանի գիւղացիներ ուսումնարան գալով, խնդրեցին, որ հաշտարար դատաւորից եկած ծանուցագրերի վրա ինչ որ ուսերէն մակագրութիւն անեմ: Նոր էի վերջացրել գրելը, որ ուսումնարանի դուռը բացուեց և շեմքում երևաց Ջ. գիւղացի Գ. աւան. նա ամենքիս ողջունելով, նստեց առաջարկածս աթոռի վրա: Գիւղացիները, ի գէպս, աղայից խնդրեցին որ նա ստուգի իմ մակագրածը: Աղան կարգաց ու հաւանութիւն տուեց. ես իմ կողմից գիւղացիներից պակաս չ'ուրախացայ: Գ. աղան նոյն օրն և եթ հօրեղբօրս ասել էր, որ ինձ կ'տանի իր խանութի համար աշկերտ:

Այլևս ուսում առնելու մասին ամենայն յոյսից կտրուած, ես ճարահատեալ համաձայնուեցի: Մահաւանդ որ տասնուհինգ տարեկան հասակս էի մտել ու արդէն հասկանում էի, որ եթէ շուտով մի եկամուտի աղբիւր չ'ունենայինք, մեր ապրելը անհնարին կ'դառնար:

Եւ ամբան մի գեղեցիկ օր, աղայի ընտանիքի հետ միասին, նրանց սալակով ճամփայ ընկանք և նոյն իրիկունքը հասանք Զ. գիւղը:

Սկզբում ես աշկերտ էի Գ. աղայի խանութում. իսկ երկու ամիս չանցած՝ ինձ յանձնուեցաւ գործակատարութեան բարձր պաշտօնը՝ մեծ գործակատարի հեռանալու պատճառով:

Գնալու օրիցս աղան վճռել էր, որ ես դեռ մի ամբողջ տարի ձրի պէտք է ծառայէի, — այս պայմանը մօրս էլ յայտնի էր — սակայն օրքան ուրախացայ, երբ աղան մի օր յայտնեց, որ եթէ կարիք ունենամ, կարող եմ խանութից մասնաւորապէս մտնել ու մատենանում նշանակել, ապագայում հաշուելու պայմանով:


Էլ առանց ժամանակ կորցնելու, իսկոյն մեր խանութից մի լաւ չափնիկ, որը մտքումս շատ վաղուց էի ընտրել, վերցրի ու միւս օրն ևս եթ ուղարկեցի մօրս: Իմ ուրախութեանը էլ չափ ու սահման չ'կար. թուում էր թէ ամբողջ աշխարհը ինձ են բաշխել: Ծածուկ տեղերը մի — մին էլ պար էի գալի ուրախութիւնիցս:

Սակայն պար դալը հարամ եղաւ զլխիս, երբ մի բանի օրից յետոյ ետ ստացայ չափնիկը և մօրիցս

հետեւեալ բովանդակութեամբ մի նամակ.

«Սիրելի օրդի, բո ուղարկած չափնիկը ստացայ. բայց զբարբերիս ձեռքով ետ եմ դարձնում. զարմանում եմ թէ սրտեղից ես դու այդ չափնիկը ուղարկել, բանի որ ռոճիկ չես ստանում:

«Ինչպէս երևում է, սատանան տամարդ է մտել, ջահելութիւն ես արել, օրդի. բայց ես քեզանից այդպիսի բան չէի սպասում. իմացած եղիք, որ ինձ գողանովի բանը հարկաւոր չէ: Քեզ հօ շատ եմ ապել ու հիմայ էլ ասում եմ, որ եթէ ուրիշ անգամ էլ մտքովդ զբաւնան մի բան անցնելու լինի, քաւափիցը վայր կ'ընկնեմ կ'մեռնեմ: Ուրեմն, օրդի, այս չափնիկը ինչպէս վերցրել ես, այնպէս էլ ետ տեղը դիր»:



ՔԵԱՆԴԻՈՒԴԱ ԱԹԻՆ

I.

Դեկտեմբերի կիրակի օրերից մէկն էր: Զինական դատաւորները, տանուտէրը, գրագիրը և սրանցից միշտ անբաժան բեանդխուղա Աթին ղեռ վաղ առաւօտուց հաւաքուել էին գիւղի ուսումնարանի շինութիւնը, որը ծառայում էր նաև դատարանի տեղ:

Նրանց գալուց բաւական ժամանակ էր անցել. բայց գիւղացիներից ոչ ոք չէր երևում, որովհետեւ ղեռ կանուխ էր և ցուրտ:

—Ա՛յ տղէք, դուք ըսկի մինդ էլա կարալ չէք ապրիլ, բա ես գլաւին ըլիմ եա սուղիա, ու օրն էս չախը անարադ խմիլ դողացնեմ,—ԱՆՆԱՆ զեօթուրո՞ւր (Աստուած կըվերցնի),—այս խօսքերով ընդհատեց լուրթիւնը բեանդխուղա Աթին:

—Ի՞նչ անենք, բեանդխուղա Երևութին, խու գիտես որ մենք հալա խամ ենք. համա դուն հին մարդ ես, համ էլ գիւղի բեանդխուղա, զայդենին լաւ գիտես, սովորցրո՛ւ մենք էլ անենք:

—Բու զեօգըմ ուստա (այս աչքիս վրա): Հալա էն անցկենող կիրակի օրն էր, որ Մանվէլանց որբըվերին, իր տղի կոնիցը բռնած՝ կանցալարի դռանը եսրի պէս կանգնած, ձեր ճամփէն էր պահում. ասի՝ անչի Սառան, ըստի ինչ ես շինում, թէ՛ «Բա, ախպէր ջան, էն Նալբանդանց Մխիթար շան տղէն, երեկ շէմքս կտրած, ուշունց տալէն ինձ խայտառակ արաւ սաղ գեղի միջին, գիտեմ ոչ մանին ինչ ա: Աստծու խաթեր, մի պատիժ արէք որ էլ համարձակուի ոչ: Տեսնում ա որ մի անտէր կնիկարմատ եմ, ոչ վախում ա, ոչ ամաշում»: Ես էլ ումուղ տուի, ասի գլաւին կասեմ՝ նրա աչքը կըհանի: Հմիկ գզրին ղրկեցէք թող Մխիթարին կանչի ու մի լաւ սաստեցէք, ես էլ իմ զայդի մէջ կընկնեմ, բանը կըսարբեմ:

Այդպէս էլ եղաւ. շուտով Մխիթարը դատարան մտաւ գզիր Մակարի առաջնորդութեամբ:

—Աղա Մխիթար, էն Մանվէլանց որբըվերուն խի ես ուշունց տուել, որ խեղճը լաց ըլելով գանգատ էր եկել:

—Դլաւին ջան, բա նա խի ա պուճուր ախպօրս ծեծում:

—Սո՛ւս, ախմախ, ինչ կուղէ լի, կնիկարմատին ուշունց տալու իրաւունք չըկայ: Մակար, տար տուն գզի սրան (բանտարկիր):

Մինչ գզիրը Մխիթարի թեկից բռնած դուրս էր քարշում նրան դէպի նախասենեակը, բեանդխուղա Աթին էլ հետեց նրանց և նախասենեակում գզրի ձեռքից Մխիթարին իրրեւ թէ զօրով խլելով, վերջի-

նիս յորդորեց, որ գնայ արադ և փոքր ինչ էլ «նհար» անելու բան բերի:

Շատ չանցած, Մխիթարը գլուխը կորացրած, բեղի տակին ծիծաղելով վերադարձաւ և սեղանի վրա դրեց մի կեղտոտ թաշկինակում կապած բոխ ու հաց և մի մեծ շիշ էլ-օղի:

— Բեանդխուդա Արուծին, էս բու բաներն ա հա՛մ, — միաբերան ասացին տանուտէրն ու դատաւորները, իրանց խիստ նեղացած ձեացնելով:

— Բան չկայ, գլուխն ջան, սուղիէք ջան, ջահէլ ա, սխալուել ա, էլ անիլ չի. ըու աղ սահկալըմա քաղըշլէյին (այս սպիտակ մորուքիս խնայեցէք):

Եւ Մխիթարն ազատ թողնուեցաւ:

Նախաճաշիկը վերջացնելուց յետոյ, Ածին ու տանուտէրը միմեանց նշանացի հասկացնելով, առանձնացան միւս սենեակը:

— Մուկնչ քեօխվա, մի լաւ կթի կով եմ գտել, Մանվէլանց որբըվերու վրա խօսացինք՝ միտս ընկաւ:

— Ո՞վ ա, բեանդխուդա Արուծին:

— Թազա Մկրտիչը (նախկին մահմեդական, որը հայադաւանութիւն է ընդունած) ասում ա՝ Մանվէլանց որբըվերուն ինձ տուէք, տասը թուման կը տամ:

— Ըժու որ որբըվերին մարդ չի անում:

— Վաէէ, բու տունն Աստոծ շինի, նրան մտիկ տուողն ո՞վ ա. տասը թումանը կառնենք ու հրէն տէր-Սարգիսն ընդի չի, էգ թաւուր բանի խաթեր երկու շահին ձեռին՝ զոնչաք ա անում, երկու թուման իրան կըտանք՝ կըպսակի:

— Բանը պսակիլը չի, ախրը ասում են որբըվերին լաց ա ըլում, իրան սպանըմ ա ու մարդ չի ուզում, — ասում ա՝ «ես ո՞նց իմ քօրվէնուն (փոքրիկներին) չոլն անեմ. համ էլ, ասում ա, ուզեմ ուզեմ էն էլ քօփակ թուրքին ուզեմ, որ տենելիս ջանս զարգանդում ա»:

— Մուկուչ քեօխվա, էգ խելքովը դուն հաց չես ուտիլ: Տօ, նրա կամքովն ա: Տեղը կնեղեմ, խարջը կ'ուզեմ, կասեմ կու ու բէգեանդ քաշի, վարելահողերը ձեռիցը կըխլեմ, կըտամ թազա Մկրտչին. եասաուլ, զազախ եկած վախտը, կըտանեմ նրա տանը կըտամ: Ինքը մենակ կնիկ՝ էնա կըզգուի ու թուրքի չէ, որ շան էլ տանք՝ կուզի, էլի:

— Դէ լաւ, լաւ, բեանդխուդա Արուծին, զափիլ սուղիէքը կիմանան. էնա գլուխ կըբերենք, էլ խօսալ չի ուզիլ:

II.

Տանուտէրն ու Ածին նոր էին վերադարձել դատարան, որ ներս մտաւ Բիթիկանց Սարոն՝ ձեռքին բռնած կէս թերթ գրելու թուղթ և «բարի օր» ասելուց յետոյ աւելացրեց.

— Դլաւին ջան, ախպերս քաղկիցը գրել ա բիլէթ ա ուզել, խնդրում եմ, որ բիլէթ տար:

— Ըժու նրա փայ խարջը թամամ տուել ես, որ բիլէթ ես ուզում:

— Հրաման քի, գլաւին ջան, ո՞նց չեմ տուել:

— Գիգոյ, հալա դաւթարին մտիկ տո՛ւ, տես Սարոն խարջը թամամ տուել ա՛:

Գրագիր Գիգոյը շինական դատարանի վճռագիրքը թերթելով, գտաւ որ իբրեւ թէ Սարոյի վրա մի ըուչուխ մնում է խարջիցը:

— Աստոճ, երկինք, գլաւին ջան, թամամ տուել եմ. բալբի դարուզնին (հարկահաւարները) նամարդութիւն են արել, գիտեմ ոչ:

— Ո՞նց կլի, Սարո, աշխարհը խու հալա-հալա չի. չիմ հետաքով ա, դուզի ջան, դաւթարը խու սուտ չի խօսալ: Թէ ունես ոչ, սուղեա-գլաւնին դանչանք արա՛, որ հմիկ բիւթը տան ու պարտըզ ըժու առնուն:

— Լաւ ես ասում, բեանդխուզա՛ ջան: Դէ դուք էլ էք գեղըցի, խու գիտէք, որ էս ձմեռ ժամանակը գեղըցու ձեռին փարա չի լիլ: Բիւթը տուէք, ըժու իմ պարտըզ կըտամ, ի՞նչ պտեմ ասիլ,— յակամայից յօժարեցաւ Սարոն:

— Գլաւին, ես Սարոյի տեղակ գամուն (երաշխաւոր) եմ ըլում, որ նա իր խարջի դախկէն (ведомка — ապառիկ) մին էլ խարջը հաւարելիս կըտայ—միայն հմի խնդրում եմ, որ մարդի բիւթը տար:

— Լաւ ես ասում, բեանդխուզա Սրութին, համա փեշատը ընչո՞վ թաց անենք. առանց թաց անելու թուղթը փեշատուիլ չի:

Ինչպէս բոլոր գիւղացիք, նմանապէս և Սարոն լաւ էր հասկանում այս խօսքերի իմաստը. ուստի

թուղթը գրագրին տալով, ինքը գնաց «թաց-անիչ» բերելու: Նրան հետեց Աթին և դուրսն ասաց, որ օդի չրբերի, այլ մի կէս թունդի լաւ գինի բերի:

Սարոն չկարողացաւ գինի՛ ճարել, որովհետեւ ձեռքին կոպէկ չունէր. գիւղի կրպակներում նրան ապառիկ չտուեցին, իսկ տներում էլ գինի չկար, ուստի մի փոքրիկ շիշով օդի բերեց: Սակայն օդին չընդունեցին, յետ դարձրին:

Վերջապէս թրով էր թէ մրով, գինին ստացուեց, անցաթուղթը գրուեց, կնքուեց, բայց Սարոյին չը յանձնուեց:

— Սարիբէզ,— ասաց գրագիր Գիգոյը, անցաթուղթը իր գրպանը դնելով,— իրիկունը կըգաս մեր տուն և բիւթը կըստանաս:

— Խի՛ չես հմի տալի որ:

— Բա՛ իմ ջափահախը՞ (վարձատրութիւնը):

— Զափահախը ո՞րն ա:

— Էն ա որ նշանածիդ կասես, մի լաւ չաղ հաւ կըբռնի, կըբերես մեր տուն ու բիւթը կըստանաս:

— Տիրացու Գիգոյ, համ տարէնը եռսուն թուման հախ ես առնում էս գեղիցը, հացի փող չես տալի, փէտի փող չես տալի, համ էլ երկու ջերգա՛ գիր գրելու համար մի հաւ ես ուզում:

— Ա՛դա, ի՞նչ ես յիմարի պէս գլխիցդ դուրս տալի. հախը որ առնում ա, էն վճիռները գրելու մասին ա. բու հօրը ի՞նչ ա պարտական պիտըր, որ միւլփտա՛ գրի,— գրագրի փոխարէն պատասխանեց Աթին:

Սարոն ուզեց ինչ որ ասի, բայց խօսելու տեղ տնրաց... ու դատարկաձեռն դուրս գնաց:

III.

—Տղէրք, ես ռնց որ տենում եմ ըսօր կարալ չպտենը ձեռներուս մի կարգին տաքացնիլ, չիմ ծռտի-պռտի գանգատաւորնի են գալի:

—Քէփղ քեօք պահի, քեանգխուղա Արութին, գշերս դամաթի երազ եմ տեսել, ըսօր անպատճառ մի բան կ'լի,—այնպիսի վճռական եղանակով արտասանեց տանուտէրը, որ կարծես հաստատապէս մի բանից տեղեկութիւն ունէր:

Այնուհետեւ գիւղացիք երկար սղասել չտուեցին դատաւորներին. մէկը միւսի ետեից ներս գալով, լցրին ուսումնարանի շինութիւնը:

Նրանցից, որոնք աշակերտական նստարանների վրա շարուած, որոնք յատակի վրա ծալապատիկ նստած, որոնք էլ կանգնած իրանց գանգատներն էին ասում: Իսկ դատաւորները մի առանձին սեղանի շուրջը բոլորած, գիւղացիների գանգատները, ցուցմունքներն ու բացատրութիւնները լսելուց յետոյ առանձնանում էին ուսուցչի սենեակը՝ խորհուրդ կայացնելու. ապա դուրս գալով, զրազրին վճիռների գրելն էին թելադրում:

Ամենավերջին գանգատաւորը Ասրոնց Կարապետն էր:

Սա միջին տարիքով մի միջահասակ մարդ էր. նրա չալած բեղերը ծխախոտից՝ հինայի գոյն էին ստացել: Գլուխը փաթաթած ունէր մի փալտսի կտորով, որ ինչ գոյն լինելն անկարելի էր որոշել:

մեռելագոյն գէմբի վրա երևում էին արեան հետքեր: Հագի չուխան կասես զգզած լինէր. բաճկոնանման մի բան կար հագին, որի ըղանցներն էին միայն երևում փորի վրա թառ տուած. իսկ շապիկ՝ Աստուած տար. նրա թաւոտ մերկ կուրծքը դարեւոր կաղնու գոյն էր ստացած:

Ներս մտնելով, կանգ առաւ նա դատաւորների առաջ փիզը ծռած, ինչպէս ինքը ողորմելիութիւնը նկատելի էր որ աշխատում էր խօսել, բայց քերանը բաց չէր լինում:

—Շը, գէ ասա, էլ ինչ ես մնջի պէս կանգնել, —գոչեց դատաւորներից մէկը:

Բայց Կարապետի բերանից խօսք դուրս գալու փոխարէն, աչքերից արտասուքի կաթիլներ զլորուեցին այտերի վրայով:

Անտարբեր ամբոխը բուռն ծիծաղով ծաղրեց: «Տնաշէն, հէնց լաց ա ըլում, ռնց որ որդուն աղաբին մորթած ըլեն» — միաժամանակ լսուեցան մի քանի ձայներ ամբոխի միջից:

—Տօ, ձեր տունն Աստոծ շինի, բա որդուս մորթել չեն ինչ ա. էն Ասծու կրակի եկած Քոշին, էն գողը, էն մարդասպանը, զեռ հերու ամառ հարսիս գիրքը (արծաթեայ զարդեր) գողացաւ, մարսեց. էս սաղ ձմեռն էլ ոչխարներիս տակոին կտրեց. ալայ-մալայ քսանն ունէի, վեցը լափեց, տունս քանդեց. անջաղ մէկէլ օրը մի լաւ ոչխարս մորթելիս վրա հասայ, էն էլ տուր թէ կըրտաս — գլխիս տուեց, թոյ արաւ ու լէշն առաւ, կորաւ:

Ամբոխի միջից դարձեալ բրբիջ բարձրացաւ:

— Ովվէ, համա անսիրտ խալիս էք հա՛: Տօ՛, ձեր տունն Աստոծ շինի, ըստի դարդիցը իմ մեռնիլը գալիս ա, դուք հլէ ծիծաղում էք:

Այս անգամ արդէն դատաւորներն էլ ծիծաղեցին:

— Վկայ ճնես. — հարցրեց դատաւորներից մէկը:

— Մի վկէն հրէս էս ա, որ լէշը ձգձգելիս, պա՛ճիճս արնոտ էլաւ. ոտը դէպի դատաւորները մեկնելով պատասխանեց Կարապետը, — մին էլ ձէնիս վրա Չատին իրանց գոմիցը դուրս եկաւ, ետնուց տեհաւ, որ էն տնրանդը մորթած ոչխարն ուսին՝ ջուրն ի վեր փախչում ա:

Դատաւորները Կարապետին արձակելով, ասացին որ հետեեալ կիրակի օրը նրա գործը կըքննեն: Կարապետի յետեից Աթին էլ դուրս գնաց ու նրան մի կողմի վրա բարշելով, ականջումը ինչ որ փսփսաց:

— Դրուստ ա, քեանդխուղա ջան, «դարդակ փետին շուն չի հաջիլ», համա ես քեասիք մարդ եմ, փողն ինձ ո՞վ ա տուել, որ սուղեա-գլաւնին կաշառք տամ: Դէ ինչ անեմ, որ ասում ես՝ ըեխանցս բողաղիցը կըկտրեմ, մի թոխլի կըմորթեմ. դուն էլ, սուղեա-գլաւինն էլ զրադրին վեր կալէք էգուց ըիկու եկէք կերէք ու Ասծու խաթեր էդ շանիցը մի բան պոկեցէք, ես էլ մեղք եմ, հրէ ըեխէքս սոված տուն արած են, ոչ տաշտումը հաց կայ, ոչ ջուլալումը ալիը, սիկկա (ղրամ) էլ խու ջիլիգ Աստոծ տայ:

— Լաւ, լաւ, արխէին կաց, Կարապետ, միայն թոխլին ձորիցը բեր, որ էգուց անպատճառ մորթես:

IV.

Երբ բոլոր զիւղացիք ցրուեցին և դատաւորները, տանուտէրն ու Աթին մնացին միայնակ, վերջինիս խորհրդով զգրին ուղարկեցին Քոչարին կանչելու:

Քոչարը յայտնուեց:

— Տօ՛ հարամդաղա, բա հէրիք չէլաւ, որ դուն էս սաղ գեղը բանդեցիր, բա ամաչում չես, բա գետինը չես մտնում, որ էն Ասրոնց քեասիք Կարապետի ոչխարնին գողանում ես լափում: Հմի ո՞նց ես, որ Սիբիլը դէսը թողուլ տամ:

— Ի՛նչ Կարապետ, ինչ ոչխար, գլաւին ջան. Աստոծ, երկինք, ծով, ցամաք, ես հէջ բանից խաբար չեմ:

— Դէ, մէկել կիրակի օրը մաշուր կըլի, էլի: Դուն գեղիցս չհեռանաս, թէ չէ հարիւր մանէթ ըշտորափ կանոնեմ:

Քոչարը յոնքերը կիտած դուրս ելաւ, բայց նախասենեակում կանգնացրեց նրան Աթին և դունչ դնչի դրած սկսեցին խօսել:

— Քոչար, բանդ շատ ա խարաբ հա՛: Համա ոնց որ իս ա աշխատիլ պտեմ, որ բալբա ազատեմ, թէ չէ դրուստ որ Սիբիլի հոտ ա փչում: Ի՛նչ անեմ, օղուլ (որդեակ), բու ողորմածահողի հէրն ու ես հալալ ախպօրից առաւել էինք սիրում իրար:

— Զնորհակալ եմ, քեանդխուղա ջան: Համա Կարապետը ընչո՞վ ա հաստատում, որ ես նրա ոչխարը գողացել եմ:

— 2ատին վկայութիւն ա տալի:

— Ը՛հ, ես նրա է է՛ 2ատի... Մի էնթաւուր ա՛ն նշանց տամ, որ լեզուն փորն ընկնի:

— Ա՛ղա, դուն ա՛ն նշանց կըտաս, համա ինձ պէս մինն էլ սիրտ կըտալ:

Աթնի այս խօսքերի վրա Քոչարը ծոծրակը քորեց:

— Հազիր մըհէնց բան անենք, որ նա՛ շիշ եանսըն, նա՛ քիաքա՛ք (ոչ խորովածն այրուի, ոչ շամփուրը), — շարունակեց Աթին. — մայլինձ գլախնն էլ խու տեհար ո՞նց բարկացաւ:

— Բա ինչ անեմ, քեանդխուղա ջան, — արդէն յուսահատուած հարցրեց Քոչարը:

— Ինչ պտիս անիլ, էն ա ըրկունս մի լաւ ոչխար կըմորթես, լաւ գինի-արաղ կըճարես ու հինգ թուման էլ փող կըհազրես, որ սուղիա-գլանի ու պիսրի ըռեխը ցխենք. ես էլ նրանց վեր կունեմ ու մթանը կըզանք ձեր տուն:

— 2իմ լաւ, համա հինգ թումանը ես ո՞րդիան ճարեմ, քեանդխուղա ջան: Ելլըհէ մի տասնըհինգ — քսան մանէթ ոնց որ ըլի իրար կանեմ:

— 2է՛, ինչ ես ասում, էդ ջիլիզ բիշ ա: Գնա՛ տես, բալքամ աւել ճարես: Ես էլ չալիշ կըզամ, մըխելի քշով եօլա ետնեմ: Էն ա կիրակի օրը Կարապետին ասկազ կանենք, կըպըծնի: Թէ չէ որ էս մի գործը վրէպ հաստատուի՝ գեղումս ինչդաղա գողութիւն ա պատահել, չիմ բիրադի բիանից կառնուն:


Քոչարը ուրախ-ուրախ հեռացաւ ընթրիքի պատրաստութիւն տեսնելու, իսկ Կարապետը մտախոհ ու տխուր դէմքով քայլերն ուղղեց ձորը, որ թոխլէն բերի:

Յետոյ լսեցի, որ քեանդխուղա Աթին ու տանուտէր Մուկուշը իրանց ծրագրած միջոցներով Մանվէլանց այրիին զօրով պսակել էին տուել Թազա Մկրտչի հետ, ականջ չգնելով թշուառ կնոջ լաց ու շիւանին:

Բիթիկանց Սարոն էլ գրազիր Գիգուին մի հաւընծայ տանելուց յետոյ միայն՝ ստացել էր իւր եղբոր անցաթուղթը:

Իսկ Ասրոնց Կարապետի բողոքը մերժել էին շինական դատաւորները, վաղօրօք խեղճ մարդի թոխլու միսը վայելելով:

Ասում էին, որ Քոչարի տուած ընթրիքն աւելի ճոխ էր եղած ու կաշառաղրամն էլ վերնադիր, որով և գողը՝ արդար էր ճանաչուած:



ԳԻՒՂԻ ԱՅՐԻՆ

I.

Շողերը դեռ երեսուն տարեկան մի առույգ հարսն էր, որ նրա ամուսին Ղազարը վախճանուեց։

Այդ ժամանակ նրանք ունէին երկու տղայ և մի աղջիկ։—Սաբոն տասնուհինգ տարեկան էր, Հերիբ-նազը տասը, իսկ փոքրիկ տղան դեռ ծծկեր երե-խայ էր։

Իր ամուսնու մահից յետոյ, Շողերը Սաբոյին տուեց գիւղի հարուստ օջախներէից մէկում ծառայ-ուիթեան, վարելահողերն էլ յանձնեց իր ամուսնու միակ ազգական աղբատ Մաղոյին, որ նա վարի, ցա-նի ու իրան էլ մասը տայ։

Շողերը գիւղում ուրիշ ոչ մի ազգական, ոչ մի տէր ու տիրական չունէր։ Նրա ծնողները վաղուց էին վախճանուած, իսկ եղբայրները, չկարողանալով տանել տանուտէրների, քեանդիսուգաների ճնշումը, զաղթել էին մի ուրիշ հեռու գիւղ։

Մենակ էր Շողերը իր փոքրիկների հետ չորս պատի մէջ։ Ամսական միմիայն մի անգամ, շաբաթ

իրիկունները, Սաբոն էր գալիս և ամբողջ գիշերը մտում էր իրանց տանը, շորերը թափել տալու և կարկատնելու համար։

Մէկ էլ Շողերի հարևանուհի տատմէր Մաթոն էր երբեմն-երբեմն գալիս և իր քաղցր զրոյցներով մխիթարում Շողերի դարդոտ սիրտը։

Շողերի միակ մխիթարանքը տատմէր Մաթոն էր։ Երբ տատմէր Մաթոն գալիս էր, Շողերը բաւա-կան ուրախ ու զուարթ էր լինում։ Իսկ մենակ մնա-ցած ժամանակ՝ ցածր ձայնով երգում էր, դունդու-նացնում և շատ անգամ էլ զաղտուկ լալիս։ Փոքրիկ Հերիբնազը գլխի էր ընկել այդ բանը։ Երբ նկատում էր, որ մայրը դունդունացնում է, իսկոյն մօրիցը ծածուկ վազում էր տատմէր Մաթոյի մօտ ու ստի-պում էր, որ վայ իր նանի հետ զրոյց անի։

Մի օր տատմէր Մաթոն Շողերի մօտ գալիս, նրա երգելու ձայնն ակսնջն ընկաւ. նա շեմքում կանգնեց։ Շողերի ձայնն այնքան քաղցր ու դուրալի էր, իսկ երգի հղանակն այնպէս մեղամաղձիկ, որ տատմէր Մաթոն մինչև անգամ արտասուեց։

Բայց նրան ճանաչողներէից ոչ որ չէր հաւատալ, թէ տատմէր Մաթոյի աչքերից կարող էր արտասուր հոսել։

Եւ Շողերը ջահրա էր մանում ու հետն էլ խո-րին զգացմունքով երգում։

Ուռի ծառին բար չի լիւ,

Առանց սէրի եար չի լիւ.

Սիրտը որ կայ շուշա մ,

Կոտրած սրտին ճար չի լիւ։

— Բարի օր քի, ա՛յ աղջի, էդ ի՞նչ անուշ ձէնունես:

— Բարու տէր ըլես, քի արբայութիւն, Մարթադ նանի,— աչքերը սրբելով պատասխանեց Շողերը:

— Ա՛ղջի, էդ մանածն ո՞ւմն ա, ո՞նց ես մանում:

— Ըրիցանցն ա, նանի ջան, գրուանքէն մի աբասով եմ մանում:

— Ա՛րու տունը Աստոծ շինի, էդ խու սիրտդ կըմաշի, էդ թաուր բարակ մանածը ըթենց էժան ո՞նց ես մանում: Զատ մանես՝ շաբթէնը երկու գըրուանքա:

— Ի՞նչ անեմ, նանի ջան, որ աւել տալիս չեն, խու կարալ չեմ՝ ըբխանցս սոված կոտորել:

— Ամառն էլա որ ըլի, գըսի լիսումը մանես, րան չկայ. մի խճուլակ (նեղլիկ) տուն ունիս գետնումը թաղուած, մի պուճուր երդիկ ունի, որ Ասծու անխնայ լիսն էլ չի տուն մտնում. էս խաւարի միջին խու աչքերդ կըբոռանան:

Շողերն ուսերը վեր քաշեց:

Այսպէս՝ ցերեկները սրա նրա համար վարձով ջահրա էր մանում Շողերը, իսկ երեկոները բուխարու օջախաքարի մօտ նստած, ձիթի ճրագի լոյսով գուլպա էր գործում կամ երեսաների շորերը կարկատնում:

Զմեռ էր:

Գիշերներով բամու ոռնոցը երբեմն այնպիսի անեղ հնչիւններ էր հանում ու ձիւնի սառը թողը փակած դռան բացուածքներից ներս թափում, որ հերիքնազը սարսափահար կաշում էր մօր կրծքին:

Գիւղի երիտասարդներից Ըողերի վրա աչք ու-

նեցող շատերը կային, բայց նա անտարբեր էր դէպի նրանց:

Մի գիշեր, երբ երեսաներն արդէն քնած էին, իսկ Ըողերը մենակ նստած կարում էր, յանկարծ երդկից հող թափուեց ներս. նա դէպի վեր նայելով նկատեց, որ չորս պսպղուն աչքեր երդկից նայում են: Առանց շփոթուելու, օջախից մի այրուող ածխակոթ վերցնելն ու դէպի երդիկը նետելը մէկ արեց: Նայողները շունչները կտրած յետ փախան:

Ըողերը վախկոտներից չէր:

II.

Մի տարի գիւղում մի նորութիւն երևան եկաւ: — Թիֆլիսեցի Ծղալորի տղայ Դարչոն մանուֆակտուրի խանութ էր բացել: Աղբիւրում ժողովուած հարս ու աղջկայ խօսակցութեան առարկան Դարչոյի խանութի «ալփան-ալփան» չթերն ու վարթ-մանուշակից սիրուն բաղդադիքն էին:

Դարչոն մի լաւ եօրդա ձի էր պահում, որին հեծած իրիկուն-առաւօտ ինքն էր տանում աղբիւրը ջրելու, շրնայելով որ նոյն գիւղացի մի ծառայ ունէր:

Հարսն ու աղջիկ հետաքրքրութեամբ էին նայում նրան, որովհետեւ «ալփան-ալփան» չթեր էր ծախում նա: Դարչոն կարծում էր, թէ իր անձնաւորութիւնն է գրաւում նրանց ուշադրութիւնը. ուստի այդ հանգամանքը շոյում էր նրա ինքնասիրութիւնը:

Դարչոն իր արտաքինի վրա մեծ համարում ունէր։ Նա հազնում էր սև մահուկից շուխա, կապոյտ ատլասից արխալուզ, վրայից կապած ոսկեջրած արծաթեայ գօտի, մեխակի գոյն մահուկից լայն շալվար, խարազի կարած մահմուղաւոր չէքմէք և գլխին կրում էր Բուխարայի սև մորթուց «գաբիբալի», որը դէպի աջակողմեան քներակը թեքն էր ծածկում։

Աղբիւրի ճանապարհը ձողերի դռնովն էր տանում, այնպէս որ Դարչոն շատ անգամ ձին ջուրը տանելիս՝ տեսնում էր ձողերին։ Ինչպէս որ աղբիւրում ժողովուած հարսն ու աղջիկ նրա վրա միշտ նայում էին, ձողերը երբէք չէր նայում։ Դարչոն սրտով ցանկանում էր, որ ձողերի հայեացքը մի տեսնէր, բայց երկար ժամանակ այդ նրան չէր աջողւում։ Երբ պատահմամբ մի անգամ ձողերի հայեացքը հանդիպեց նրա հայեացքին, Դարչոյի սիրտը դողաց, ինչպէս ուռննու տերեր քամու հոսանքաւոր սոսափիւնից։ «Ա՛խ, նա խօսի իսան չէ, հրիշտակ է, հրիշտակ էս նրա հոգուն մեռնիմ», — մտմտում էր Դարչոն ձողերի վրա մտածելիս։

Ինչպէս ասում են, Դարչոյի սիրտն ընկել էր Շողերի վրա։ Նրա մտքումն արդէն տպուել էր ձողերին տիրապետելու բուռն ցանկութիւնը։ Եւ մեծակ ժամանակ մտորելիս, նրան թւում էր թէ ձողերն էլ իր վրա աչք ունի։— Եթէ այդպէս չլինէր, հապա ինչո՞ւ շատ անգամ դուրսն է լինում նա, երբ ինքը ձին ջուրն է տանում, այսպէս էր մտածում Դարչոն։

Սակայն ամեն անգամ ձողերին հանդիպելիս, մի

զաղտնի զգացմունք խիստ երկիւղ էր ազդում Դարչոյին։ Նա զգում էր, որ շատ դժուար է նպատակին հասնելը։

Երբ Թիֆլիսում մտադրուել էր նա, որ գիւղում խանութ բանայ փող վաստակելու համար, դրա հետ միաժամանակ և այն միտքն էր յղացել նրա մէջ, որ շատ հեշտութեամբ կը վաստակի նաև գեղջկուհիներին սրտերը։ Ահա գեղջկուհին կար, բայց հեշտ չէր նրա սրտի գրաւելը։ Այդ շատ էր վրդովում նրան։ Նա շատ էր մտածում այդ մասին, բայց մի ելք չէր գտնում։

Որովհետև գիւղերում նորատի կանանց համար ամօթ է համարւում խանութ գնալը, այդ պատճառով նրանց հարկաւոր յայտնի իրերը տան տղամարդիկն են գնում, իսկ զաղտնի իրերը գիւղի պառաւ կանայք։

ձողերենց թաղի ջահել կանանց առուտուրը տատմէր Մաթոն էր կատարում։ Կանայք հօ կանխիկ փող չունէին. նրանք տան մեծերից ծածուկ՝ հաւ, ձու, իւղ, պանիր, բուրդ, գարի ու ցորեն էին տալիս։ Այդպիսով խանութպաններն իրանց փութած ապրանքի եռապատիկ և բառապատիկ գներն էին ստանում։

Այս առիթով Դարչոն շատ մօտիկ ծանօթացել էր տատմէր Մաթոյի հետ։ Նրանից միշտ տեղեկութիւններ էր հարցնում ձողերի մասին, բայց այնպիսի ձևով, որ նա իր միտքը չհասկանար։

— Ի՞նչ անիմ, — երբեմն ինքն իրան մտածում էր Դարչոն. — թէ տատմէր Մաթոյին «մարճակալ» (միջ-

նորդ) եմ զրգում ձողերի մօտ... էգէբա մի բան շի-
նի... Համա վայ թու բանը գլուխ չգայ ու մուշտա-
րիբս իմանան, դուքնեմէս վուտը կտրին:

Մի օր էլ, երբ տատմէր Մաթոն նրա խանութից առուտուր էր անում, Դարչոն մի փոքրիկ գլխի աղուխ տուեց ու ասաց:

— Մաթա՛ղ նանի, էս աղուխը տո՛ւ ձողերին, թող իրա աղջկայ գլխին գցի, վուրը էրէխայ է:

ձողերը մերենաբար աղուխն ընդունեց: Բայց տատմէր Մաթոյի հեռանալուց յետոյ, ընկաւ խորին մտատանջութեան մէջ: Մէկ էլ յանկարծ ցնցուեց ու աղուխը հերիքնազին տալով ասաց:

— Ա՛ղջի, էդ աղուխը տար էն քաղբցի դուքանչուն տուր ու շուտ ետ դառ. թէ բան հարցնի՝ — ասա՛ գիտեմ ոչ:

Հերիքնազը հագիւ էր մի բանի քայլ հեռացել, որ ձողերը նորից ետ կանչեց ու աղուխը ձեռքիցն առաւ: Միւս օրը թաղի բոլոր երեսաները հաւաքուել էին Հերիքնազի շուրջը և հիացմունքով դիտում էին նրա գլխի նոր աղուխը:

ձողերը թէև աղուխն ընդունելու մասին դեռ մտմտում էր ու փոշմանում, բայց յամենայն դէպս, պարտքի տակ մնալ չկամենալով, միւս օրն և եթ մի լաւ վառիկ բռնեց ու հերիքնազի ձեռքով ուղարկեց Դարչոյի խանութը:

Դարչոն ուրախութիւնից իրան կորցրեց, որովհետեւ մինչև այդ ժամանակ վախենում էր, որ Շողերն աղուխն ետ կըդարձնի:

— Իս խօմ հախով չիմ տուի աղուխը, բու դէ-

դէն ինչի համա է էս վառիկը զրգի, — ասաց նա ու հերիքնազի գոգնոցի փեշը բիշմիշով 'լցնելով' ճանպուղը:

Նոյն ըոպէին չիբուխը փստացնելով, խիտ յօնքերի տակից՝ ներքեից վերև նայելով, ներս մտաւ քեանդխուղա Աթին, ասես գետնի տակից բուսաւ:

— Օհօ, լաւ բանի վրա ես, մեր տղա. համա է՛, դուզի ջան, Շողերը էն ծառը չի, որ բու բերանը կթխա (պտուղ) գցի:

— Աստու՛ձ գիղենայ, բեթխուղա ջան, վուր իմ մտքումը իրմին հարամզադութիւն չկայ. դէ վուրը էրէխայ է, մէ բիշ բիշմիշ տուեցի:

— Լաւ, լաւ, ինձ Աթի կասեն. որ գետնի տակին կորկոթ ըլին եփելիս, իմացած կացիր, որ աղ գցողը Աթին ա:

— Թէ որ մտքումդ բան կայ, — չալած մի՛րուրը շոյելով շարունակեց նա, — էլի էս դոջա Աթին կարող ա բան գլուխ բերել: — Եւ յօնքերը կիտելով գլուխը պտտելով աւելացրեց. — Համա չո՛խ չաթին իշդը (բայց շատ դժուարին գործ է:)

Ներս մտան ուրիշ գիւղացիներ. Դարչոյի ու Աթնի խօսակցութիւնն ընդհատուեց:

Դարչոն խորին մտատանջութեան մէջ ընկաւ: Մէկ ուզում էր իր գաղտնիքն Աթնին յայտնել, բայց կրկին ու կրկին տատանւում էր:

Յետոյ իր մէջ մի ինչ-որ վճիռ կայացնելով, միտքը փոխեց, որ գոնէ առ այժմ Աթնին ոչինչ չյայտնի: Ո՛վ գիտի, գուցէ բանն առանց միջնորդի գլուխ գայ, մտածեց նա:

Հերիքնագի գլխի աղլուխն ղաղարկելուց յետոյ, Դարչոն Շողերին էլ չէր տեսնում: Թէև առաջուան պէս իրիկուն-առաւօտ ձին ինքն էր ջուրը տանում, բայց այդ միջոցներում Շողերը տնից չէր ելնում:

Այդ էլ մի կողմից էր կրակի վրա իւր ածում:

III.

Մի առաւօտ անգործ գիւղացիք ըստ սովորականին ժողովուելով գիւղամիջում, որտեղ գիւղի խանութներն էին գտնուում, տեսան Դարչոյի խանութը կողպէքով փակած: Այդ բանը նրանց հետաքրքրութիւնը սաստիկ շարժեց: «Երաբ ո՞ւր կ'լի գնացած: ձոթ կ'լի տարած էդ մօտիկ գեղօրանքը, թէ քաղաքըն ապրանքի կ'լի գնացած»: Այս հարցերն էին տալիս միմեանց գիւղացիք ու նկատելով որ բեանդ-խուղա Աթին չիբուխը փստացնելով գալիս է, դեռ բաւական հեռու էր նա, որ հարցըին.

—Քեանդխուղա Արութին, բեանդխուղա Արութին, Դարչոն էս ո՞ւր ա գնացել, խորհրդակիցն ես՝ կըգիտենաս:

«Խօհրդակից» բառը հեզնօրէն շեշտեցին:

—Վալլահ գիտեմ ոչ,—ասաց Աթին և աւելացրեց.—հմա զրառլնին (գիշերապահները) ասին, որ ծէգեւհան ձին նի ըլած դպա դէնը գնաց:

Դարչոյի անյայտանալու մասին փոքր ինչ էլ թեր ու դէմ դատողութիւններ անելուց յետոյ, նրան

բոլորովին մոռացան գիւղացիք ու սկսեցին իրենց սովորական լկռահաչը:

—Տէր-հայր ջան, քո կարգին մեռնեմ, ինձ մէջաբա (ճար) պիտիս անի,—հ. գիւղի գրբաց Տէր-Գէորգի աջն առնելով ասում էր Դարչոն, որը լուսածէգին ճանապարհ ընկնելով, իրիկուան եկեղեցու զանգակների հնչելու հետ հասել էր այդ գիւղը:

—Ի՞նչ կայ, որդի ջան, դարդդ ասա տենանք:

Դարչոն պատմեց իր սիրահարութեան հանգամանքը:

—Չատ բարի, յետոյ էն հարսի մազիցը եա շորիցը մի կտոր բերել ես:

—Վա, զանա առանցի մազի ու շուրի չի ըլի:

—Կ'նի, համա մը խելի դժուար բան ա:

—Հաջաթ չէ, տէր-հայր ջան, իմ խաթրու պիտիս անի:

—Ըրեում ա՛ լաւ տղայ ես, որդի ջան, կանեմ՝ համա մի կարմիրդ (տասն ըուրլանոց) կառնեմ: Էն հարսի մօր անունն էլա գիտես:

—Գիտիմ, գիտիմ, մօր անունը Թաղուհի է... Ըհը, վի կալ էս հինգ մանէթն ու գիրն արա, տէր-հայր ջան: Թէ վուր բանը գլուխ էկաւ, խօ էն ժուզը քիզ համա մէ լաւ խաս փարաջացու էլ իմ պարտըն ըլի:

—Է՛հ, օրհնեալ լինիս, որդի, հինգ ըուրլանոցը կանխապէս գրպանը կոխելով ասաց տէր-հայրը և սկսեց «գիր» անելը:

Թղթի մի քառորդ թերթի վրա տղամարդու պատկերի ձևով մի բան նկարեց: Դրա տակը մի երկու

տող արարերէն տառերի նման ճգմզելուց յետոյ, հայերէն աւելացրեց. «Ծղալորի տղայ Դարչոն սիրի Թագուհու աղջիկ Շողերին» ու կարդաց:

— Վա՛, էդ ի՞նչ իս ասում, տէր-հայր, թէ չիմ սիրում՝ էստի ի՞նչ իմ շինում. դու էնէնց գրի, վուր նա՛ ինձ սիրի, նա՛:

— Նա էլ կըսիրի, նա էլ կըսիրի, վախիլ մի, դեռ համբերի, որդի, էս ձեն ա էսէնց. հալա հաշ միւսներն էլ գրեմ՝ յետոյ:

Մի քառորդ թղթի վրա էլ նոյն ձեւով աղջկայ պատկեր նկարեց ու արարերէնի նման տառերի տակից հայերէն աւելացրեց. «Թագուհու աղջիկ Շողերը սիրի Ծղալորի տղայ Դարչոյին»:

Այդ որ կարդաց, Դարչոն ուրախութիւնից նըստած տեղից շարժուեց:

Այս գործողութիւնից յետոյ, տէր-հայրը վերցրեց ձիու ասիական ձևի մի մաշուած պայտ և բոլորի շուրջը դարձեալ, իբրեւ արարերէն գրելով, իւր ասելով՝ թլիսմն արեց ու հայերէն աւելացրեց. «Ինչպէս էս նալը կըսկումը պողանայ, էնպէս էլ Շողերի սիրտը Դարչոյի վրա պողանայ»:

— Էդ ինչո՞վ իս գրում, տէր-հայր, մեկանի նման չէ ու:

Ի՞նչպէս կարելի ա, որդի, թանաքն ինչ գորութիւն ունի, որ քեար (ներգործութիւն) անի. սա թլիսմն արած կարմիր գինի ա, մէջը խառնած զափուան (բըրում) ու մուշկը. շատ թանգ բան ա էս մուշկը, Թեհրանիցն հմ բերել տալի, ըստեղօրանք ճարում չի:

— Էս թղթերը էսպէս մէկ մէկու վրա կըդնես, — Դարչոյի պատկերը Շողերի պատկերի վրա դնելով աւելացրեց տէր-տէրը, — ու նրա շէմքումը կը թաղես, որ վրովը շուտ-շուտ անց ու դարձ անի: Յետոյ բու տանը լաւ թէժ կըսկ կը վառես, էս թլսմի նալը կըզցես քեօզի (շեղջակոյտ) մէջը, որ գընայ լաւ կարմրի. — քանի դա տարանայ, էնքան էլ նրա սիրտը դաւա բի կըտաքանայ:

Դարչոյի սիրտը թնդաց տէր-տէրի այս խօսքերի վրա. նրան թուաց, թէ Շողերը իր սիրուց արդէն գծուած է: Այս ամենից յետոյ մի ուրիշ թղթի կտորի վրա միմիայն արարերէն տառերի նըման բաներ խաղխղելով, եռանկիւնաձև ծալեց ու յանձնեց Դարչոյին:

— Էս գիրն էլ մի մաքուր փալասի մէջ կըդնես, կըկարես արխալուղիդ աստառի վրա՝ կոնատակիդ. — սա էնպիսի մի գորութիւն ունի, որդի, որ ուր որ դնաս՝ ամեն տեղ էլ փակուած դռները առաջիդ բաց կանի:

Քանի օր էր, որ թալիսմանի գրերը ձեռքին՝ Դարչոն մնացել էր մոլորուած, չգիտէր՝ ո՞ւմ միջոցով թաղել տար: Ինքը սիրտ չէր անում և ուրիշին էլ իր գաղտնիքը յայտնել չէր ուզում: Երկար տատանուելուց յետոյ, գրերը իր ծառային տուեց, որ տանի Շողերի շէմքումը թաղի: Բայց կանխապէս յորդորանքներով ու սպառնալիքներով նախապատրաստեց նրան, որ գաղտնիքը ոչ ոքի չյայտնի:

Այնուհետև գիտամբ մի քանի օր շարունակ ձին ինքը չէր ջուրը տանում: Երբ «գրերը» թաղուած

էին, պայտն էլ կրակում լաւ շիկացած էր, այն ժամանակ ձին ինքը ջուրը տարաւ, որպէս զի եթէ Չողերին տեսնի, գուցէ զրերի ներգործութիւնը երեսայ:

Դէպքի բերմունքով, Շողերը ջրի կուծն ուսին աղբիւրից տուն էր գալիս ուղղակի Դարչոյին գէմ-յանդիման: Պատահմամբ այս անգամ նրանց հայեացքները հանդիպեցին միմեանց: Այս երկրորդ անգամն էր: Սկզբում Դարչոն շատ ուրախացաւ, այդ հանգամանքը զրերի ներգործութեանը վերագրելով: Բայց իսկոյն Շողերի ծով-ծով աչքերի մէջ մի խոհեմ ու միաժամանակ այնպիսի մի սառը, հպարտ հայեացք նկատեց, որ սարսափով զգաց այդ կնոջ անմատչելիութիւնը:

Այնուհետեւ այլեւ Դարչոն Շողերին շուտ-շուտ չէր տեսնում: Իսկ եթէ երբեմն պատահմամբ հանդիպում էին միմեանց, Շողերը նրա գէմքին բոլորովին չէր նայում:

«Վա՛, թլիումն էլ սուտ դուս էկաւ, վայ թու մազիցն ան շուրիցը չտարայ, նրա համա չէ աջողում»:

Ինքն իրան այսպէս խօսում էր Դարչոն:

Մի օր էլ հրեսը պնդացրեց ու տատմէր Մաթոյին բաց արեց բանը, նախապէս լաւ խալաթ (ընծայ) խոստանալով: Մաթոն յանձնառու չեղաւ:

— Էդ ի՞նչ ես ասում, — ասաց նա, — ուզում ես մազերս զլխիցս փետի:

— Դէ լաւ, լաւ, վուր էտէնց է, բարը վի կալ տալը դի, Մաթաղ նանի, թող ոչ որ չիմանայ:

IV.

Դարչոյի ճարը որ կտրուեց, վերջ ի վերջոյ դիմեց քեանդխուղա Աթնի օգնութեանը:

— Հը՛ հը՛, մանղա Աթի դիալլար (ինձ Աթի կասեն), բա որ ասէի, — պարծեցաւ նա մի մեծ գիւտ անողի պէս: — Հմի դուն էն ասա, խու ուրիշ մարդ չես դարկել Շողերի կուշտը: —

— Տատմէր Մաթոյին ասեցի. համա վիզը չկալաւ, — գլուխը քորելով պատասխանեց Դարչոն:

— Հը՛ մ... — Աթին մի վայրկեան մտածողութեան մէջ ընկաւ, ապա շարունակեց. էդ էն խմորն ա, որ շանտ ջուր վեր կունի, համա, մեր տղայ, մըխելի փարա կերթայ, գլանին, բանին, ուրիշ...:

— Հէր օխնած, օղոնղա դուն գլուխ բերիս, թէ չէ փուղն ի՞նչ բան է: — Եւ Դարչոն երկու հատ տասըն ըուբլանոց թղթաղրամներ զրեց Աթնի ձեռքը:

Աթին քանի օր էր՝ շարունակ գլուխը բարձր ած՝ մտածում էր: Նա երկիւղ էր կրում, որ բանը գլուխ չգայ: Բայց զրպանի փողերը շօշափելով յոյսը չէր կորցնում:

Ու դեռ դիմեց տատմէր Մաթոյին, բայց հէնց սկզբից գործին ուրիշ ձև տալով:

— Մաթաղ նանի, ասաց նա, — կերթաս Շողերին կասես թէ՛ դուքանչի Դարչոն իրան ուզում ա (ձեռքը խնդրում է), ասա ես էլ եմ երու (խորհուրդ) տալի, որ մարդ անի. ինքը մի ջահել օղլուշաղ ա, երեք քորփի ումուղի նստել ա, ո՞վ պտի նրան պա-

հիւ: Հազիր ուզողն էլ քաղկի առուտուրի մարդ ա, գլուխը թարխան (աղատ), խարջ չի տալի, բորջ չի տալի, կոռ ու բէգեառ չի քաշում: Իրան լաւ քաղաք-դաստուրի կը պահի, տղերանցը մարդ կը շինի. աղջկանն էլ մարդի կը տայ:

— Դէ, դու գիտես հա, — տատմէր Մաթոյի ետեւից ձայն տուեց Աթին, — թէ էդ բանը գլուխ ես բերել, լաւ խալաթ կըստանաս:

— Էդ ի՞նչ ես ասում, Մաթթաղ նանի, — աչքերը լայն բացած ասաց Ջողերը, — մոխիրը կը շաղախեմ, բեխանցս հետ կուտեմ ու մարդի չեմ գնալ. քաղաքի տղայ չէ թէ կուզ երկնքիցը վերեկովի հրիշտակ էլ ըլի հա, ես մարդ չեմ ուզում: Թող սատանայ Աթին իր հարսին մարդի տայ:

Այդ անցքից մի քանի օր յետոյ, Աթին և տանուտէրի միջև տեղի ունեցաւ հետեւեալ խօսակցութիւնը:

— Փարսաղան քեօխվայ, մի չաղ որս եմ գտել:

— Էլ էդ ի՞նչ որս ա, բեանդխուղա Արուսթին:

— Բա ասիլ չես՝ Դարչոն Շողերի վրա գժուած ա. մարդը փողը խնայում չի: Ըհը՛, առ, էս հինգանոցն էլ ջերդ դիր, ըժու ոնց որ կասեմ, կիրակի օրը ընենց կանես. մըբիշ Շողերին հարկաւոր ա հուփ տալ:

— Լաւ, լաւ, էն ա ոնց ասես՝ ընէնց կանենք:

«Էն շան տղէն ընդհուր ա ձին ջուրը տանելիս ընենց պել կտրում հա. վայ էս շաշ գլխին, որ սարսաղացայ ու էն անտէր աղլուխը ետ չտուի», գլխին խփելով ինքն իրան այսպէս էր խօսում Շողերը

տատմէր Մաթոյի հեռանալուց յետոյ: Այնուհետեւ ձիու ջրի ժամանակը տանից չէր ելնում: Իսկ եթէ գործով դուրսն էր լինում կամ աղբիւրից ջուր բերելու էր գնացած լինում ու պատահամբ հանդիպում էր Դարչոյին, ոչ նայում էր նրա վրա և ոչ էլ խուսափում էր նրանից:

Մի կիրակի օր, գիւղի գիւնատանը մի երկու գործ ըննելուց յետոյ, տանուտէրը գզրին ուղարկեց Մաղոյին կանչելու: Ստուերի պէս ներս մտաւ ցնցատիների մէջ պատսպարուած մի ողորմիկ տեսքով մարդ:

— Ա՛ղա Մաղո, ողորմածիկ Զաղարի վրա դաւթարումը տասը մանէթ դաիմկայ կայ (недоимка — ապառիկ). խու նրա փայ հոգերը վարում ես, խի՞ չես էդ փողերը տալի:

— Գլաւին ջան, ինչդդամ վախտ որ հոգերը իմ ձեռին են, ես հարկ ու խարջն էլ եմ տուել, Շողերի հասուիրանքն էլ, դաիմկի հետ ես ի՞նչ բան ունիմ:

— Լաւ, ասենք էդ պարոն Մարտիրոսը դաիմկի հետ գործ չունի. բա ի՞նչ իրաւունքով ա երկու տան հողի տիրապետում, բանի որ մեր օրչեստումը դա կես ուր ա (որոշ հողաբաժնի $\frac{1}{8}$ մասի տէր) հետք ըլում: 25 որ էդ հողի վրա ուրիշ մասըսփ (ծախս) կայ, կոռ ու բեկեառ կայ, էտոնք ո՞վ պտի քաշի: Ինքը մենակ մարդ ա, մի կէնդ լուծ եղն ունի, ըտով դա կալայ ջուղաբ (պատասխան) տալ, — մէջ ընկնելով ասաց Աթին:

— Հա բա, զրուստ ա ասում, — պնդեց տանուտէրը:

Մաղոն լուռ էր. նա իր խաւարած աչքերի հա-յ
եացքը սենեակի անկեան մի կետի վրա յառած՝ նայ-
ում էր: Նայում էր ու ոչինչ չէր տեսնում:

— Հմի ի՞նչ ես ասում, տասը մանէթը տալիս
ես թէ չէ, — բարկանալով կրկնեց տանուտէրը:

— 2 է, կարալ չեմ:

— Դէ որ ըտէնց ա, գլաւին ջան, Շողերի փայ
հողերը ինձ տո՛ւր, փառք Աստծու, հինգ հլէ ածղըհա
տղայ ունեմ, եգն ու գոմէշն էլ իրանց սարքովը, կո-
ռըդ էլ կըբաշեմ, բէգեառդ էլ, — դարձեալ մէջ ընկաւ
Աթին:

«Հլա ասա, ա՛ բաւթառ գէլ, բու օրումը դուն
կոռ ու բէգեառ քաշած կամ», շշնջացին ամբոխի
ետեի շարքում:

— Գնա՛, թող քի ըլի, ախպէր, վարի, ցանի,
խարջ ու բորջն էլ քաշի: Էս բեասիւր բիուսուրի ըրե-
սին մտիկ տալով ես տէրութէնի ըղաքին սեւրես կը
մնամ, իմ երեսի արուռը դո՛ւր պտէք եդ անիլ, բեանդ-
խուղա Արութին:

— Բա էն դաիմկէն ո՛վ պտի տալ, — դէմքին բռնի
լուրջ արտայայտութիւն տալով աւելացրեց տանու-
տէրը:

— Հալբաթ որ ձողերը պտի տալ. թէ ինձ իրա-
ւունք կըտաս, ես էդ փողերը կըհանեմ:

— Շատ բարի:

Աթին հէնց այդ «շատ բարի» ասելուն էր սպա-
սում. իսկոյն ամբոխի միջից երկու տղայ կանչեց և
ուղարկեց ձողերի տուն:

— Իմ մարդը գեղին ոչինչ չէր պարտական, —

Հերիքնագի լեզուով ասաց Շողերը, որովհետև ինքը
չխօսկան էր. — նրա կենդանի ժղմովը իմ ողորմած-
հոգի հէրն էր վարում մեր հողերը ու հարկ ու խար-
ջըն էլ քաշում:

Սակայն երիտասարդները նրա խօսքերին բոլո-
ւովին ուշադրութիւն չդարձնելով, թարեբից վեր-
ցրին նրա կերակուր եփելու միակ կաթսան, մի քա-
նի հատ էլ պղնձեայ մանր ամաններ ու տարան
տանուտէրի տուն:

Շողերը ոչ մի ընդդիմութիւն չարեց, այլ ըն-
դարմացածի պէս մնաց խրճթի մի անկիւնում կանդ-
նած: Նա այնքան պղնձեղէնից զրկուելու համար
չէր ցաւում, որքան այդ երիտասարդների յանդուգն
վարուելուց ու իր վրա լրբաբար նայելուց էր վի-
րաւորվում:

Աթին կարծում էր, թէ, որտեղ որ է, Շողերը
կըգայ իր ոտքերը կընկնի, որպէս զի թէ իր պղնձե-
ղէնը ետ ստանայ և թէ, մանաւանդ, վարելահողերը,
ու ինքը վերջապէս այդպիսով միջոց կունենայ իր
նպատակին հասնելու:

Երկար միջոց սպասելուց յետոյ, ճարահատեալ
Աթին դարձեալ ինքը տատմէր Մաթոյին ուղարկեց
Շողերի մօտ, բայց այս անգամ էլ մի ուրիշ ձևով:

— Մաթաղ նանի, ա՛ռ էս երկու մանէթը, թող
քի խարջլուխ ըլի, ու մին էլ գնայ Շողերի կուշտը.
հմա չասես թէ Աթին ա դարկել հա. իմանում ես,
թէ չէ էլ ոնչ ես՝ ոնչ դուն:

— Արխէյին կաց, արխէյին կաց:

— Հա՛, ընենց ըլի, մթա թէ դուն ինքդ նրան

խղճում ես ու քիանից ես ասում,—համողիչ եղանակով շարունակեց Աթին։—Կասես, ա՛հ հողը գլխիդ, էդ ա հողերդ ձեռիցդ խլեցին, աման չամանդ կլպեցին տարան, եանի որ հողի խարջը չբաշխես, խօ ուրիշ ծխահարկ կայ, մասը քի կայ, կրդան մնացած էլած չելածդ էլ կըտանեն։ Ըժու ընչով կապրես, ես էտ քորփէնուդ ընչով կըպահես։ Ա՛յ զլուխ մեռած, ախրը խի ես բախտիդ քացի տալի, մի հետ մարդ արա, պրծի էլի։

—Պա՛, պա, պա, Մաթթաղ նանի, Աստոծ ո՛չ անի, որ ես մարդ անեմ։ Թէկուզ էս հագիս հին լեհինն էլ որ հանեն տանեն ու թողնեն ինձ էս չորս դարտակ սլատի միջին, էլի ես մարդ չեմ անիլ, որ մարդ չեմ անիլ,—պատասխանեց Շողերը և աւելացրեց. —Իմացած կ'աց. որ պատիւդ շատ եմ պահում, Մաթթաղ նանի, էս ա վրա երկու հետն ա, որ դու էդ բանը ինձ ասում ես, թէ որ ուրիշն էր ասիլ, խայտառակ կանէի։ Էս մինն էլ քի բողիշ, հմա ուրիշ հետ որ ասել ես, էլ ինձանից պրծնիլ չես։

Տատմէր Մաթոյի հեռանալուց յետոյ, Շողերին այնպէս թուաց, թէ իր ոտքերի տակ գետինը փլչում է... Նա դառն ու խորին մտայնութեան մէջ ընկաւ։

Խաղալու տեղից ուրախ-ուրախ թռչկոտելով ներս մտաւ Հերիքնագն ու մնաց սառած։ Շողերը մի ալնթարթում գոգնոցի փեշով աչքերը սրբեց։

—Խի ես լաց ըլում, նանի ջան։

—Լաց չեմ ըլում, բա՛լա ջան,—ասաց մայրն ու արցունքները կոկորդում սեղմելով աղջկան գիրկը բաշեց։

V.

Այս դէպքից յետոյ անցել էին շատ օրեր։ Շողերը մինչև անգամ մոռացել էր իրան հասցրած վիրաւորանքներն ու զրկանքները։ Նա առաջուան պէս ջահրա մանելով պահպանում էր իր որբերին։

Մի գիշեր Շողերի շունը սաստիկ «մարդահաչ» էր տալիս։ Այն ժամանակ Սաբոն տանն էր. շաբաթ գիշերն էր, լոյս կիրակի։

—Նանի, նանի, շունը կոխում ա (յարձակում է), —բնած տեղից սարսափահար զարթնելով և մօր կողքին հրելով ասաց Սաբոն, —ըստա գողեր են. ոնց որ ջլիլդ սոխախկումն ըլեն։

—Դուռը դայիմ եղնափակ տուած ա, վախիլ մի, կարալ չեն տուն մտնիլ, —ասաց Շողերը, որը վաղուց էր արթնացել և ուշադրութիւնը լարած, շունչն իրան բաշած, ականջ էր դնում թէ շան հաջոցին և թէ մարդկանց ոտնաձայնին։

Մէկ էլ դառն ճռռոցի ձայն լսուեց. —այդ նրանց խրճթին կից գոմի գուռն էր, որ բացուեց։ «Շատ բան կըտանէր էդ դարդակ գոմից ա՛յ, ձեր աչքը կարեմ», շնչաց Շողերը։

Շունը հօ իրան կտրատում էր, մէկ կատաղած յարձակում էր. մէկ էլ կլանչ-կլանչելով ետ փախչում ու նորից յարձակում։ Խեղճ անասունի գլխին զարկում էին։

Սաբոն այլևս իրան զսպել չկարողացաւ և իր հրեխայական «հուժկու» ձայնով գոչեց. «էդ ո՛վ էր,

էհէյ, տօ ես ձեր... կորէք թէ չէ դուս կըգամ գըլուխներդ կըջարդեմ: Սակայն, ինչպէս երևում էր, եկողներն արդէն հեռանում էին, որովհետեւ շունը շեմքից հաջելով դուրս գնաց, ու հետզհետէ նրա հաջոցի ձայնն աւելի հեռուից էր դուլիս:

Չողերն ու Սաբոն սզատ շունչ քաշեցին:

Հետեւեալ առաւօտ Չողերենը դեռ նոր էին քնատեղից վերկացել, որ գիւղի գիշերապահները տանուտէրի օգնականի առաջնորդութեամբ ներս մտան:

— Շողեր, — հանդիսաւոր եղանակով ասաց օգնականը, — քշերս Օղուզանց դռան կողպէքը կոտրեւ էն՝ մի թոխիկ հանել. դրաուլնին տեսել են, որ բուտղէն էն կռնիցը մի գադ կռնատակած գալիս ա. հմի ուզում ենք տունդ ման գանք (խուզարկենք):

Շողերի համար այնքան անսպասելի էր այս բանը, որ նա, աչքերը մեծ-մեծ բացած, մնացել էր տեղն ու տեղը սառած: Իսկ Սաբոն հետաքրքրութեամբ ու երկիւղով լի աչքերը սեւեւ էր օգնականի ղէմքին:

Գիշերապահներն արդէն խուզարկում էին տանը շունչ ու պուճախը: Մինչև իսկ Չողերի «քսուր-ծըրուր»-ի սնդուկն էլ բլբլեցին, բայց ոչինչ չգտնուեցաւ: Չողերը դեռ բթացած հայեացքով նայում էր. նայում էր ու գրեթէ ոչինչ չէր նկատում: Փոքր ինչ յետոյ թէ նրա հոգին սկսեց վրդովուիլ, բայց դարձեալ ինքն իրան զսպում էր, որովհետեւ կասկած չուներ, որ Սաբոն արդար էր:

— Զատ չկայ, տղերք, գնանք, — ասաց օգնականը:

Բոլորը դուրս գնացին: Չողերի վրայից կասեա մի ճնշող բեռը վերցրին: Մայր ու որդի նայեցին միմեանց: Շողերենց երկար սոխախից դեռ բոլորը դուրս չէին եկել, որ գիշերապահներից մէկը կանգնեցրեց նրանց:

— Քեօխվա, քեօխվա, հրէս ըստի մի դուռը կայ, գիտեմ ոչ գոմ ա, մարաք ա, ինչ ա, եկէք ըստուր մէջն էլ ման գանք:

Դուռը բանալով ներս մտան ու սկսեցին խուզարկութիւնը:

— Ըհըր, հրէս «թոքնդուն» (նշանացոյց) գտել եմ, — բացականչեց միևնոյն գիշերապահը, որն Աթնի տղան էր, բարձրացնելով մի ոչխարի մորթի, ոտքերն ու գլուխը մէջը փաթաթած: — Էս ա, իսկ Օղուզանց թոխիկն ա, նրանց նշանը ես գիտեմ, աջու ընդածի ծէրը կտրած ա:

Այս աղմուկի վրա դուրս էին եկել Շողերն ու Սաբոն:

— Տօ, Աթնի տղայ, շան տղայ, բա էդ ձեր արած բանը չի, — արդար գայրոյթով բացականչեց Չողերը, որը մինչև այդ՝ օգնականից չ'խօսկան էր: — Բա բու անաբուռ հերը ինձանից ձեռք չպտի վեր ունիլ: Համ թոխիկն գողացել էր, լափել, համ էլ բերել էր շառը (զրպարտութիւնը) իմ արդար 'րեխի շնորովը փթաթում: Ա՛ շան տղայ, քշերս դուք չիք, որ շունը հաջացնելով մտաք էդ գոմն ու եդ դուս ելաք:

— Դէ սո՛ւս կաց, անգգամ դանջըդ, հրէս լաչակըդ ծուիկ ծուիկ կանեմ հա՛, հլա ընչեր ա խօսում:

«արդար», անց չէ։ Աղքատ շներ, ձեր օրումը մսի համ չէք տեսած, հմի լափել էք պրտակել ու քու կնիկ տեղդ ուզում ես մեզ շառով տան։ Էն ինչ ա, որ իմ սիրտը միս ա ուզում՝ մեր դռան սուրճից կարում չեմ մորթեմ։

— Ա՛խ, տէր Աստո՛ծ, դուն մի դատաստան ա- նես. էս ինչ թաւուր խալիս են, էս ինչ թաւուր բրիստոնեայ են։

— Լաւ, հերիք ա, խօսելու վախտը չի, վե կա- լէք էդ թորնդուն էլ, էս գեաղին էլ, տանենք կան- ցալարը, Շողերի խօսքը կտրելով, հրամայեց օգնա- կանք։

Երբ Սաքոյի թեկից բռնեցին, որ տանեն, նա օտը պատին ամուր դէմ տուեց, բայց մի ուժգին ապտակ կերաւ իր ընդդիմութեան համար։ Արտա- սուրը երեսն արած, բարձ տալով դուրս տարան Սաքոյին։

Շողերն այնպիսի մի սուր ցաւ զգաց, որ կար- ծես շեշտակի իր սրտին զարկեցին։ Նա դեռ իր վըշ- տալից աչքերը դէս ու դէն ուրեց, կարծես շրջա- պատից օգնութիւն էր հայցում, ու մէկէն մի սուր ճիշ արձակելով, ինչպէս մի արծիւ, որից ձազը խլում էին, կատաղի թափով յարձակուեց, որ Սաքոյին եղ խլի։ Սակայն մի կինարմատն ի՞նչ կարող էր անել չորս ուժեղ տղամարդի դէմ։ Սաքոյին տարան։

Սաքոյին տարան, Շողերն էլ ետեից արտասուե- լով ու Աթնին անիծելով՝ գնաց։

VI.

Օրը կիրակի էր։ Աշնանային մեղմ ու պայծառ արևն աւելի ևս բաղցրութիւն էր տալիս այդ օրին։ Նոր համբաւը դատարանի առջև ամբոխի մի հոծ բազմութիւն էր հաւաքել։

— Հիւ-հիւ էն անդգամին մտիք արէք, ըմանչում էլ չի, ըմանչում, ջահել օղլուշաղ՝ էսղդա օրդուի (ամբոխի) աղաքին կանգնել ա՛ լաց ա ըլում։

— Բողա-լաց ա տալի։

— Մեր տղայ, հմա ջան ա, հա։

— Մի երկիր աժի, մի երկիր։

Այս և սրա նման լպիրշ խօսքեր էին լսում ամբոխի միջից Շողերի հասցէին։ Զողերի աչքերը խաւարել էին, նա որոշակի ոչինչ չէր նկատում. այն պայծառ օրը նրան թւում էր իբրեւ մի միզապատ օր, իսկ ամբոխի բազմութիւնը նրա աչքերին մի մեծ սև զանդուածի պէս էր երևում։

Հերիքնազն իրանց տան այդ աղմուկը տեսնե- լով՝ զրկեց իր փորրիկ եղբօրն ու հեծկլտալով վա- զեց տատմէր Մաթոյի մօտ։ Մաթոն այն պահուն վրա հասաւ Զողերին, որ արդէն սկսել էին հարց ու փորձը։

Գիշերապահները հրապարակով ցուցմունք արե- ցին, թէ նախընթաց գիշերը տեսել էին Սաքոյին Օղուզանց տան կողմից մի բան զրկին գնալիս և այդ հիման վրա էլ Զողերի տունը խուզարկելով՝ գտել էին թոխու մորթին՝ ոտն ու գլխի հետ։

էլ ուրիշ ինչ փաստ էր հարկաւոր: Հաստատուեց,
որ թոխլու գողը Սաքոնն է:

Հարց ու փորձի ամբողջ ժամանակ Սաքոնն ա-
տամ ատամ դողացնելով արտասուում էր: Շողերի
սրտի մէջ կրակ էր վառուում:

Թէպէտ նա տատմէր Մաթոյի լեզուով ասաց,
որ անցեալ գիշեր շունը շատ հաջել է, գոմի դուռը
բացուել է, որ վերջուպէս գիշերապահներն իրանք
են գողացել, «թոքնդուն» դիտմամբ իրանց գոմումը
գաղել ու այժմ իր արդար երեխին շառով են տա-
լիս, սակայն նրա խօսքերին նշանակութիւն չտրուեց:

— Թէ որ շատ կըխօսես, քի էլ տուն կըզցեմ
(կըբանտարկեմ), որ գողացածը պարտակել ես,—
ճողերի խօսքը կտրելով, ասաց տանուտէրն ու հրա-
մայեց, որ Սաքոյին իսկոյն բանտարկեն:

Շողերը իր ականջներին չհաւատաց. նրան
թուաց, թէ տանուտէրի ասածը սխալ ըմբռնեց:
Բայց Սաքոյին դուրս տարան թէ չէ՝ իր գլխին
պինդ խփելով՝ «վայ» գոչեց ու ուշաթափուած վայր
ընկաւ...

Գլխին ջուր ածելով, ականջներին ձգձգելով,
բներակներն ամուր սեղմելով՝ ուշքի բերին նրան ու
մի թևից Մաթոն, միւս թևից Մադոն բռնեցին և
գրեթէ քարշ տալով տարան տուն:

Գողացուած թոխլու տէր Օդուզանց Յարութիւնը,
որը ներկայ էր այս լրտորին, տանուտէրից խնդրեց,
որ դադար տայ այդ գործին ու Սաքոյի արձակին:

— Թոխլին իմը չի՞, ախպէր, ես ջառմա (տու-
զանք) չեմ ուզում,— աւելացրեց նա:

— Բանը էդ չի ախրը,— միւս կողմից վրա բե-
րեց բեանդխուղա Աթին,— շատ էլ դուն բու թոխ-
լին բաշխեցիր, բաւրամ էգուց էլ իմ կովը գողացան.
ես խօ բաշխիլ չեմ: Ասած ա թէ՛ «ձուի գողը ձի
էլ կըգողանայ»:

— Զատ էլ դուն ջառմա չես ուզում, հմա դա ուզով-
նի (УГОЛОВНОЕ—բրէական) գործ ա, զակոնը (օրէնքը)
պահանջում ա, որ դողը պատժուի,— պատասխա-
նեց տանուտէրն ու զրազրին հրամայեց որ «սլա-
տակոլ» (արձանադրութիւն) կազմի:— Դրա պէս լա-
ծիրակն էլ գողութիւն անի, էն էլ կողպէք կոտրե-
լով: Թող դնա ձուղուրանց Ուհանէսի պէս Սիրիբումը
փթի, որ խելքը զլուխը գայ:

Շողերի մայրական սիրտն այս անսպասելի
հարուածին դիմանալ չկարողացաւ: Նրան յայտնի
էր, որ ձուղուրանց Ուհանէսին մի կողպէք կոտրելու
համար Սիրիբ կորցրին և մանաւանդ լսել էր տա-
նուտէրի սպառնալիքն այդ մասին:

Աթին էլ տատմէր Մաթոյի բերանով մի զլուխ
այն էր ապսպրում, որ եթէ ճողերը Դարչոյին կուզի,
հօ Սաքոն կըպրծնի, իսկ եթէ ոչ՝— Սիրիբն է նրա
տեղը:

Ուստի վերջ ի վերջոյ ընկճուելով, մի օր էլ
տատմէր Մաթոյի միջոցով խոստումն տուեց ճողերը
Դարչոյից նշան վերցնելու, սակայն այն պայմանով,
որ նշանադրութիւնը բահանայի միջոցով կատարուէ:

Քեանդխուղա Աթին, յամենայն դէպս, բահա-
նայի պատրաստութիւնը վաղուց էր տեսել, ուս-
տի իսկոյն վազեց Դարչոյի մօտ աւետիք տալու:

— Էդ վճռնց կուլի, քէթխուգա Արուծին, իս խոմ չիմ կանա մէ գիղըցու քրիվոյի (այրի) վրա պսակուի, տէրտէրով նշան տալը վճռն է, գժուիլ խոմ չի՞ս: Իս տանձ իմ ասի, դու գանձ իս իմացի:

— Այ տղայ, դուն ջիլիգ բանի գլխի չես (բնաւ չես ըմբռնում), էդ ընէնց ըլի, փորմի (ձեի) խաթեր ա, չունքի ուրիշ զայդի մղուր չի գալի (չէ յօժարում): Տէր-տէրն էլ X գեղըցի տէր-Քոսէն ա, ինքը մեզանից սալախանա ա ու Շողերի վրա էլ վաղուց աչքն ունի: Հինգ մանէթ եմ խոստացել, որ զայ նըշանի, հինգ մանէթ էլ գլաւնին եմ տուել ու...

— Լաւ, իժոճում:

— Ըժոճում, ըժոճում— ջուրը կժոճում. նշանի տեղակ մի երեք մանէթանոց կըտաս ու գժուաւն էն ա՝ մին ուտըդ տուն դնես, ըժոճ սնց որ ուզում ես քէփ քաշի: Քեզ ո՞վ ա զօռում, որ հայհարա (անշուշտ) պսակուես: Կըխարես, կըխարես ու կըբրախես, պըծանք գնաց. նրա տէրն ո՞վ ա:

VII.

Աշնան աստղագարդ ու ջինջ գիշերներէից մէկն էր: Բայց գիւղացիք վաղուց հանգչում էին խոր քնի մէջ: Այդ պահուն գիշերապահները ձողերի տան առջնով անցնելիս, խորոված մսի ախորժելի հոտ գզացին ու նայելով նկատեցին, որ երգկից լոյս է երևում: Նրանցից մէկն զգուշութեամբ կտուրը բարձրացաւ և երգկից ներս նայեց:

Բուխարու առաջ նստած էր Մադոն ու խորովածի շամփուրները շրջում էր կրակի թէժ շեղջի վրա: Զիթով լիբը երկաթեայ ճրագի կոթը դրած էր բուխարու պատի բացուածքի մէջ, և ճրագի առանց այն էլ աղօտ լոյսը կրակի մօտ աւելի ևս խաւար էր երևում: Փոքր ինչ դէպի տան կեշրոնը, գետնի վրա մի մեծ հին թաղիք կար ձգուած, որի մէջ տեղը ճոխ սուփրա էր սփռած: Սուփրայի բոլորի շուրջը թաղիքի վրա ծալապատիկ շարուած էին տէր-Քոսէն, տանուտէր Փարսազանը, քեանդխուգա Աթին և խանութպան Գարշոն, որը բարձի վրա էր բաղմած: Սփռոցի մի ծայրում, դէպի դուռը, փոքր ինչ թէք դիրքով նստած էին Շողերն ու տատմէր Մաթոն: Շողերի դէմքը կիսով չափ ծածկուած էր չաղրաթով (բարակ շղարշ):

Նստողների յետևում, պատի տակ անկողին կար սփռուած, որի մէջ միմեանց փարուած՝ անուշ քնով քնած էին ձողերի երկու որբերը՝ Հերիքնազն ու իր փոքրիկ եղբայրը: ձունն էլ ներսը, շէմքի առաջ, փոքրի վրա նստած, թաթերով մսի ոսկորները պինդ բռնած՝ եռանդով կըծում էր:

Այդ՝ ձողերի նշանադրութեան հանդէսն էր:

Սարոն արդէն բանտարկութիւնից արձակուած՝ իր ծառայութեան տեղն էր:

ձողերը գինի չէր խմում, թէև շատ ստիպեցին, բայց պռունկն էլ չառաւ: Տատմէր Մաթոն տղամարդկանց հաւասար կոնծում էր: Արծաթեայ հագարփէշէն, շողշողուն կարմիր գինով լիբը, մի բանի անգամ արդէն պտոյտ էր եկել ու դատարկուած վերա-

դարձել զաւրի մօտ: Հիւրերի գլուխները լաւ տաքացել էին, և նրանք շատ ուրախ տրամադրութեան տակ համ ուտում էին, համ խմում, համ էլ զուարճախօսում:

Նրանց ուրախութեանը մասնակից չէր միմիայն Շողերը: Նրա սիրտն այնպէս էր խաւարել, ինչպէս ձմեռուան թխպոտ օր: Նրա գլուխը թմրել էր ու ինքն իրան հաշիւ չէր կարողանում տալ, թէ ինչ է կատարւում իր շուրջը: Մէկ էլ նրան այնպէս թուած թէ տունը իր գլխովը պտոյտ է գալիս, գետինը փլչում է. տաքացած ականջները թշշում էին, գլուխը դռում էր: Նրա դէմքն այնպէս էր կարմրել, ինչպէս կրակում շիկացած երկաթ:

Երբ ընթրիքը վերջացաւ, բացի Դարչոյից ամենքը ցրուեցին իրանց տները: Աթնի կարգադրութեամբ Մադոն տէր-Քոսի ու տանուտէրի հետ գնաց, որ նրանց շներից պաշտպանի: Հեռանալիս՝ Աթին Դարչոյի դէմքին նայելով աչքի մէկը խուփ արեց ու լրբաբար ժպտաց: Տատմէր Մաթոն ամենից յետոյ գնաց: Զողերը նրան չէր թողնում գնալու, բայց նա խսկոյն ներս գալու պատրուակով դուրս գնաց ու էլ չվերադարձաւ:

Հետեւեալ առաւօտը, երբ Սաքոն իր «խազէյնի» լծկանը տարաւ աղբիւրը, ջրելու էր բերել նաև իրանց լծկանը նախընթաց գիշերուան գիշերապահներից մէկը:

—Ա՛ղա, Դարչոյի տղայ, Սիրիբ գնալուց պըրժար ըլի՛. հալբաթ որ Զողերի պէս սիրուն մէրը ով ունենայ, ամեն չարից ու փորձանքից էլ կըպըծնի,— դառը հեզնութեամբ ու ծաղրելով ասաց գիշերապահը:

Սաքոն լուռ էր. ոչինչ չպատասխանեց: Ոչինչ չպատասխանեց, բայց սիրտն այնպէս կսկծաց, որ կարծես սուր սլաքներով ծակոտեցին:

Այնուհետև հանդումն անասուններն արածացնելիս, ցանք անելիս, մի խօսքով ամեն տեղ ուր որ Սաքոն էլ լինում, նրա հասակակիցներն ու մինչև անգամ հասակաւոր լարդիկ «Դարչոյի տղայ» էին կանչում նրան: Այս բանը և՛ սաստիկ զայրացնում, և՛ ընկճում էր Սաքոյին: Նա՛ զրանց թէև պատասխանում էր ազդու խօսքերով, բայց զաղտուկ լալիս էր... Այլևս շաբաթ իրիկունները չէր գնում նա իր մօր մօտ:

Մի օր էլ Հերիքնագն արտասուելով ներս մտաւ, թէ «Նանի, էն աղջկերքն ինձ Դարչոյի աղջիկ են ասում»:

Հէնց իրան՝ Զողերին էլ, երբ նշանուելուց շատ յետոյ մի անգամ կուժն ուսին ջրի գնաց, մի կին այսպէս նկատողութիւն արեց.

—Ա՛ղջի, Դարչոյի կնիկ, քաղբցուն ուզել ես, խանում ես դառել, որ լայնաղ չես անում ջուրը գաս. էն քորփին ես դարկում, որ կժի տակին մէջքը կոտրուի:

VIII.

Զողերի նշանադրութեան օրից անցել էին արդէն վեց երկար ամիսներ, բայց Դարչոն պսակուելու մասին բնաւ չէր էլ մտածում: Ամեն անգամ, երբ

այդ մասին Շողերը խօսք էր բանում, Դարչոն գանազան պատրուակներով յետաձգում էր:

Ջողերը Դարչոյին ոչ թէ միայն չէր սիրում, այլ ատում էլ էր. բայց խայտառակութիւնից ազատուելու համար, միակ ելքն ամուսնութեան մէջ էր տեսնում: Նրա համար անախտ էր Դարչոյի յարաբերութիւնը իր հետ, բայց մի անգամ տղմի մէջ խրուելուց յետոյ մարտը ելնելու ուրիշ հնար չկար: Գիշեր-ցերեկ այդ դառը մտատանջութիւնը Շողերի սրտից ու մտքից չէր հեռանում: Եւ նա իր միակ մխիթարութիւնը յորդահոս արտասուքների մէջ էր գտնում:

Մի չարագուշակ օր Շողերը սարսափով զգաց, որ յղի է...: Այս մասին նա անմիջապէս յայտնեց Դարչոյին ու ազդու եղանակով ստիպեց, որ շուտով պսակուին, բանի դեռ «խաղը խայտառակ» չեն եղել:

Այնուհետեւ Դարչոն շուտով սկսեց խանութի ապրանքը շատ էծան գներով վաճառել, յայտարարելով թէ՛ իբրեւ գնալու էր Թիֆլիսից նոր «չեշուղ» բերելու: Այս լուրը տարածուեցաւ նաեւ բոլոր մերձակայ գիւղերում, այնպէս որ մի-երկու շաբթուայ ընթացքում Դարչոն բոլորը վաճառեց ու գնաց Թիֆլիս:

Ամբողջ մի ամիս սպասեց Շողերը, բայց իր նշանածը չվերադարձաւ և ոչ էլ ապրանք ուղարկեց, ինչպէս խօսք էր տուել իրան: Կասկածոտ մարդիկ աննպաստ լուրեր էին տարածում, թէ իբրեւ Դարչոն Ջողերին խաբեց ու ձեռք վերցրեց:

Դժբաղդաբար այդ կասկածոտ մարդկանց ասա-

ծըն ստուգուեց: Թիֆլիսից տեղեկութիւն ստացուեց, որ Դարչոն այնտեղ հարիւր թուան բրթամով (օժիտով) աղջիկ է ուզել, պսակուել և այլևս գիւղը չի վերադառնալու:

Շողերը Դարչոյի պսակուելու լուրն առաւ թէ չէ, աչքերը խաւարեցին, սիրտն սկսեց ուժգին բաբախել, ծնկները թուլացան ու նա վայր ընկաւ: Հերիքնազը վազեց տատմէր Մաթոյին կանչելու:

Մաթոն սկսեց սիրտ տալ Շողերին:

— Էլ նոր քու մխիթարանքը պէտք չի, Մաթթաղ նանի, թէ ճար ունիս՝ տես, էս շան զաւակը կորցրու, թէ չէ կերթամ քարափիցը վեր կընկնեմ, հողիս ստատաներոց կանեմ ու եթիմներիս էլ կըթողնեմ չոլն արած, — շատ վճռական եղանակով ասաց Շողերը:

— Դէ որ ըթէնց ա, կաց գնամ տուն ու ետ գամ:

— Ըհը՛ առ էս փոշին ու սրա կէսը էգուց ըռաւօտ անօթուց ջուր արա խմի, դեռ ըէխէն երկու ամսական ա, կըփչացնի: Թէ որ էդ բան չ'շինի, մընացած կէսն էլ էլօր ըռաւօտ կըխմես. ես էլ չուտ չուտ կըղամ ակը տալու (այցելութեան), — իր տանից վերադառնալով ու փալասի մէջ փաթաթած «ալաբլունդ»-ի¹⁾ փոշին Ջողերին յանձնելով ասաց Մաթոն:

¹⁾ Ալաբլունդը մեղուի մեծութեամբ՝ սև ու դեղին բրձերով ճանճ է: Այդ ճանճերը ժողովելով, գլուխները դէն են զցում, իսկ մնացածը չորացնում են, փոշի շինում, որը դործ է ածուում ջրվախութեան դէմ:

Հետեւեալ առաւօտ Շողերը շատ վաղ արթնացաւ, լուացուեց, երեսը խաշակեց ու որպէս զի փոշու ներգործութիւնը վճռական լինի, բոլորը կէս բաժակ ջրի մէջ խառնելով՝ միանգամից խմեց:

Ալաքլունգի փոշին ընդունելուց մօտ մի ժամ էր անցել. այնպիսի մի սարսափելի ցաւ զգաց Շողերը, որ էլ չկարողացաւ ոտքի վրա մնալ: Ընկաւ գետնին ու թաւալզւոր գալով այնպէս էր գոռում, որ, ինչպէս ասում են, մի ձայնը երկնքումն էր, մինը գետնումը: Հէնց այդ պահուն ներս մտաւ տատմէր Մաթոն:

— Վոյ բռնանամ, աղջի, խոտ չիմ (բոլորը խմեցիր ոչ:

— Վայ, նանի ջան, մեռնում եմ... վայ, փորս կտրատում ա... վայ, օսալի (վատի) տունը քանդուի, վայ...:

Տատմէր Մաթոն մի քանի անգամ ձողերի փորը մերսեց, բայց անօգուտ: Դարակները դատարկ շիշերը փնտռելով, մէկի մէջ քիչ օղի գտաւ, որ Դարչոն գործ էր ածում, ու մի փորքիկ բաժակով զօրով խմեցրեց Շողերին: Օղին աւելի ևս սաստկացրեց ցաւը:

Մաթոն մնացել էր շուարած: Նա մոլորուած հայեացքը դէս, դէն էր ձգում ու մի զլուխ ծնկներին խփում: Շողերն այլ ևս բարձր ձայնով չէր գո-

Կատաղած գաղանի խածած դէպքում, մի որոշ բանակութիւն ջրի հետ խառնելով՝ խմեցնում են հիւանդին, որն սկսում է արիւնախառը միզել և աջողութեամբ բժշկւում է:

ռում, այլ սրտի խորքից ծանր տնքում էր ու երբեմն էլ հեծեծում, հսում ու գալարում:

Մէկ էլ յանկարծ տատմէր Մաթոն շանթահարի պէս տեղիցը ծլունգ էլաւ ու զուրս վազեց: Նա նոր մտաբերեց, որ այդպիսի դէպքում թանը, մածունը կամ կաթը կարող են օգնել:

Բայց ունդ...

Թանը ձեռին նա այն միջոցին հասաւ, որ Հերիքնազը մօր անշնչացած դիակի վրա ընկած գոռում էր. «Վայ, նանի ջան, վայ»...

Դ Ի Ի Ա Ն Բ Է Գ Ի Ն

I.

— Եկան, եկան:

Այսպէս ձայն տալով ու մէկը միւսի առաջը կտրելով վազում էին գիւղի երեխաները դէպի երեք ձիւտներ, որոնք գիւղի պարտէզների միջից անցնելով մտնում էին գիւղը: Երեխաներին առաջակտրուկ անելով, նոյն ուղղութեամբ վազում էին և գիւղի շները, որոնք ձիւտների վրա յարձակուելով կարծես ուզում էին արգելել անժամանակ հիւրերի գալուստը: Ձիւտները շներին մտրակելով ճամբայ էին բանում: Ուրախ ծիծառներն օդի մէջ ճախրելով՝ սրընթաց սլանում էին ուղղակի ձիւտների բլթի առաջով: Երկշոտ հաւերն իրանց քաղցը քուջուջը թողած, գլուխները կորացրած, ճանապարհի վրայից շտապով հտ էին փախչում: Իսկ քաջ ու վառաշոտ արագադը ճանապարհի ափին դէմքը դէպի եկող ձիւտները կանգնած, վիզը խրոխտաբար մեկնած, խիստ բարկացած կռկոացնում էր:

Ձիւտներից մէկը, որ միւսներից մի քանի

քայլ առաջ էր գնում, եւրոպական հագուստով էր: մինչդեռ զլխին կրում էր կոկարդաւոր ֆուրաժկա և ուսի վրայից քարշ արած ունէր մի արծաթապատ թուր: Միւս ձիւտները պոլիցական թուրք չափարներ էին: Նրանք իջան Տէր-Ջաքարի դռանը:

Որովհետեւ միայն Տէր-Ջաքարն ունէր կիսա-եւրոպական ձևի սենեակներ, ուստի գիւղն եկող ամեն մի աստիճանաւոր-պաշտօնեայ նրա սենեակներումն էր մնում: Իսկ այգպիսիներին ծախսը գիւղի հասարակութիւնն էր հոգում:

Նորեկ հիւրը թէև կոկարդաւոր ֆուրաժկա էր կրում ու ժամանակակից չինովնիկների պէս մօրուքից միմիայն կզակն էր ամելած, բայց նա չինովնիկ չէր: Նա X գիւղի զպրոցի աւագ ուսուցիչն էր: Ջատկական արձակուրդներից օգուտ քաղելով, նա մի փոքրիկ ճանապարհորդական պտոյտ էր կատարում: Տեղական պրիստաւը, ուսուցչի լաւ բարեկամը լինելով, չափարներին նրա տրամադրութեան տակ էր դրել, իր բարեկամի ճանապարհորդութիւնը փառաւոր անելու համար: Գիւղերում նրան չինովնիկի տեղ էին ընդունում:

Տէր-Ջաքարն այս դէպքից օգուտ քաղել ուզեց և նախօրօք ուսուցչի համաձայնութիւնն ստանալով՝ գիւղում լուր տարածեց, որ նորեկ աղան իբրեւ թէ մի զիւանբէզի է, որ իր խնդրի համաձայն ուղղակի նահանգապետից է ուղարկուած գիւղացիներից իրան հասանելիք փողերը ժողովելու: Ուսուցիչը մինչև անգամ ուրախացաւ Տէր-Ջաքարի հնարագիտութեան վրա: Իսկական զիւանբէզիները քիչ զու-

լում էին խեղճ գիւղացիների համար, մնացել էր որ կեղծ գիւտներէսներ էլ երեսն գային:

Տէր-Ջաքարը գիւղացիներին միշտ տոկոսով փող էր տալիս և տարէց տարի տոկոսի հետ մի բան էլ մայր գումարից էր ստանում, պարտքը գեղջելու համար: Բայց որովհետև նախընթաց տարին կարկուտն X գիւղի բոլոր արտերն ու այգիները ջարդել, փշացրել էր, ուստի տէր-հօր պարտապաններն այս անգամ նրան ոչինչ չէին վճարել իրանց պարտքերից:

Երբ ձիաւորներն իջան, արեգակը մուտքից դեռ բաւական բարձր էր: Այսպիսի դէպքերում գիւղացիք տոկոսութիւն ունէին յետ քս գումութեամբ խոնուելու Տէր-Ջաքարի դուռը, բայց այս անգամ բացի զգրից ոչ որ չերեցաւ. բոլորը հանդումն էին, որովհետև զարնանացանի ժամանակն էր: Գրիւրը «մեծ աղայի» ձին ման ածելուց ու կապելուց յետոյ վազեց մի հարեանի յարգամանից խոտ բերեց ձիաների համար: Աղան գգրին հրամայեց, որ տանուտէրին կանչի:

— Եթէ տանուտէրը տանն էր եղել, ինչպէս չէր վազիլ աղայի հրամանոց մօտ. նա հանդումն է,— յայտնեց գգրը:

Արդէն մութը պատել էր: Բուրալից գիշերը իր անսահման թեւերով սքողել էր երկիրը, և վառ աստղերը սիրատարափ աչքերով նայում էին երկրի վրա: Հանդից վերադարձող շինականների սայլերի ճրոնչոցը՝ շների հաջոցի հետ՝ բռնել էր ամբողջ գիւղը:

Տէր-Ջաքարի սենեակում երկայն թախտի վերեւի

ծայրում մութարայի վրա բազմած էր «մեծ աղէն», նրա կողքին՝ տէրոգորմեան ձեռքին՝ ծալապատիկ նստած էր Տէր-Ջաքարը, յետոյ աստիճանաբար դէպի ներքև՝ Տէր-Ջաքարի նորընծայ որդի Տէր-Քոսէն ու միւս վարժապետ որդին: Վերջինս Ն. հ. դըպրանոցի սաներից էր. նա իրանց սենեակներից մէկում մի քանի մանուկների հետ դասատուութեամբ էր պարապում: Նրանք թէյ էին խմում: Նրանց առջև, թախտի մէջ տեղը, փայտէ մոմակալի մէջ վառւում էր ճրագուի մոմը: Այդ այն ժամանակներումն էր, երբ գիւղերում թէ թէյի և թէ ճրագուի մոմի դորձածութիւնը կուտուրայի կատարելութիւններից մէկն էր համարում: X. գիւղում դեռ երկու տուն չկար, որ բաղդ ունենար այդ բարիքներից ունենալու: Տէր-Ջաքարի տանն էլ այդ առարկաները գործ էին ածում միմիայն մեծ աստիճան հիւրեր հկած դէպքերում: Ուրիշ ժամանակ ջուրը փոխարինում էր թէյին, իսկ ձիթի ճրագը՝ մոմին. նաւթի գոյութիւնը դեռ յայտնի չէր:

Հէնց այդ պահուն, պաշտօնական շղթան վիզը գցած, տեղն ու տեղը յարգանք դարձած, ներս մըտաւ տանուտէրը: Նա «մեծ աղին» լուռ զլուխ իջեցրեց, զոյգ քահանաներին էլ հագիւ լսելի ձայնով «օրհնեցէք տեարը» ասեց ու դռան մօտ մնած կանգնած:

— Տանուտէր, ինչու ես գիւղը թողնում ու հեռանում. դու պաշտօնի տէր մարդ ես, միշտ պէտք է տեղդ լինիս. գուցէ գիւղում ինչ է պատահում, ի՞նչպէս կարելի է այսպէս անփութ լինել:

— Էս մի հետը թողութիւն արա, աղա ջան,
ըրեխէրը տանը չէին, չթվորի համար հաց տարայ:

Յետոյ աղէն զրպանից մի ծալած թուղթ հա-
նելով՝ տուեց տանուտէրին ու հրամայեց, որ թղթի
միջի ցուցակազրած բոլոր մարդկանց հետեւեալ ա-
ռաւօտը իր մօտ բերի: Եւ բացատրեց, որ այդ մար-
դիկը Տէր-Ջաքարի պարտապաններն են ու ինքը պ.
նահանգապետից ուղարկուած է նրանց հաշիւները
վերջացնելու համար:

II

Տանուտէրը տուն վերադառնալուն պէս կանչել
տուեց տիրացու Անթանէսին. — գիւղում ամեն մի
փոքր ի շատէ զրել-կարդալ իմացող՝ զրազրի պաշ-
տօն էր կատարում: —

— Տիրացու Անթանէս, հալա էս թուղթը կարդա՛:
Նա բարձր ձայնով կարդաց մօտ քսան ազգա-
նուններ:

— Էդ անումնին միտդ կը պահես, — ասաց տա-
նուտէրը զգրին:

— Խի՛ չեմ պահիլ:

— Դէ հլա կենտ-կենտ ասա տնանք:

Գլիւրը ցուցակազրուած անունները բոլորը մի
առ մի կը կնեց, թէ և գրածի հետ համեմատելով մէ-
կը միւսից ետ ու առաջ էր ասում:

— Դէ գնա զրանց չիմնուն էլ իմացրո՛ւ, որ է-

գուց չութը (արօր) չգնան, առաւօտը վաղ գան
Տէր-Ջաքարի դուռը. ասա գումբերնատիցը դիւան-
բէզի ա եկել զրանց գործերը վերջացնելու:

Յետոյ աւելացրեց.

— Զլրուրանց Մաղոյին կասես, որ դիւանբէզու
ձիւաների համար երկու կօթ գարի դարկի. Մամա-
ջանանց Պօղոսին էլ կասես՝ երկու շալակ խոտ տանի:

Գլիւրը շարժուեց որ հեռանայ, բայց տանու-
տէրը կանգնեցրեց:

— Եւաշ տօ՛, ի՞նչ ես խտատում (շտապում), թող
պրծնեմ է: Միրէլանց Սուքիասին կասես՝ երկու լաւ
հաւ իստակել տայ. Խանվէլանց Բալասին կասես՝ եր-
կու քսան ձու բերի. Սղուզանց Մնացականին ասա
հինգ զրվանքա եղ բերի. Խարազանց Սարօին ասա՝
երեք թունգի լաւ գինի բերի. գուբանչի Էլիզբարին
էլ ասա՝ մի կէս թունգի լաւ քիշմիշի առադ բերի:

Այսպէս մինչև վերջը պատուիրեց, թէ Տէր-Ջա-
քարի ամեն մի պարտապան ի՞նչ էր բերելու:

— Դրանց հէրն էլ անիծած, իրանց գործի հա-
մար ա եկել դիւանբէզին, թող խարջն էլ իրանք
քաշեն, — բարկացած եզրափակեց տանուտէրը:

Ապա աւելացրեց.

— Թող գարին ու խոտը թուշ (ուղղակի) Տէր Ջա-
քարի տունը տանեն, համա ուտելիղէնն ու խմիչքը
մեր տունը բերեն, որ իմ ձեռքով իստակ սարքեմ՝
ըծու զարկեմ. թող տունը երկու լաւ հաց ու երկ-
երկու կտոր էլ պանիր բերի հետը:

Գլիւրն ուզում էր հեռանալ, տանուտէրը երկ-
րորդ անգամ կանգնեցրեց:

—Հա՛, ախրը Մարգարանց Մակարը մտիցս ընկաւ. նրան էլ ասա՛՛ երկու լաւ չաղ հաւ խտակեմ տայ ու հետն էլ երկու քսան ձու բերի:

—Ո՞րդիան բերի. երար էն քեսսըբին ո՞վ ա տուել:

—Ա՛խմախ, ախմախ որդի, որդիան ուզում ա՛ բերի. քու ինչ բանն ա. քի ինչ որ հրամայում եմ, դուն էն արա:

Գզիրը ծոծրակը բորելով դուրս եկաւ:

Տանուտէրի փորի ցաւն ուրիշ էր. Մարգարանց Մակարի հետ վաղուց էր թշնամացած ու միշտ առիթ էր որոնում իր վրէժը լուծելու: Բանն այն է, որ աղքատ Մակարի կինը՝ ջահէլ Սառան՝ գիւղում հռչակուած գեղեցկուհի էր, ինչպէս յաճախ էր պատահում քեսսիքներին հէնց իրանց դժբաղդութեան համար: Չատերն աչք ունէին թառան Սառայի վրա, բայց ոչ որ աջոգութիւն չէր գտնում: Ի միջի այլոց ներկայ տանուտէրն էլ, վաղուց աչք ունենալով Սառայի վրա, շատ էր աշխատել, շատ միջոցներ էր գործ դրել, բայց անաջող: Մի երեկոյ էլ, երբ Սառան կուժն ուսին աղբիւրից վերադառնալիս էր եղել, տանուտէրացուն դարան մտած տեղից նրա ազդրից բռնել էր: Սառան եղելութիւնը իր ամուսնուն յայտնում է: Մակարը համարձակութիւն է ունենում իր պատիւը շօշափողին դէմ առ դէմ հայհոյանքներ ու սպառնալիքներ տալ: Ահա այն օրից տանուտէրի թեկնածուն Մակարի անունն էլ աւելացրել էր այն մի շարք անունների վրա՝, որոնցից զանազան առիթներով վրէժ ունէր լուծելու, երբ արանձնած կրկինէր տանուտէրի պաշտօնը:

Երբ տիրացու Անթանէսը «բարի գիշեր» ասելով ուզում էր դուրս գալ, տանուտէրը նրան ասաց.

— Տիրացու Անթանէս, քու հարեան Մոսնանց Սոսնին ասա՛ թող առաւօտը մի լաւ թոխի բերի իբր սուրուիցը (հօտ), հախը ես կըտամ. ամօթ ա, գեղի կողմից էլ հարկաւոր ա պատիւ տալ դիւանբէգուն:

Բայց դիւանբէգու գնալուց յետոյ, տանուտէրը շինական դատարանի ծախսերի գրքում մի ուրիշ տիրացուի գրել տուեց հետեւեալ տողերը. «Տէր-Չաբարի գործերի խաթրու եկած դիւանբէգու և իր եսաուկների համար խարջեցի՝ թոխու, գինի-արաղի և այլն՝ քսան ու երեք մանէթ, երկու արասի»:

Տիրացու Անթանէսի գնալուց շատ չանցած՝ սկսեցին տեղալ տանուտէրի տունը մորթած հաւեր, գինի, արաղ, իւղ, ձու, սլանիր, թխած հացեր և այլն: Տանուտէրն այդ բոլոր բարիքը բաժանեց երեք հաւասար մասերի ու մի մասը գզրի ձեռքով ուղարկելով Տէր-Չաբարի տունը, երկու մասը պահեց իրան համար:

III.

Հետեւեալ առաւօտ ծեր Չատին՝ դաղի զագաթի ետևից արևի ոսկէ ճառագայթների առաջին ճաճանչները դեռ նոր էին սկսել շողշողալ և անհոգ ճնճողւկներն ուրախ ծլվլոցով ողջունում էին նոր բացւող առաւօտը, որ Տէր-Չաբարին պարտապան գիւ-

դացրնները լցուեցին նրա տան բակը: Աղա դիւան-
քէգին գեռ անուշ բնով բնած էր: Երկար սպասե-
ցին նրանք:

Շատ ուշ էր. արեգակը իր ելքից բաւական բար-
ձրացել էր, որ գէնք ու ասպարուս կորած չափար-
ները մտրակները բռնած՝ գիւղացիներին ներս կան-
չեցին:

Ահ ու դողով, սպրդնաժ գէմքերով, մէկը միւսի
ետեից անագին փափախները կռնատակներին դրած,
ներս մտան նրանք, դիւանքէգուն լուռ գլուխ իջե-
ցրին ու դռնից մօտիկ՝ պատի երկարութեամբ շար-
ուեցին:

Սկզբում դիւանքէգուն գէմքի բարի արտայայտու-
թիւնը շուտով փարատեց գիւղացիների երկիւղը:
Մանաւանդ երբ նա իր ախորժալուր ձայնով սկսեց
կարգաւ նրանց անուանացուցակը՝ նրանց այնպէս
թուաց, որ իբրեւ սովորական զազան դիւանքէգուն
հետ չէր իրանց գործը:

Սակայն երբ նա, ընդհանուր ընթերցումը վեր-
ջացնելուց յետոյ, սկսեց գիւղացիներին հերթով ա-
ռաջ կանչել, մի ըրոպէի մէջ նրա ձայնը փոխուել էր
ու նրա գէմքն այնպիսի սարսափ էր ազդում, որ
գիւղացիների թուրը ցամաքեց: Նրանք սոսկալով ըզ-
գացին, որ նա մի ըրոպէ առաջ տեսած «լաւ մարդ»-ը
չէր: Զգացին, որ այժմ իրանց գործն իսկական դի-
ւանքէգուն հետ է, այն յայտնի դիւանքէգուն, որ ռոգ-
գով մարդկանց կաշին պոկում էր, որը ոչ սիրտ
ուներ, ոչ խիղճ:

Քանի գեռ հաշտարար գատտ անները գոյու-

թիւն չունէին, այն ժամանակ ամեն մի գաւառի
գործերը վճռում էր դիւանքէգի (участковый зас-
датель) անունով պաշտօնեան: Սարսափելի էր նրա
դատաստանը. վկաների ցուցմունք, գործի մանրա-
մասն բնութիւն չ'կար: Ամեն մի դատարկ բանի
համար ռոգգին ու ֆալախկան պատրաստ էր:

Իմ այս փորձիկ պատմութեան օրերում թէև
այլևս դիւանքէգիների գոյութիւնը չ'կար, բայց ա-
մեն մի պրիստաւ, ամեն մի գաւառապետ նոյն ան-
դթութիւններն էր գործ դնում ռամիկ գիւղացիներ-
ի վերաբերմամբ, ինչ որ նախկին դիւանքէգիները:

Թէպէտ մօտաւորապէս 8—9 տարի կ'լինէր, որ
ողորմած Կայսր Ալէքսանդր Բ.-ի շնորհիւ հաս-
տատուած էին հաշտարար գատտանները, բայց
տղէտ գիւղացիք, ըստ սովորութեան, իրանց
գործերի համար դարձեալ դիմում էին պրիստանե-
րին ու գաւառապետներին: Վերջիններս, ինչպէս
ասացինք, գործ էին դնում պատժի հին բարբարոս
եղանակները: Արդարադատ օրէնքը նոր էր, իսկ
գործադրողները գեռ հին սերունդի ներկայացուցիչ-
ներէից էին:

Ճօրտ ու պարոնութեան ազդեցութիւնն անգամ
գեռ չէր անհետացել գիւղերից: Ճիպոտի, ռոգգուն
ձայնը, աղա—դիւանքէգիների սարսափ ազդող բը-
ղաւոյն ու հայհոյանքների տարափը գեռ հնչում էին
օդի մէջ:

Ազատարար Կայսրը հեռու էր, շատ հեռու. նը-
րա զթոտ աչքերը չէին տեսնում իր հաւատարիմ
հպատակների անտեղի տանջանքները: Նրա մար-

դասէր սիրտը չէր զգում շինականի հեծեծանքն ու հառաչանքը:

Ժամանակներն այնպէս էին: X գիւղի զպրօցի աւագ ուսուցիչը մի ուսում առած մարդ էր, բայց նա էլ չ'կարողացաւ իրան գերծ պահել ժամանակի խաւար ազդեցութիւնից:

Այդտեղ ներկայ էր և ինքը Տէր-Զաքարը: Նա գիւղացիների վրա պակաս սարսափ չէր ազդում. նրա սև նօսը միրուքով, ոսկրոտ, մոյզ դեղնագոյն դէմքը, դաժան ու անշարժ աչքերն անգուլթ բրմապետի տպաւորութիւն էին անում: Ներկայ էր նրա նորընծայ որդին: Իսկ կից սենեակում նրա վարժապետ որդին աշակերտների հետ պարապում էր:

— Մարտիրոս Չուլբուրեանց, — առաձգական ձայնով կանչեց գիւանբէգին:

— Ես եմ, — առաջ գալով ասաց Մարտիրոսը մի կարճահասակ, նեղլիկ դէմքով և փոքրիկ, շարժուն սև աչքերով ու սև բեղերով գիւղացի, որ ներկայ եղող գիւղացիներից ամենահամարձակախօսն էր:

— Տէրտէրի պարտքը ինչո՞ւ չես տալի:

— Աղա գիւանբէգի, տէրտէրին ինչ եմ պարտ, որ չեմ տալի:

«Աղա գիւանբէգի» խօսքերը պ. ուսուցչին զայրացրին. նրան թուաց, թէ Մարտիրոսն իրան ծագում է: Իրաւ՝ Մարտիրոսն անձնապատան լեզուով էր խօսում. եթէ նա «աղա ջան» ասէր, գուցէ գիւանբէգին այնպէս չ'զայրանար:

— Ոնց թէ ինչ ես պարտ, հապա այս յիսուն քուրբու թամասուրը (մուրհակը) ումն է:

— Իմն ա, աղա գիւանբէգի, անգամ դիր՝ ասեմ. արանից տասը տարէն աղաք տէրտէրիցը սֆթա առել եմ տասը մանէթ փող. էդ փողը շահ ու գլուխ անելով, հինգ տարէն վրա հասել ա հինգ թումանի, մշվանց էդ վախտն էլ տարէնը տասը-տասնու հինգ օր մշակութին եմ արել նրա արտերումն ու բաղումը. էդ էլ 'սկի հետաք չի արուել:

— Ինչո՞ւ չէր հաշիւ արել:

— Դէ մեր գեղական օրէնք ա, չունքի որ նա մեր նեղ օրը մեզ ձեռն ա բռնում (օգնում է) փողով, լ'ենք էլ փողն ու գեօրա մշակ ենք տալի:

— Կարաբաղին կարդալով գլուխ տանիլ մի', դու էն ասա թէ՛ ինչո՞ւ չես պարտք վճարում, — բարկացած գոչեց գիւանբէգին:

Մարտիրոսի սիրտը թունդ ելաւ: Նա թուրք կուլ տուեց ու նորից շարունակեց.

— Դէ ասում եմ րի՛, ըժու որ հինգ թուման զառու հա, տարեցտարի իմ պարտքը թեթեացրի. մի տարի երկու թաղար ցորեն տուի, — շահումն էլ ամեն տարի քսան օր մշակութին եմ արել. — էքսի (հետեւալ) տարին էլ, մի լաւ աչառ (ցուլ) ունէի, տէրտէրն եկաւ կալս կասելիս լծան տակիցը հզ առաւ տարաւ թէ՛ «մի թայ աչառս սատկեց, կամը մնացել ա կալի զրադին պարապ»: Ասի՛ տէրտէր ջան, դուն հլա, Աստոծ տուել ա, ուրիշ եգնիր շատ ունիս, իմը էդ մի լուծ աչառն ա, էդ էլ որ տանում ես, բա՛ ես ընչո՞վ պէտք ա իմ կալը կասեմ: «Բա փողը տանելիս լաւ էր» — ասաւ ու տարաւ:

Դիւանբէգին անհամբերութեան շարժում գոր-

ծեց, բայց Մարտիրոսը ոգևորուած շարունակում էր:

— Զեռս ծոցումս գնացել եմ դուռնէ դուռն ընկել, շահով տասնուհինգ մանէթ փող ճարել, մի նոր աշառ առել ու...

Բայց այստեղ Մարտիրոսի խօսքը կիսատ՝ բերանումը մնաց. դիւանբէզին նրա բոլոր պատմութեան ժամանակ հետզհետէ բորբոքուելով՝ մէկ էլ յանկարծ բռնկուեց ու չափարներին հրամայեց, որ ռոզզի անեն: Չափարները Մարտիրոսին թախտի վրա երեսիվայր պառկացրին ու գերեմաստի ուռից արդէն պատրաստած ճիւղտների կապոցներով սկսեցին հաւասար չափով հարուածել: Դիւանբէզուն չափարների հարուածելը թոյլ թուաց. նա ճիւղտների կապոցներից մէկը խլելով, սկսեց ինքը ուժգին թափով՝ արագ-արագ հարուածել, մինչև արիւնաթաթախ գոհն ուշաթափուեց. նրան դուրս տարան: Այդ ժամանակ դիւանբէզու գանգուր մագերը ծածկել էին նրա ճակատը, և նրա դէմքը մի գարհուրելի արտայայտութիւն էր ստացել: Ասում էին, նա իր դպրոցի աշակերտներին էլ էր այդպէս ռոզզի անում: Միւս գիւղացիների արիւնը երակներում ցամաքել էր:

— Դո՛ւք ինչ էք ասում:

— Ի՛նչ պտենք ասիլ, աղա ջան, մեր պարտքն ա՛՛ կտանք ըլի, դէ էն անտէր անանումը (կարկուտ) մեր երեսը սև արեց, հնց անենք, միաբերան ասացին գիւղացիները:

Թէ՛ն նրանք բոլորն էլ Մարտիրոսի նման ասելիք ունէին, բայց երկիւղից ծածկեցին:

— Սրանց բոլորին էլ մէկ մէկ ռոզզի արէք, — հրամայեց դիւանբէզին չափարներին:

Ռոզզու շրջափոքը դուրսն էլ լսելի էր. կից սենեակում սովորող երեխաները կիսաբաց դռնից դադտագողի նայում էին այդ տեսարանին ու նրստած տեղները աւելի ևս կծկվում ու կուչ ու հուփ զալի:

Ռոզզու գործողութիւնը վերջանալուց յետոյ, դիւանբէզին տանուտէրին հրամայեց, որ իր զնալուց յետոյ հասարակութիւնից երեք հասկացող մարդ ընտրի և պարտապան գիւղացիների ունեցած կարողութիւնը նրանց զնահատել տալով՝ իւր, տայ Տէր-Ջաբարի պարտքումը:

Գիւղացիներին արձակելուց ու նրանց միամտութեան վրա ծաղրաբանելով՝ ճաշի ճոխ սեղանն ուրախ տրամադրութեան տակ վայելելուց յետոյ, աղա դիւանբէզին իր չափարների հետ ձիաները հեծան ու մեկնեցին գիւղից:

IV.

Դիւանբէզու զնալուց յետոյ անցել էր մի շաբաթ:

Օրը կիրակի էր. մի պարզ ու արեգակնային օր:

Օ. գիւղի բոլոր բնակիչները, ծեր ու մանուկ, այր և կին գարնանային մեղուի նման տներից դուրս էին թափուել: Եթէ մի օտարական գիւղը մտնելու

լինէր, կըկարծէր թէ երկրաշարժի նման մի արտակարգ դէպք է պատահել: Այդ օրը տանուտէրը խիստ եռանդով կատարում էր դիւանբէգու հրամանը: Պարտապան գիւղացիների ունեցած—չունեցածը հրապարակ էր հանել աճուրդի: Այդտեղ կային լծի եզներ, հորթը տակին կովեր, ոչխարներ, խալիչաներ, կապերտներ, պղնձէ կաթսաներ, պնակներ և մինչև անգամ սայլերով խոտ:

—Ախր, գլաւին ջան, եզներս որ տանում էր, բա չուխս ընչով պէտք ա վարեմ:

—Քորիամէր կովս որ տանում էր, բա ըրելէքս ընչով պէտք ա պահեմ:

—Գումբերնատի հրաման ա, ես ինչ անեմ,—սառը եղանակով պատասխանում էր տանուտէրը:

—Բա էլ ուրիշ օրէնք ու դատաստան չ'կայ. եանի հօ մեր պարտքը ուրանում չենք. թողէք իր շահովը մշվանց աշունքը մնայ ըլի: Եանի հօ գիտէք որ ռանչպարի բանը նոր ա գուս գալի, Աստոծ կըտայ՝ հացը կըգայ, կտանք, կըպըծնունք,—բողոքում էր մի ուրիշը:

Մակայն նրանց բողոքին ուշադրութիւն դարձնող չ'կար: Երբ մէկի եզը կամ կովը գոմից բշում էին, տան պառաւ կանայք դուրս էին գալիս ու յետեից դէպի երկինք հող ծուլ անում, այսպէս ասելով. «Աստոծ, դուն Տէր-Ջաքարի տունը բանդես, ոնց որ նա մեր տունը բանդեց»: Հրապարակում այդ ապրանքներից կամ իրեղէնից գնող չ'եղաւ, ուստի բոլորն ուղարկուեց Տէր-Ջաքարի տունը:

Երբ տանուտէրն ու իր ընտրած մարդիկը մը-

տան Մարգարանց Մակարի տունը, պատերից աղբառութեան սառը շունչ փչեց: Օրթօջախի շուրջը, մի բրբրուած թաղերի կտորի վրա, տխուր-մշխուր նստած էին երկու ամուսինները. նրանց միակ ծածկեր փոքրիկի օրօրոցը դրած էր պատի տակ: Մըտնողներն աչքերով տան շորս կողմը չափեցին, բայց այնպիսի ոչինչ չ'կար, որ նրանց ուշքը գրաւէր: Թաքերի վրա մի պղնձէ փոքրիկ կոթաւոր էր դրած, դրա մօտ էլ մի կաւէ մաթրաթ, որից ամուսինները կերակուր էին ուտում միասին: Մի փոքրիկ կողով էլ սեան վրայից էր քարշ արած, մէջը փայտէ զըղալներով: Դրան հետևում ջրի փայտէ կուժն էր ցըցած՝ մօտն էլ մի փոքրիկ կաւէ թաս—ջուր խմելու համար: Տան մի անկիւնում բարձափայտի (բարձակալ) վրա մի բրբրուած ձորձ կար գցած, որն ամուսինների համար վերմակի տեղ էր ծառայում, էլ ուրիշ ոչինչ: Գլխատան երդկից ուղղակի վերևից լրբէ առատութեամբ ներս թափուող լոյսի շնորհիւ ամբողջ տան մէջն այնպէս պարզ երևում էր, որ ոչինչ չէր կարելի թագցնել:

Տանուտէրը հրամայեց, որ Մակարին տանեն «կանցալարի» (դատարան) դուռը: Վատ տեսարանների սիրահար գիւղացիք լցրել էին դատարանի դուռը:

—Մակար, — ասաց տանուտէրը, — չիմն (ամենբըն) էլ իրանց պարտքը տուին, մենակ դուն մնացիր. պըծի, որդիանց որ ա՝ ճարի, տուր, թէ չէ տէրութենի հրաման ա, բի էս սհաթին բերթը կըղարկեմ:

—Տօ անաստոծ, որ բերդը դարկես, ո՞րդիան կ'տամ, դէ վաղա (ժամանակ) տո՛ւր, որ աշխատեմ ու տամ է՛:

—Ի՛նչ, ի՛նչ, անաստոծ: Այ բի անաստոծ,— բարկութիւնից փրփրած բերանով ասաց տանուտէրըն ու սկսեց ճիպոտով կարկուտի պէս հարուածել Մակարի գլխին, ոտին, բիթ ու պոնկին... Ամբոխը լուռ ականատեսի դեր էր կատարում, կարծես անշունչ բարէ արձանների մի կոյտ լինէր. ոչ որի մըտքից անգամ չէր անցնում միջամտելու: Նրանք մի տեսակ վայրենի բաւականութիւն էին զգում այդ վայրենի տեսարանից: Մինչև անգամ խրախուսողներ էլ եղան:

— Հը՛նիս, հրէդ է, կոներիդ մատաղ, դիժ գլաւին, համա շրքիպացնում ա հա՛:

Երբ Մակարը գետին գլորուեց, այն ժամանակ միայն տանուտէրը դադարեց դարկելուց: Մակարին երկու ուժեղ երիտասարդներ շալակով տարան իրանց տուն:

Օրթօջախի մօտ պառկած էր Մակարը և ծանրը շնչում էր, իսկ Սառան, նրա գլխավերեք նստած, խորասուզուած էր տխուր ու ծանր մտքերի մէջ:

Արդէն երեկոյ էր: Մի կանացի ծանօթ ձայն երգկից Սառային դուրս կանչեց: Սառան իսկոյն դուրս եկաւ:

— Բարի՛ ըրիկուն բի, Սառա ջան,— ասաց նորեկը:

— Բարին որդուդ արեին, խէր ըլի, նանի ջան, էս չախին ի՛նչ խաբար:

— Խէր ա խէր, ասի՛ համ Մակարիցը մի խա-

բար իմանամ, համ էլ ինձ նորընծէն ա բու կուշտը դարկել, — ձայնը ցածրացնելով ասաց պառաւը:

Սառան մի հարցական հայեացք գցեց պառաւի դէմքին:

— Ասում ա,— շարունակեց պառաւը,— Սառան որ ուզի, համ իր մարդի թամասուրը պատուել կըտայ, համ էլ օրէց դէնը իրանց ապրուստը կըլաւացնի:

— Ո՞նց թէ,— գրեթէ միամտաբար հարցրեց Սառան:

— Մթա թէ գլխի չես ընկնում...

Այս խօսքերի վրա Սառայի սրտում կասկած ծագեց:

— Ես բան չեմ հասկանում, նանի,— անհամբերութեամբ ասաց նա,— թէ կարգին բան ունիս տսելու, պարզ ասա՛ իմանամ:

— Ա՛ղջի, էն ա էն մարդը բեզանից գլուխ ա ուզում ըլի... թէ որ դարուլ կանես, մարդիդ թամասուրն էլ կըպատուի ու բի էլ ապրուստ կըտայ:

Սառայի վրա կարծես յանկարծակի սառը ջուր մաղեցին. նա ուզում էր խօսել, բայց լեզուն կարկամել էր բուն բարկութիւնից: Պառաւը ոչինչ չ'նկատելով, նորից շարունակեց.


— Թամասուրի պատուուելու մասին ոչով բան չի խիալ անիլ (կասկածել), կասենք՝ տէրտէրը իր հոգու համար ա էդ լաւութիւնը արել. ըժու ըստիանընդիան մանածացու կըբերեմ, կար կըբերեմ, կասես՝ հախով (վարձով) եմ շինում, որ մարդդ ըսկի գլխի չընկնի, որ նորընծէն բի փող ա տալի:

—Ա՛րաւթառ, դէ հէրիբ էլաւ է. քանի շունչդ բերանումդ ա կորի, որ քարը վեր կունեմ, գլուխդ կըճղեմ: Հողե՛մ ես նորընծի գլուխն էլ ու խաբար բերողինն էլ:

Պառաւր զգաց Սառայի բարկութեան վատ հետեանքն ու սուս ու փուս անյայտացաւ գիշերային մթութեան մէջ:

Մակարի դրութիւնը գնալով ծանրանում էր: Նա զառանցում էր. ասում էին՝ «սարսաղլամիշ» է եղել (խելազարուել է):

Փորձուած մարդիկ պնդում էին, որ նա ապրիլ չի:



ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻԸ

I.

1891 թուականն էր: Օ. գիւղին սարսափելի իրարանցում էր տիրել. — լացի, շիւանի, հայհոյանքների ու անէծքների աղմուկը ականջ էր խլացնում: Մարդիկ էին սպանուած ու վիրաւորուած: «Ո՛վ էր սպանել, ո՞րտեղ, ինչ պատճառով», այս հարցերն էին տալիս իրար: «Էն տնաքանդ օսերն են էլի. անցեալ տարի մէկին սպանեցին — մարսեցին, հիմա էլ երկուսին են սպանել ու մի քանիսին էլ վիրաւորել, իհարկէ էլի կ'մարսեն», պատասխանում էին միւսները:

— Ի՞նչ օսեր. աւագակներ են:

— Աւագակներից վատթար են, Լօռիս Մելիքովի անտառապահներն են:

— Բայց անտառապահները ինչ իրաւունքով պէտք է մարդ սպանեն. ասում ես՝ մէկին էլ անցեալ տարի սպանեցին. հապա չ'զանգատուեցիր:

— Ինչպէս չ'զանգատուեցինք, եղբայր, պրիստան ու քննիչը՝ եկան քննութիւն արեցին, գործը

գնաց պրօֆուրօրին, այնտեղից էլ Օկրուժնի սուդին ու... օսերին արդարացրին. Լօօիս-Մելիքովները նրանց օգնեցին, իսկ մենք ինչ կարող էինք անել. լեզու չ'կայ, փող չ'կայ, պաշտպան չ'կայ:

— Միթէ դոնէ վկաներ չունէիր, եթէ վկաներ էիր ունեցել, ոչ մի Լօօիս-Մելիքովի օգնութիւն մարդասպաններին չէր կարող արդարացնել:

— Վկաներ ունէինք, ինչպէս չէ. հէնց բանն էլ այդ է, որ մեր վկաներին կաշառել էին. ախր մատնիչ Յուդաները մեր միջից էլ անպակաս են. Յուդան գոնէ զղջաց, իսկ մեր Յուդաները դեռ պարծենում էլ են իրանց կատարած սև գործերի համար:

— Երբ որ այդպէս է, ինչո՞ւ էք նրանց անտառից փայտ բերում, միթէ արքունի անտառ չ'կայ:

— Ո՛չ, մենք նրանց անտառից հօ չենք բերում. բայց արքունի անտառը գնալու համար նրանց անտառով պէտք է անցնել և ահա օսերը դէպքից օգուտ քաղելով, ամեն մի գոյգ լծկանի համար մի մանէթ ճանապարհի վարձ են առնում, պլոկում են մեզ. ասենք իրանց տիրոջն էլ են պլոկում—համ ուշ անտառը կոտորել են տալիս ու ծախում իրանց օգտին, համ սուտ զանգատներ են տալիս թէ իբրև մենք ենք զոդանում:

— Հապա ինչու իրանց՝ Լօօիս-Մելիքովներին չէք բողոքում:

— Բողոքելը ճրին ես ասում, եզրայր. անցեալ տարի Լօօիս Մելիքովի որդիներից մէկը ձիով մեր գիւղի միջով անցնում էր. ամբողջ հասարակութիւնս դիմաւորեցինք, աղաչանք-պաղատանք արինք, որ

թո՛ղ տարեկան մի որոշ հարկ դնի մեզ վրա իր ճանապարհի համար (թէպէտ ճանապարհն էլ մեր շինածըն է) և օսերին սաստի, որ մարդ չ'սպանեն: «Լաւ են անում, ասաց ուսերէն, ես եմ հրամայել, որ ըսպանեն». ու մեզ մտրակով մի լաւ ծեծելով հեռացաւ: Եղբայր, այդ հողատէրերից ուղղակի ցաւի մէջ ենք մնացել. հին ժամանակներում ահագին արքունի հողաբաժիններ ունէր գիւղը. լվլվալով եօլա էինք դնում, հիմա տեղիցը վաղ ելնողը հողատէր ու կապալառու է դարձել ու մեր արիւնը խմում է: Շատ տեղեր էլ լեսնիչին է տիրապետել և գանձարանի օգտին կապալով է տալիս գիւղացիների նրանց վաղեմի հողաբաժինները. հարկն ու խարջը միենոյն կարգով առնում են: Դրանք դէնը մնան, ինչ կասէք մեր այն հասարակ գիւղացի հարեանին, որը երէկ տրեխներով էր ման գալիս, իսկ այսօր չէքմա է հագել, վիզը հաստացրել, փորը ուռեցրել ու պլոկում է մեզ: Նա սկզբներում թուրք բէգերից կապալով էր հողեր վերցրել. բայց տեսակ տեսակ ինքնահնար տուրքեր աւելացնելով անպաշտպան ռանչպարի վրա, այնքան հարստութիւն դիզեց, որ այն հողերը բէգերից գնեց ու ինքը դարձաւ պոմէշչիք: «Ա՛յ գիտի տէր-Բարսեղ հա՛, ո՛ր ես, գլուխդ մի բարձրացրու տես ինչներ կան բեզանից յետոյ է՛», վրա բերեց մի ծերունի, որ նախկին երկու խօսակիցների մօտ կանգնած էր:

— Ի՛նչ մարդ էր տէր-Բարսեղը, բիձայ, որ այդպէս ախր բաշեցիր, հարցրին երկու նախկին խօսակիցները:

—Տէր-Բարսեղը էն մարդն էր, որ եթէ կենդանի էր եղել, էդ քո Լօռիս Մելիքովի տղին թիբա թիբա կանէր. նա շատ բարի մարդ էր, համա անօրէն բան տեսնելիս՝ աշխարհ էր զարհուրացնում: Ինքը բահանայ էր, համա ուսում չունէր. միայն իր քաղցը ձայնի համար էին ձեռնադրել, հէնց ուղղակի չօքանութիւնից բերել էին ու ձեռնադրել. համա ձայն եմ ասում, է՛. նա որ շարական էր ասում, ժամի ժողովուրդը ջուր էր կտրում, մանաւանդ տօն օրերին: Տեսքով էլ գեղեցիկ-ղուրեկան մարդ էր ու շատ ուժեղ:

—Բիձայ, դու այն պատմիր թէ տէր-Բարսեղը ինչ գործեր ունի կատարած:

—Հա, տէր-Բարսեղը լաւ դովլաթի տէր մարդ էր. նրա դուռը թէ աղքատի՝ և թէ հարուստի առաջ միշտ բաց էր. ինքը թէպէտ ողորմող ու օգնող մարդ էր, բայց ծոյլ մարդկանց չէր սիրում: Ինչ տարի որ երաշտի կամ կարկուտի պատճառով հացի բերքը սակաւ էր լինում, նա ինքը մեր ամբողջ հասարակութեան հարկերը վճարում էր եղած ժամանակ ետ ստանալու պայմանով առանց տոկոսի. կամ եթէ սովի տարի էր լինում՝ ժողովրդին հաց էր բաժանում նորով. չունեորենքին առանց շահի, իսկ ունեւորենքին՝ շահով: Նա ժողովրդին էր սիրում, ժողովուրդն էլ նրան էր սիրում: Ում հիւանդը գժուարանում էր, տէր-Բարսեղին էին կանչում սրբութիւն տալու, որովհետեւ նրա ձեռքը թեթեւ էր և հիւանդը անպատճառ առողջանում էր: Նրա օրով մեր գիւղում հիմիկուան պէս խռովութիւններ չ'կային— նը-

րա շնորհիւ ամենքն էլ հաշտ էին իրար հետ ու սիրով. այդ պատճառով էլ այն ժամանակ խէր ու բարարեաթ կար: Փոքր ինչ շունչ քաշելուց յետոյ, ծերուկը շարունակեց:

—Ողորմածահողի մեծ Լօռիս Մելիքովը—այն ժամանակ մեծաւոր էր (սպա),—մի անգամ մեր գիւղըն եկաւ, կօռով ձի էր ուղում, որ գնայ Զալալօղլի. ամբան հնձի թունդ ժամանակն էր. գիւղում ձի չը կար. սա սկսեց քեօխվին մտրակով ծեծել.—հէնց այդ ընդէին տէր-Բարսեղը վրա հասաւ, կռիցը բռնեց ու թէ՛ «Միխայիլ Տարիելիչ, ասաց, ինքդ հայ ու խելօք մարդ, ինչո՞ւ ես այդ գիւղացուն ծեծում»: «Ի՞նչ անեմ, տէր-հայր, ձի չեն տալիս, իսկ ես թագաւորական գործով եմ գնում ու շտապում եմ»: Համա տեսանք, որ տէրտէրիցը ամաչեց: Յետոյ տէր-Բարսեղը նրան հրաւիրեց իր տուն, լաւ պատիւ տուեց ու իր սեփական ձիով ճանփա գցեց: Ասում էին, որ Լօռիս-Մելիքովը երեք անգամ տէրտէրի աջը համբուրել էր, թողութիւն խնդրել քեօխվին ծեծելու համար:

II.

—Մի անգամ—շարունակեց ծերունին—մեր գիւղը մի չինովնիկ էր եկել: Ինչպէս սովորութիւն կար այն ժամանակ, ամեն մի տուն մի հաւ ու երկու հաց տարան նրա համար: Մի քեասիր մարդ էլ դարե-

խառը հաց էր տարել, որի համար աղա չինովնիկը նրան մի լաւ ծեծելուց յետոյ՝ բանտ էր նստացրել։ Խաբարը հասել էր տէր-Բարսեղին։ մին էլ տեսանք՝ արծաթազուլիս դաւազանը ձեռքին եկաւ։ Չինովնիկը տան առջև ման էր գալիս, խալխն էլ կտրան վրա թիքն էր տուած (ժողովուած)։ «Պարոն չինովնիկ, այս հացերը ինչո՞ւ չես վերցնում, ասաց տէրտէրը, թէ որ ես այդ գարեխառն հացից նշխարը եմ գործում և սուրբ մասը շինում՝ դու լայեղ չես անում ուտել։ կամ թէ ի՞նչ իրաւունքով ես իմ ժողովրդին ծեծում ու բանտարկում և ի՞նչ իրաւունքով ես ժողովրդիցը հաւ ու հաց ժողովում, բանի որ կառավարութիւնը քեզ համ ռոճիկ է տալիս, համ ուտել-խմելու վարձ»։ «Դու ո՞վ ես, որ այդպէս մեծ մեծ խօսում ես, ա՛ տէրտէր, գնա՛ գլխիցս հեռացիր թէ չէ»... Սակայն չինովնիկի խօսքը բերանումը մընաց. տէրտէրի գաւազանի հարուածները լոցերին նրան։ «Ով ե՞մ, ով ե՞մ, քոս ես՝ չես տեսնում.— այս ժողովրդի հոգևոր հովին եմ, ո՞վ եմ»,—ասում էր տէրտէրն ու վարկում։ Չինովնիկը ուշքի գալով, իսկոյն ձի պահանջեց և տէրտէրին գանգատի սպառնալիք տալով՝ գիւղից հեռացաւ. սակայն ճանապարհից մեր գիւղացիների հետ խաբար էր արել թէ՛ «ձեր գիծ տէրտէրին ասացէք, թող ոչ նա գանգատ անի, ոչ էլ ես կանեմ, հիմա ինչ եղաւ, եղաւ»։

—Մի տարի մեր հարեան գիւղի ազնուականները մովրաւին կաշառք էին տուել, որ է՛ն սարը, որտեղ մենք եայլաղ ենք գնում, մեզանից խլեն իրանց տան։ Մովրաւը կազակներով ու չափարներով

գալիս է մեր քինէն, որ իբրեւ քօչացնի. մի բանի ջահիլ տղաներ ուզում են ընդդիմութիւն ցոյց տալ. դրանց կռները կապել է տալիս, ալաչուխները (վըրան) քանդում ու բռնաւորներին առաջը խառնած՝ վերագառնում դէպի Ջալալօղլի։ Տէր-Բարսեղի եղբայր Գրիգորն ու իրանց քեռի Դանէլանց Խէչօն— երկուսն էլ իզիթ մարդիկ էին, ողորմի իրանց, հէնց է՛ն սհաթին հասնելով ուր/ծը, իսկոյն մարդ են ուղարկում տէր-Բարսեղին իմացում տալու, իսկ իրանք Ջալալօղլու ճանփէն բռնում։ Տէր-Բարսեղը իր քեահլան ձին հեծած՝ այն պահուն է տեղ հասնում, որ Խէչօն ու Գրիգորը «աչքահանք»-ի ջրումը կազակների ու չափարների հետ կռուի են մտել, նրանք թրերով, սրանք դազանակներով։ Ասում են՝ մովրաւը որ տեսնում է տէրտէրը հասաւ, իսկոյն իր մարդկանց հրամայում է՝ *աստա՛վ, աստա՛վ* ու մեր բռնաւորներին թողնելով՝ փախչում են։

—Հապա գանգատ-բան չէր լինում, բիձայ։

—Ինչպէս չէ, հէնց այդ մովրաւը գանգատ էր տուել. տէր-Բարսեղին կանչեցին քաղաք. այն ժամանակ լուսահողի ներսէս կաթողիկոսն էլ քաղաքումըն էր։ Տէրտէրը արդարացել էր, ասելով որ մովրաւը տէրութեան հողերը պահպանելու փոխարէն մեզանից զօրով խլում է, ազնուականներին տալիս. առանց այն էլ, հողի սակաւութեան պատճառով իմ ժողովուրդը անտանիկ տանջանքներով է իր ապրուստը ճարում։ Մինչև անգամ իշխան Վօրօնցովը—ժամանակակից փոխարքան, մովրաւին պաշտօնից զրկում է ու մեր կաթողիկոսի միջոցով շնորհակալու-

թիւն յայտնում տէր-Բարսեղին. կաթողիկոսն ինքն էլ լանջախաչ է շնորհում տէրոտէրին: Իսկ տէրոտէրը Հոգեւոր տիրոջը խնդրում է, որ նա միջնորդէ, որպէս զի մովբաւին պաշտօնից շրջակեն, երեխանց տէր է, մեղր է, ասում է:

—Մի անգամ մովբաւից մեր քեօխովի վրա հրաման էր եկել, որ Դաւիթաւոնց Աղաջանին ուղարկի Տալալօղլի, ինչ որ գանգատի խաթեր: Աշնան ցանքի ժամանակն էր. մի առաւօտ Աղաջանը սայլը լըծած՝ պատրաստովում էր հանդը գնալ, երբ քեօխովէն երկու կաղակի հետ դուռը կտրեց ու մովբաւի հրամանը ցոյց տալով ստիպեց, որ գործը թողնի ու իսկոյն ճամփա ընկնի: Խեղճ Աղաջանը՝ աղաշանք, պապատանք, որ գոնէ թողնեն կիրակի օրը գնայ՝ չ'եղաւ: Քեօխովի փորի ցաւն էլ իմացանք, առաջուց կաշառք է լինում պահանջած Աղաջանից ու մերժում ստացած: Մախլաս, գլուխներդ ինչ ցաւացնեմ, խաբարը տարան տէր-Բարսեղին. նա հէնց այն ժամին հասաւ, որ քեօխովէն ու կաղակներից մէկը Աղաջանի սայլի եզները արձակում են: Իսկոյն ականջներիցը բռնեց, քաշեց լծի տակ ու մի եզի տեղը քեօխովին լծեց, միւսի տեղը կաղակին ու մի երկու արացի էլ խփեց ու թէ՛ «դէ քշէ, քշէ».—խալխը ծիծաղից ջուր կտրուեց: Յետոյ մի լաւ խայտառակեց քեօխովին նրա անխղճմտանք վարուելու համար: «Ճտապելու ինչ կայ, ասաց, էլի մովբաւի հրամանը թող կատարուի, միայն կիրակի օրն ուղարկի. մարդուն ինչո՞ւ ես սաղ տարէն ապրուստից զրկում»:

—Վերջացրիր, բիձայ:

—Ո՞րտեղից վերջացրի. բաներ շատ կան, ո՞ր մէկը պատմեմ, շատերն էլ մոռացել եմ. թողէ՛ք փորը ինչ շունչ քաշեմ, չիբուխս սարքեմ, յետոյ մինն էլ կ'պատմեմ ու կ'վերջացնեմ:

III.

—Կալերի թունդ ժամանակն էր. խաբար եկաւ թէ բերձէնները (յոյները) մտել են մեր գեղացի սնդռի Խէչումի «երկու երես» անունով հանդի փարախը—ուզում են տիրապետել: Այդ հանդը թէպէտ նրանց սահմանակից է, բայց տեղը թագաւորական է և աթաղան, բարաղան մեր նազելն (հողաբաժինը) է եղել: Այդ բերձէնները օտար աշխարհից եկովի խալխ են ու իբրեւ հանքագործների, տէրութիւնը դրանց առանց հարկի հող է տուել. բայց ինչ հանքագործներ, բան չունեմ, մի բանի պատաղիրներէից դատ՝ մնացողները գողեր ու արբեցողներ են:

—Հա՛, այն էի ասում, խաբարը հասնելուն պէս մի քանի իգիթ (քաջ, կտրիճ) տղամարդիկ՝ Աբաղանց Գրիգորը, Դանէլանց Խէչօն, Ասրոնց Ղուշաղամը իրանց ջահել—ջունուլի հետ տեղ են հասնում, այդ բերձէններին մի լաւ ջարդ են տալիս ու գոմերից դուրս քշում: Մեղչի Խէչումը մի յայտնի անունով մարդ էր, սաղ նահանգը նրան հօր տեղ էր պաշտում. էլ նրա պէս սնդռի չ'կար. իսանի կոտորուած, փշրուած ոտքի փթաց ոսկոռները բոլորովին

հանում էր՝ տեղը նոր սպանած շան ոսկոռ դնում ու մի-երկու ամսէն միջում այնպէս առողջացնում, որ կասէիր էլի առաջուան սաղ-սալամաթ մարդն է. հասարակ կոտրածները հօ՛ երեք օրումը. մի շաբթու-մը, շատ-շատ երկու շաբթումը սաղացնում էր:

— Բայց խօսքս կիսատ մնաց. — բերձէնները իրանց մորթումը չ'մնացին, Բօրչալուի դիւանբէգու տակը լցրին (կաշառեցին) ու մի օր նրան՝ մի սուրու կազակներով ու չափարներով բերին մեր դիւղը. այնպէս միտքս է ինչպէս այսօր. դիւանբէգին մի զարգանդ մարդ էր. բարձր հասակով, մեծ-մեծ ու զարհուրելի աչքերով, հաստ ու երկայն բեղերով. ամբողջ Բօրչալուի արենկեր թուրքերը նրա ձեռքին դառն էին դարձել: Նա իջած էր Օթարանց տանը. — ամեն մեր գիւղն եկող զուլլուղի մարդ նրանց տանն էր իջնում, որովհետեւ այն ժամանակ ամենալաւ տունը նրանցն էր: Դիւանբէգու հրամանով Խէչումին կանչեցին ու այդ սարի պէս մարդուն տան առաջ երեսնի-վայր պառկեցնելով՝ սկսեցին անդթաբար ու անամօթաբար ռոզզի տալ նախապէս մերկացրած մարմնին. ժողովուրդը իրանց կալ ու կուտը թողած՝ կտրան վրա ժողոված «թամաշա» էր անում: Խաբարը տէր-Բարսեղին էին հասցրել. ռոզզու թունդ ժամանակը, արծաթազուլիս գաւազանը ձեռքին տեղ հասաւ: Այն կաղնու քօթուկի պէս հաստ մարդը այնպէս էր թռած գալի՝ ինչպէս վիշապ. հասնելն և եթ կազակի ձեռքից ռոզզին խլեց, դէն շարտեց ու Խէչումի ուտից ամուր բռնելով մի ակնթարթում ոտքի կանգնեցրեց: Դիւանբէգին, որ դուրսը կանգնած էր,

յանկարծակի եկածի պէս շշկուեցաւ ու մնաց տեղըն ու տեղը սառած: Յետոյ տէրտէրը հարցրեց թէ ո՞ւմ հրամանովն են համարձակուել այս ժողովրդական նահապետի հետ այսպէս անպատուարար վարուելու: «Ա՛յ իմ հրամանով, կրծքին զարկելով ասաց դիւանբէգին և մի բայլ առաջ գալով՝ հարցրեց. — Իսկ քեզ ո՞վ է իմ գլխին քննիչ կարգել, դուն ո՞վ ես»: Երկուսն էլ խօսում էին թուրքերէն. տէրտէրը ռուսերէն չ'գիտէր. դիւանբէգին վրացի էր, համա թուրքերէն լաւ էր խօսում, համ էլ դէ՛ թուրքերէնը աւելի լաւ է սազում:

— Ես այս ժողովրդի հոգևոր հովին եմ, ասաց տէրտէրը, ձեռքը կտրան բազմութեան վրա մեկնելով. — Իսկ դուն ո՞վ ես կամ ինչ իրաւունքով ես այս պատուաւոր մարդուն ռոզզի տալի:

— Ե՛ս այս երկրի դիւանբէգին եմ, դիւանբէգին, հասկանո՞ւմ ես, լաւ ճանաչիր, կնեազ Անդրօնիկով կասեն ինձ. ասաւ ու կրծքին պինդ զարկեց:

— Յո՛յց տուր ղօկումէնտդ տեսնեմ, ասաց տէրտէրը, արդեօք դուն իսկական դիւանբէգին ես, թէ մի զաշաղ ես:

— Մի տեսէք, իմ իշխանութեան տակ գտնուող երկրում ո՞վ է ինձանից ղօկումենտ պահանջում:

— Ասենք իսկապէս դիւանբէգին ես, շատ բարի, ա՛ղա դիւանբէգի, բո գլխին ու արևին մատաղ, խընդրում եմ ասես թէ այս մարդուն ինչո՞ւ ես ռոզզի տալիս. եթէ սա մեղք ունի գործած, օրէնքով դատաստան անաւ. ախր չէ՞ որ սա բեզանից լաւ մարդ է. սա զոնէ ամբողջ նահանգի ժողովրդին օգուտ է

տալի, իսկ դձու: Դու ոչ ժողովրդին ես օգուտ տալի, ոչ էլ այն տէրութեանը, որից ռոճիկ ես ստանում: Եթէ Խէչումը «երկուերես»-ի հանդուժը ապրանքի համար ձմեռանոց ունի, դրա համար թաղաւորին հարկ է տալի, իսկ դու բո գրպանի խաթեր ուզում ես ռահաթի հոգը խլել և տալ բոշբոզաղ (ծուլամորթ) բերձէններին, որոնք զանձարանին մի սև գրօշ էլ չեն տալի:

— Ե՛յ, բէշիշ, գլուխս քիչ ցաւացրու, ասաց զիւանբէզին, զնա՞ ռազ եղիր, թէ չէ թիքա-թիքա կանեմ:

— Ո՛նց թէ «ռազ եղիր», մնց թէ «թիքա-թիքա կանեմ». — ինչե՛ր ես խօսում. բեզ ասում եմ որ ես այս ժողովրդի հոգևոր հովիւն եմ ու բեզ նման գազանների գլուխը կ'ջարդեմ, չեմ թողնուլ որ իմ ժողովրդի միմազին անգամ գիպչեն, հասկանում ես թէ չէ:

Պէտք է տեսնէիր թէ ինչպէ՞ս երկուսն էլ յանկարծ կրակ կտրուեցին: Դեռ զիւանբէզին բեզերն էր կրծոտում, իսկ տէրտէրը շուտ-շուտ քիթը վեր-խմում. բայց տէրտէրի վերջին խօսքերի վրա զիւանբէզին թրի դաստիցը բռնելով՝ կէսը պատեանից դուրս էր քաշել արդէն, որ տէրտէրի գաւազանը՝ կրճի, զիւանբէզու արմունկին. թուրը հէնց այնպէս կիսահանել մնաց, ձեռքը թուլացաւ: Տէրտէրը շարունակում էր հարուածներ տալ, մինչև որ զիւանբէզին վայր ընկաւ: «Ես այս ժողովրդի հոգևոր հովիւն եմ, հոգևոր հովիւր», — ասում էր ու խփում:

— Ահա՛ թէ ինչ մարդ էր տէր-Բարսեղը — ժողովրդի հոգևոր հովիւր:

ԴՐԱԴԻՐ ԼԵՒՈՒՆԸ ԵՒ ԳԻՒՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

I.

Օ. զիւղացի պատանի Լևոնը Թիֆլիսից նոր էր վերադարձել իր հայրենի գիւղը: Նա ուսում առնելու նպատակով էր Թիֆլիս գնացել, բայց գուրկ լինելով թէ նիւթական միջոցից և թէ օգնողից, մի բանի ամիս գեղերելուց յետոյ վերադարձել էր գիւղը յուսախար:

Դրանից առաջ նա սովորել էր իրանց զիւղի տէրտէրի ու տիրացունների մօտ, ապա մի տարի էլ մօտակայ զիւղաբ. ծխական դպրոցում: Թիֆլիսում մնալուց նրա ստացած միակ օգուտն այն էր եղել, որ այնտեղ շատ զրբեր էր կարդացել:

Աշուն էր. զիւղացիք իրանց կալ ու կուտը վաճուց վերջացրել էին. այգեկուլմն էլ արդէն վերջանալուն մօտ էր. մի կողմից մաճար էին պատրաստում, միւս կողմից խաղողի քամած ողկոյզներից օղի քաշում: Կծպծան մաճարն ու ճաճի աւաղն իրար էին խառնուել, զիւղացիների գլխում խելք չէր մը-

նացել, խմում էին հարբում, իրար քիթ ու պոռնակ ջարդում:

Այդ կոպիտ տեսարանները արճճի պէս ճնշում էին պատանի Լևոնի սիրտը, բայց նրա ձեռքից ոչինչ չէր գալիս: Այդպէս չէր առաջ. Լևոնը յիշում էր իր մանկութեան օրերը, այն ժամանակ էլ կար գինի և օղի, բայց այն ժամանակ ամօթ կար: Ջահիլները բնաւ չէին խմում, հասակաւորներն էլ ջահիլների ներկայութեամբ իրանց հարբեցողութեան չէին տալիս: Հիմա աշխարհը խառնուել է, էլ ջահիլ ու ահիլ չկայ. բոլորն էլ հարբում են ու անպատկառ խօսքեր խօսում՝ ջահիլը ահիլի, ահիլը ջահիլի մօտ:

Այդ ժամանակ Ս. գիւղում յայտնի էր իր հայերէն գիտութեամբ *միկիտան* Ե.-ը. Լևոնը գիւղացիների այդ խայտառակ վաբը ու բարբի մասին միշտ խորհրդակցութիւն էր ունենում նրա հետ:

— Գիւղացիների վրա երբէք չի կարելի բարոյապէս ազդել, ասում էր միկիտան Ե.-ը, — զրանց միմիայն մտքակի հարուածներով կարելի է խելքի բերել:

— Ի՞նչ ես ասում, եղբայր, անասուններ հօ չեն, կարծում եմ որ ազգու խօսքով, բարոյական օրինակներով կարելի է զրանց ճամփի բերել, պատասխանում էր Լևոնը:

— Ոչ միայն անասուններ, այլ անասնային և զազանային խառնուրդից է բաղկացած մեր ամբոխը. ամբոխի հոգեբանութիւնը դու լաւ չես իմանում, հապա ապրի՛ր զրա հետ մի քանի տարի կ'իմանաս:

Առաջ ես էլ էի քո պէս բարոյական բարոյներ կարդում, բայց վրաս ծաղրում էին լոկ:

— Ինձ լուում է որ ասածներդ մի փոքր մասը միայն ճշմարիտ է, իսկ մեծ մասը — ո՛չ, դիմադրում էր Լևոնը երկոտութեամբ. — գուցէ և կան անասուն — զազան մարդիկ մեր գիւղացիների մէջ, բայց անշուշտ դրանք բացառութիւն են կազմում: Ինչ վերաբերում է մեծամասնութեանը, ըստիս՝ զրա մեղքը միայն և եթ իր տգիտութեան մէջ է կայանում, որի աչքերը հարկաւոր է բանալ. այդ էլ մեր ինտելիգենտ դասակարգի պարտականութիւնն է. բայց այդ ինտելիգենցիան գիւղից այնպէս է խորշում, ինչպէս սև ցաւից:

— Ի հարկէ իմ ու քո ոյժերից շատ վեր է, աւելացնում էր Լևոնը, արմատական փոփոխութիւն մտցնել գիւղացիների կենցաղի մէջ, բայց և այնպէս մի փոքրիկ ծառայութիւն կարելի է անել, — ազգային ապագայ լուսաւորիչների համար հող պատրաստելով:

Լևոնը համոզուած առաջարկութիւն էր անում միկիտան Ե.-ին, որպէսզի ժողովներ կազմակերպեն հասակաւորների զպրօցի պէս, ժողովրդի հետ մի շարք ծրագրած զրոյցներ անելու, նրա բարոյական, մտաւոր, տնտեսական ու ֆիզիքական զրութիւնը բարելաւելու նկատմամբ: Միկիտան Ե.-ը սրտանց ծիծաղում էր Լևոնի միամտութեան վրա, իսկ Լևոնն էլ իր մտքում չէր հաւատում փորձուած միկիտանի խօսքերին:

II.

Մի իրիկու միկիտան Ե.-ի տանը խնջոյր կար- նրա մանկան մկրտութեան հանդէսն էր. հրաւիր- ուած էին գիւղի բոլոր ազգեցիկները մօտ երեսուն մարդ, որոնց թւում և Լեոնը: Սենեակի երկու պա- տերի առաջ, գետնի վրա խալիչաներ էին սփռած և մարդիկ շար ի շար իրար հանդէպ նստուած էին ծալապատիկ. Լեոնին բարձի վրա էին նստացրել: Սենեակը լուսաւորում էր առաստաղից կախած մի կեղտոտ լամպ. լամպի գործածութիւնը նոր էր մուտ գործել գիւղի մի բանի առաջաւոր օջախները:

Խօսում էր մենակ քեանդիսուդա Աթին, որը նո- րամկրտեալի կնքահայրն էր. նա պատմում էր իր ջա- հիլութեան օրերում գործած սխրագործութիւննե- րից: Հանդիսականները բահանայի և տիրացուի հետ միասին շատ հետաքրքրութեամբ լսում էին:

Զրոյցի թունդ ժամանակը միկիտան Ե.-ը Լեոնին մօտենալով ասաց. «Ուզում էիր ժողովներ հրաւիրել դասախօսութիւններ անելու համար. հազիր իրանց ոտքով են հկել, սրանից էլ յարմար միջոց. խօսի՛ր մի բան»:

Լեոնը, որ մինչև այդ ըոպէն լուռ և անհոգ նըս- տած էր, մի շարժում գործեց ու խոր մտածողու- թեան մէջ ընկաւ. ուղիղ որ տեղն էր խօսելու, բայց ինչպէս խօսել. ինչից սկսել, ինչով եզրափակել... Մինչ քեանդիսուդա Աթին տաք-տաք խօսում էր ու

միւսները լսողութիւն կտրած նրան էին նայում, Լեոնը մտքի մէջ ծրագրում էր իր ասելիքը:

Նա ուզում էր հարբեցողութիւնից սկսել. այդ ախտի մասին այնպիսի ազդու բառեր էր պատրաս- տում, որ լսողները միանգամայն սարսափահար լի- նէին: Միտքն այն էր՝ թէ ինչպէս հարբեցողութիւնը պատճառ է դառնում և ուրիշ յանցագործութիւննե- րի, որոնց հետեանքը լինում է բանտ, տըսոր, տա- ժանակիր աշխատանքներ և այլն: Մի խօսքով ամեն մի վատ և մարդկանց դժբաղդացնող գրութիւն ա- ռաջ է գալիս հարբեցողութիւնից:

Այնուհետև ուզում էր խօսել ընդհանուր և ա- մուսնական սիրոյ և ծեծի տղեղ սովորութեան մա- սին, որ ինչպէս սէրը երջանկացնում է մարդկանց ամեն տեղ, որ ամեն ագնիւ մարդկանց կատարեալ բաղդաւորութեան հասցնող միջոց կարող է լինել միայն և եթ սէրը, Թէ ինչպիսի կորստաբեր սովո- րութիւն է, որ գիւղական հայ ծնողներն աղջկայ կամրին հակառակ պսակում են չսիրած տղամարդի հետ, կամ ինչպիսի տղեղ սովորութիւն է, որ նը- րանք ծեծում են իրանց կանանց ու տան ստո- րադրեալ անդամներին:

Հէնց այն է՝ Լեոնը մտքերն ամփոփելով հազաց, կոկորդը մաքրեց որ խօսքն սկսի,—հերս բերուեց ընթրիքի պատրաստութիւնն ու «Աստոծ շնորհաւոր անի, նորամանուկը հօրով-մօրով մեծանայ»,—սովո- րակա՛ն շնորհաւորանքները ձէն ձէնի տուեցին... Լե- ւոնի խօսքը բերանումը թողեցին: Այդ հանդաման- քը չվրիպեց Ե.-ի փորձառու աչքերից. նա Լեոնին

նայեց և հեզնորէն ժպտաց. Լևոնը կարմրատակեց ականջներիցը հետ...: Կտուավարիչ թամազան բեանդ-խուղա Աթին էր. երբ հերթը հասաւ Լևոնի կենացին, նա դեռ միկիտան Ե-ի հետ միմիկայով իրար ինչ որ ակնարկութիւն արեցին, ապա ըստ իր սովորութեան բարձր ձայնով աւելացրեց և հետեւալ՝ Լևոնի համար անսպասելի խօսքերը:

—Այ էլլեզ, շիմըդ էլ մեր գեղի իշխանին էր ու հազիր մեր պարոն սուղիա-գլաւինն էլ ըստի են. ես ուզում եմ, որ մեր Լևոնին պիտի շինենք մեր օրչեստի համար. դուք ինչ էք ասում. փառք Ասծու, խում չիմուդ էլ այդին ա սրա խոնարութիւնն ու թամուզութիւնը:

Ամեն կողմից հաւանութեան ձայներ տուեցին, ու Լևոնը ընդունուած էր շինական դատարանի գրագրի պաշտօնում: Միկիտան Ե-ը, ինչպէս զործնական մարդ, սպիպեց, որ ռոճկի հաշիւն էլ որոշուի ու... որոշեցին—հարիւր ըուբլի տարեկան:

Լևոնը յանկարծակի եկածի պէս դեռ շուարեց, ապա հետզհետէ մտքերը կեղրոնացնելով գրեթէ բաւական մնաց կատարուածով: Առաջինը՝ յամենայն դէպս ապրուստի միջոց կար աչքի առաջ. իսկ երկրորդը, որ ամենազլխաւորն էր, նրան թւում էր, որ այդ նոր պաշտօնի շնորհիւ կարող կըլինի զիւղացիների վրա բարոյական մեծ ազդեցութիւն ունենալ:

Ընթրիքը վերջանալուց յետոյ, երբ հրաւիրուածները պրուել սկսեցին, բեանդխուղա Աթին զիամամբ Լևոնի հետ դուրս եկաւ և դարձաւ նրան թուրքերէն հետեւալ բառերով, — «Օղուլ, ման սանի բիր

էյլա եաղշլըզ էյլաղըմ բի, բու սիւկալրմա բիր հորմաթ գեարաք»: (Որդեակ, ես իեղ մի աշնպիսի լաւութիւն արեցի, որ մօրաւրիս մի պատիւ է հարկաւոր): Լևոնը ժպտաց ու բարի զիշեր մաղթելով՝ բաժանուեց Աթնից:

III.

Այն ամբողջ զիշերը գրեթէ բնել չկարողացաւ Լևոնը. նոր պաշտօնը երեւակայութեան մի հրաշալի աշխարհ էր բացել նրա մտքի առաջ. հազար ու մի օգալին ամրոցներ էր կառուցանում: Գիւղացիների մտաւոր, բարոյական, տնտեսական ու ֆիզիքական զրու-թիւնը միանգամայն հասցնում էր անհասանելի բարձրութեան: Ջանազան ազբիւրներ էր գտնում հասարակական մեծ գումարներ կազմելու համար ու այդ փողերով հեշտ հաղորդակցութեան համար ճանապարհներ, կամուրջներ, խճուղիներ էր շինել տալիս. բաղաքներից մերենաներ էր բերել տալիս վար ու ցանի, կաշսելու, հատիկ մաքրելու և աղալու համար: Հողերը, այգիները մշակել էր տալիս ըստ հերոպականին, մտցնելով ճոխ բուսականութիւն, բանջարաբուծութիւն. տարածում էր մեղուաբուծութիւնը ու կաթնատնտեսութիւնը: Եյդ բաների մասին նա կարդացել էր զրբերում:

Նա ցանկանում էր գիւղում երկսեռ դպ. բանալ, զպրոցին ազատ-արձակ հողեր յատկացնելով:

այգիներ ու պարտէզներ տնկել. դասական ուսուցիչներին հետ հրաւիրել նաև մասնագէտ գիւղատնտեսներ, որպէս զի աշակերտներին սովորեցնելին երկրագործութեան ու գիւղատնտեսութեան զանազան ճիւղերը գործնականապէս, նաև արհեստներ. իսկ աշակերտունիներին կար ու ձև, տնայնագործութիւն, խոհարարութիւն և այլն: Մինչև 12—13 տարեկան հասակը, տղայ ու աղջիկ երեխաները—խառը պէտք է լինէին դասարանում: Դպրոցին կից ուզում էր բանալ գրադարան-ընթերցարան. իսկ գիւղում՝ կեդրոնական դեղատուն, հիւանդանոց՝ բժշկով, ֆելդշերով ու մանկաբարձուհիներով:

Քանի բանի ջահիլ կեանքեր էին թառամում բժիշկ ու մանկաբարձուհի չլինելու պատճառով:

Ցանկանում էր Թիֆլիսում հասարակութեան հաշուով մի հանրակացարան վարձել և գիւղական դպրոցն աւարտողներից ընդունակներին պահել այնտեղ՝ միջնակարգ և ապա բարձրագոյն կրթութիւն տալու, որոնցից զանազան մասնագէտներ—գիւղատնտեսներ, ուսուցիչներ, բժիշկներ, փաստաբաններ և այլն զուրս գալով, վերադառնային գիւղը և գործէին գիւղացիների մէջ, գիւղացիների համար: Անջողուած դէպքում՝ ցանկութիւն ունէր հիմնել փոխատու գանձարան: Մտածում էր գիւղի արտերն ու այգիները կարկուտից ապահովագրել տալ, որովհետև գիւղի լեռնոտ տեղադրութեան պատճառով պարբերաբար կրկնուող կարկուտը ջարդում, փշացնում էր երկրի բերքն ու բնակիչներին աղքատութեան մատնում:

Նրա փայփայած իդէաներից էկն էլ այն էր, որ գինավարժութիւն սովորեցնի թէ դպրոցի աշակերտներին և թէ գիւղացի երիտասարդներին. յաճախ էր պատահում, որ անգլէն հայ գիւղացու առաջ դայլը կամ արջը ոչխար ու տաւար էին պատահոտում, կամ մի երկու գինուած թուրքի գեաղաներ անգլէն հայ գիւղացուն կողոպտում էին շատ հեշտութեամբ: Իսկ կաղմակերպած թուրք աւագակախմբերը հօ մի անտանելի ցաւ են մեր երկրի համար:

Գիշերներն անկողնում էր մտորում Լեոնը, իսկ ցերեկներն առանձնանալով իրանց տան կից պարտէզը՝ այնտեղ էր անձնատուր լինում իր քաղցր աշուրջներին: Երեւակայութեան մէջ այնքան էր խորասուզւում, որ մոռանում էր և՛ հաց և՛ ջուր: Երբ նրա մտքի առաջ իր գաղափարները պատկերանում էին մարմին առած, նա ուրախութիւնից ցատկոտում էր, ինքն իրան ժպտալով: Նրա մայրն այդ բաները երբեմն նկատելով՝ շատ էր դարդ անում. կասկածում էր որդու մտաւոր առողջութեան վրա....

IV.

Աշնան մի արեգակնային ջինջ օր էր. կիրակի լինելու պատճառով Օ. գիւղում սովորականից աւելի կենդանութիւն էր տիրում: Շինական գատարանի բակում ամբոխի մի ստուար բազմութիւն էր հաւաքուել: Օգի ջերմութեան պատճառով, դատաւոր-

ները, տանուտէրը և զրանցից ընդ միշտ անբաժան քեանդխուղա Աթին նստած էին դուրսը շինութեան շմբի քարերի վրա: Նրանց շարքում, ամենից վերջին տեղը բռնել էր նորընտիր զրազիր Լեոնը, վրձնի մատեանը ծնկների վրա դրած, մեկանը կողքին, զլիշը ձեռքին: Նա հազած ունէր հնամաշ գորշագոյն կտորից պիջակ, ժիլէթ ու բրիւշ, կանվաջով ասեղնած շապիկ, սովորական սև մահուդի ֆուրածկա և կարկտնած, բայց լաւ մաքրած կօշիկներ: Պաշտօնի նորութիւնը, պաշտօնական անձերի այնքան մերձաւորութիւնը, բազմաթիւ ամբօխի ներկայութիւնը ճնշում էին նրան. մերթ կարմրում էր, մերթ քաթանի գոյն ստանում: Միմիայն քեանդխուղա Աթին էր, որ իր ինքնավստահ հայեացքով խրախուսանք էր ներշնչում նրան:

Դատաւորները, տանուտէրի և քեանդխուղա Աթինի պղտոր աչքերից, կարմրած քթերից երևում էր, որ նրանք նախ Բագոսին մի լաւ երկրպագութիւն են տուել... ապա եկել զատաստան անելու:

Դատաստանն սկսուեց. տանուտէրն ամբօխի առաջին շարքից կանչեց Դանէլանց Ջաքարին. սա առաջ եկաւ, գլուխ տուեց ու կանգնեց: Ջաքարը կարմիր գէմբով, ժպտուն ոչխարի աչքերով մի դեռ երիտասարդ մարդ էր. նրա նոր հագուստից ու հաստատամիտ քայլերից երևում էր, որ զիւզի ունեւոր դասակարգին էր պատկանում:

— Գլախն ջան, էն ա խուրի այդին ա իմ գանգատը:

— Ըսօր սուղիէրին պէտք ա ասես, — կեղծ բարկութեամբ ասաց տանուտէրը:

— Պարոն սուղիէր, էն Ջաննաց Արղըմանն ու Մլխասանց Խէչօն ամառուանիս սարումը իմ սուրուիցը երկու լաւ ոչխար են զողացել, կերել, մուննաթեմ անում, որ համ ջառըմէն առնուք, համ էլ իրանց մի լաւ զազար անէք:

— Ըժու իսպաթ ունիս, — հարցրեց բարձրահասակ ու յաղթանդամ սուղեա նահապետը, չիբուխը բերանից հանելով:

— Ոնց չէ, սուղեա ջան, մեր չորանը տեհել ա:

— Ո՞վ ա ձեր չորանը, հմի ուր ա:

— Պիպոսանց Մադին ա, հմի հրէ ոչխարի կըշտին, հմա զլաւնին այդին ա նրա ասածը:

— Դրուստ ա, զրուստ, ես խօսացրել եմ, տեհել ա, — հաստատեց տանուտէրը: «Ստի հէրն անիծած թէ նա տեհել ա», — շշնջացին ամբօխի միջից:

Առաջ կանչուեցին Արղըմանն ու Խէչօն, երկուսըն էլ խեղճ, երկուսն էլ բրբրուած շորերի մէջ. գլխարկները վերցրին, խոր գլուխ տուեցին ու մընացին տեղները փետացած:

— Ա՛դա հարամզաղէնի, դուք զնացել իր սարը մշակութենի, թէ՞ գողութենի, — ամբարտաւան եղանակով հարցրեց դատաւոր նահապետը:

— Սուղեա ջան, ինչ գողութին, ինչ բան, Ջաքարի չորանը սուտ ա ասել. որ տեհած ըլէր, էն ա թողուլ չէր որ գողանանք ըլի. ինքը լափել ա ու մեզ շառով ա տալի:

— Եանի էս ամառ սարումը հունձ արել է՞ր:

— Հունձ ենք արել, հմա գողութին չենք արել, էն ժամը գիտենայ:

Սուղեա նահապետն աչքի պոչով նայեց սև տանուտէրին, որը *գրեմաստի* ճիպոտը ձեռքին կանգնած էր: «Գողութին չէք արել հա՛»—գոչեց տանուտէրն ու սկսեց ճիպոտով անխնայ հարուածներ տեղալ Արզումանի ու Խէչօի գլխներին, բիթ ու պըռունկներին, ձեռքներին, մի խօսքով ամեն տեղ: Այդ հասակաւոր մարդիկ երեխաների պէս հեկեկում էին: «Գողութին չէք արել հա՛»—հէնց մի գլուխ կրկնում էր տանուտէրն ու զարկում...: Ամբոխի միջից մի քանիսը լուռ զայրանում էին ու չէին համարձակվում միջամտելու, շատերն էլ վայրենի ուրախութիւնից ձեռքներն էին իրար շփում, իսկ մեծամասնութիւնը լուռ ականատեսի դեր էր կատարում. մարդիկ կարծես անշունչ արձաններ լինէին:

—Դէ հմի վճիռ կանենք՝ կը տենուր գողութին էք արել թէ՞ ոչ,—իւր կողմից աւելացրեց սուղեա նահապետը:

Այս վայրենի տեսարանը միմիայն Լևոնի հոգին էր տակն ու վրա անում. տանուտէրի ամեն մի հարուածից նրա սիրտն ուղղակի ցաւ էր զգում փիղիքապէս: Նա անպաշտպան մարդու հայեացքով շուտ շուտ շուրջն էր զիտում, սպասելով որ միջամտող լինի, բայց երբ համոզուեց, որ ոչ ոք այդ քայլը չի անելու, համբերութիւնից դուրս եկաւ, գծուածի պէս յանկարծ տեղից ցատկեց, ընկաւ տանուտէրի գիրկըն ու հզօր ուժով հտ մղեց:

—Բաւական է, անսիրտ մարդ, այդ ինչ ես անում.—սպա դառնալով դատաւորներին, զայրոյթից կերկերուող ձայնով ասաց.—Միթէ վկայի բացակա-

յութեամբ կարելի է վճիռ կայացնել. օրէնքով վկային պէտք է ատեան կանչէք և ինքներդ անձամբ հարց ու փորձի ենթարկէք. ինձ շատ կասկածելի է թուում, թէ այսպէս ասաց չորանը կամ...

—Էդ բու բանը չի,— Լևոնի խօսքը սրի պէս կտրեց սուղեա նահապետը:

—Այ շի, բունն էն ա՛ ինչ ասեն, էն զրես. խի ես ծանոթ տեղդ թեթեացնում,—նկատեց քեանդխուղա Աթին:

Լևոնը դժուարութեամբ թուրը կուլ տուեց, լըռեց:

Երեք դատաւորները, տանուտէրն ու քեանդխուղա Աթին ներս մտան դատարանի սենեակը խորհրդակցելու: Լևոնը մնաց դուրսը, բայց դռնից ականջ էր դնում: Դատաւորների ու տանուտէրի փոսփոսոցից այնքան էլ բան չհասկացաւ, սակայն պարզ լսեց քեանդխուղա Աթնի վճռական խօսքերը:

—Էն ա կը վճռէք տասնունհինգ մանէթ: Զաքարից կորել ա մի ոչխար, չորս մանէթ նրան կըտար —երեքը իւր ոչխարի հախումը, մինն էլ ընդում, որ ըսօր մեզ զակուսկի ուտացրուց, երեք մանէթը գլանին, ամենքս երկ-երկու մանէթ էլ ինձ ու սուղիէրին:

Սենեակից դուրս գալով Լևոնին թելադրեցին վճռի բովանդակութիւնը.—«առնել մեղաւորներ Արզուման Ջաննեանցից և Խէչօ Մալխասեանցից տասնունհինգ մանէթ և տալ Զաքար Դանիէլեանցին: Յանձնարարել պարոն տանուտէրին, որ շուտով կատարի այս վճիռը»:

Իսկ տանուտէրն իր հերթում իսկոյն գզրին հրամայեց բանտարկել մեղաւորներին մինչև փողերի ստացուելը:

V.

Այնուհետև ամբոխի միջից առաջ եկաւ Գորոբանց Սարօն. մի միջահասակ մարդ, հողագոյն դէմքով ու դեղնած աչքերով: Նրա գզգզուած հագուստից և երեքուն քայլուածքից երևում էր, որ նա գիւղի չքաւոր դասակարգիցն էր:

— Գլաւին ջան, էս մի ամիս ա՛ գնում եմ-գալի, բա իմ գանգատին վերջ չի կա՛յ:

— Ի՞նչ գանգատ,— տանուտէրի տեղ հարցրեց սուղեա նահապետը:

— Էն՝ որ Մոսնանց Սումբաթը իրեք թումանանոց կովս ձորումը կերաւ. քեասիք մարդ եմ, ալալի-մալալի էդ մի կովն ունէի, էն էլ կերաւ, ըրեխանցս ոռզողը կտրեց:

— Լաւ, շատ մի ձրացնիլ, իտպաթ ունե՞ս:

— Ոնց չի, սուղիա ջան, Դուբուրանց Ուհանէսն ու Զփարանց Վասիլը տեսել են:

— Դէ լաւ, եկող կիրագի իսպաթնուդ կրկանչներ կըխօսացնենք, թէ որ կըհաստատեն՝ վճիռ կանենք:

Դատաւորների մեկնելուց յետոյ, ամբոխն էլ կամաց կամաց ցրուեց, տրտնջալով դատաւորների վճռի վրա: Մեր տղայ, մէկէլ վճիռը դասըդի ետ

գցեցին, որ էդ քեասիքի տունն էլ քանդեն հա՛ — ասում էին իրար մի քանիսը:

Երբոր Լեոնը գործը վերջացնելով քայլերն ուղղեց դէպի տուն, քեանդխուղա Աթին հազալով հետեւեց նրան: Լեոնը նրա փորացաւը հասկանալով, որ ասելիք ունի, քայլերը դանդաղեցրեց:

— Հը՛, խէր ըլի, քեանդխուղա Արութիւն:

— Խէր ա, Լեոն ջան, ասի՛ հետդ մը քիչ փախաթ անելէն աղաք դամ:

Չիբուխը լցրեց, վառեց ու ծծելով՝ բերանից ու ըթածակերից ծուխը բուլա-բուլա բաց թողեց: — Գիտե՞ս ինչ կայ, Լեոն ջան, համոզկեր եղանակով սկսեց քեանդխուղա Աթին, բիանից աղաք, թամամ հինգ տարի մեր գեղում պիսրութիւն աբաւ բաղկըցի Գիգուլը. գիտե՞ս որն եմ ասում, էն՝ որ լեզուն կէտ էր շաղրում. օրինակ՝ ինձ «քեանդխուղա Աղութիւն» էր ասում. դրուստ ա, նա տարէնը եռեսուն թուման դոնուդ ունէր, հմա հազար թուման փող տարաւ մեզանից:

— Ի՞նչ պէս:

— Ընէնց որ նա քի պէս սուղիէքին խրատում չէր թէ՛ խի՛ են բռանց շատի գէ իսպաթի վճիռ ասում, եա գլաւնի վրա բզաւում թէ՛ խի՛ ա իր ոահաթին ծեծում. ըտէնց հնց կըլի, օղուլ, ըսօր-ըսօր դոն ես նրանց ձեռի տակի մարդը: Հմա էն ինչ Գիգուլն էր՝ երկու կուան դաւարարնուցն էլ էնդղալ կաշառք էր առնում, որ սուղեա գլաւնին էլ էր փայտալի, ինձ էլ: Ամառները իր կովի ու ձիու հմար ուղողութիւնով գեղըրցոնցէ էնդղամ խոտ ու դարման

էր հւարում, որ աւելցուրը ձմեռները եղ զեղըցոնց վրա փութը վեց շահով դարման էր ծախում, տաս շահով խոտ:

Աթին իր մարած չիբուխը թափ տուեց, կոխեց ծոծորանքը ու նորից շարունակեց.

— Գարունները ձին նի ըլէր՝ սարերն ընդներ, միշտա եղ ու պանիր հուաքէր ու ձմեռները ետ զեղըցոնց վրա զըւանքէն տասը շահով եղ ծախէր, մի արասով պանիր: Գեղըցոնցէ էր ծախէր, պղնձ-կալը, ձուկն ու խալիչէր զըւա վեր ունէր ու թու-մանը ամսէն մի մանէթ շահով փող տէր: Ո՛ր մինն ասեմ, ամեն մի *պրոստոյ* բիլեթ զըբլու հմար էն զը-դամ հաւ ու ձու մօղ անէր, որ չարչի ջնուտների վը-րա *կուրտոմ* ծախէր՝ փող զիզէր. — ջնուտից ջնուտ էր: Խօսքը մեր մէջ մնայ, որտեղ որ սիրուն հարս կար, էն էլ նրանն էր:

Վերջին բառերն Աթին շատ ցածր արտասա-նեց:

— Հիմա զըանով ինչ ես ուզում ասել, քեանդ-խուղա Արութին:

— Էն եմ ասում, Լեոն ջան, որ էս մեր *էլլիգ* դա-մին որ կայ, հալալ հախը թէզուղ մի կապէր ըլի, իր կամքովը տալն ու ֆոքին դուս զալը մին ա ը-լում, հմա անումը կաշառքը՝ մեծ ուրախութիւնով մանէթնի ա տալի: Ես բու զարդն եմ բաշում, ու-զում եմ որ էզուց-էլօր մի կտոր հացի տէր ըլիս, զէզուն խամ ես, որ ինձ անդաճ ունեւ, ամէն մի ճամփէն էլ շանց կըտամ:

— 2է՛, չէ, ինձ հարկաւոր չի, քեանդխուղա

Արութին, միայն ես քեզ ասում եմ, որ եթէ մեր պարոն դատաւորները եկող կիրակի Գորոքանց Սա-րօյի վկաներին ատեան չ'կանչեն, դաւաճապետին կ'յայտենմ:

— Կանչելով կըկանչեն, հմա թէ գործը մնց կը-վերջանայ, էդ Աստոծ զիզի, — խորհրդաւոր եղանա-կով ասաց Աթին ու թերուեց զէպի իրանց տուն:

VI.

Օրուան տպաւորութեան տակ, մտաւտանջու-թեան մէջ ընկաւ Լեոնը. նա ինչ էր ցանկանում և ահա ինչ էր յայտնում: Արդէն նախադգում էր նա, որ դատաւորները զարձեալ ոտնակոխ պէտք է անեն ճշմարտութիւնը Սարօյի գործի վերաբերմամբ, սա-կայն մտքումը որոշեց, որ սպասի այդ գործի վեր-ջանալուն:

Կիրակին հասաւ. նախընթաց կիրակի օրուան պէս, նոյն տեղը և հանգամանքներում սկսուեց դա-տաւորանք:

Տանուտէրը առաջ կանչեց Սարօի վկաներին:

— Սարօի կորած կովի մասին ինչ գիտէք, ա-սէք տենամ. հմա թէ սուտ էք խօսացիլ՝ *պրեմը* Սիբիր կըշեմ, ազգու եղանակով ասաց սուղիա Նահապետը:

Վկաները զեռ իրար նայեցին, ապա երբ նրանց հայեացքները միաժամանակ հանդիպեցին նրանց

դիմաց կանգնած բեանդիւղա Աթնի հայեացքին, աչքները ծակեց, կարմրեցին, հագացին, բայց դեռ լուռ էին:

— Զը, ինչ էք պրպանձուել, ասէք, ըլի, հմա կենդ կենդ խօսացէք, — բղաւեց տանուտէրը:

— Դէ գլաւին ջան, էն ա մի լիսնեակ ըրիկու տեհայ, որ Մոսնանց Սումբաթը Սարոյի գոմի դռնիցը մի ապրանք ա բշոււմ, — ասաց վկայ Ուհանէսը:

— Ըծու ճանաչեցիր որ Սումբաթն էր. բալբի թէ ուրիշ մարդ էր, — հարց առաջարկեց սուղիա նահապետը:

Հէնց այդ վայրկեանին Աթնի մագնիսացած հայեացքը նորից հանդիպեց Ուհանէսի աչքերին:

— Զը... գիտեմ ոչ..., — կմկմաց ու լռեց վկայ Ուհանէսը:

Սարօն՝ «այ տղա, այ տղա» ասելով առաջ եկաւ, վկային ինչ որ ուզում էր ասել, բայց տանուտէրը խեղճի խօսքը բերանումը թողեց. հրամայեց լռել մինչև վկաների հարց ու փորձի վերջանալը:

— Հմի գոն ասա, Վասիլ, տենունք ինչ գիդես, — հարց առաջարկեց միւս վկային սուղիա նահապետը:

Վասիլը իր երկայն վիզը շատ ձգեց, լեզուն բերանումը շատ ծլրփացրեց, բայց բերանից ոչ մի բառ դուրս չեկաւ: «Հալբաթ Աթին խեղճի լեզուին շատ ա հուփ տուել, փորն ա զցել դուս չի գալի» — սրախօսեց ամբօխի միջից մէկը: Ընդհանուր բրբիջ բարձրացաւ: Վասիլը հերթով նայեց շուրջը՝ ամբօխին, դատաւորներին, տանուտէրին, ապա բեանդ-

խուղա Աթնին ու կարճ կտրեց. — «Ես ըսկի բանից խաբար չեմ»:

— Վայ, վայ, ձեզ մատաղ, ա խալխը, էս շան տղու տղէքը դէշն են տալի, հալբաթ տենդում են, համբերութիւնից ելնելով ժայթքեց Սարօն. — աղա տօ... տօ... ես ձեր է... ինչն ասեմ. բաս էն դուք չիք, որ ասէիք, թէ Հէրապետանց բաղի ծառի տալդումը նստած, ձեր բողացած աչքերովը տեհար, որ Սումբաթը մեր կովը տարաւ, հըր...

Բնաւ ծպտուն հանող չեղաւ:

— Աղա, բա էն դուք չիք, ասէք ըլի. թէ ընդով դուք իք (էիք), հմի ձեր դլրդը (կերպարանք) մտած ստանէքն են ձեր տեղակ խօսում:

Նորից բրբիջ բարձրացաւ ամբօխի միջից, մինչև անգամ լրջախոհ դատաւորներն էլ ժպտացին:

Բոլոր հարց ու փորձի ժամանակ Լեոնի սիրտը դալարւում էր. նա յայտնապէս տեսնում էր արդարութիւնը ոտքի տակ ընկած, արդարութիւնը պաշտպանող կոշուածների խարդաւանները, բայց իր մէջ վճռել էր մինչև այս գործի վերջը լռել, ոչ մի կերպ չմիջամտել:

Առաջ կանչուեց Մոսնանց Սմբատը, — մի վայելչակազմ, բեխատեղը նոր սեացած, գեղեցիկ դէմքով ու ինքնավստահ կապոյտ աչքերով պատանի:

— Տօ հարամգաղա, թէ սիրտդ միս ուզէր՝ ձեր նախրին ես սուրուին դիմիշ չի արիւր, էդ բեասիբի տունը քանդեցիր. հմի ճնց ես անում, որ նրա մի կովի տեղ՝ երկու կովը խլեմ տամ իրան, համ էլ բի Սիբիր կորցնեմ, — կեղծ բարկութեամբ ասաց սուղիա

Նահապետը: «Այ ամսուս էդ բոյ ու բուսածիդ, ամսուս էդ ջահելութենիդ հա» — շշնջացին ամբոխի միջից:

— Սուգիա ջան, մին էս որ, ես կով չեմ գողացել, էդ անիրաւը համ ինքը կովը ծախել ա, համ էլ ինձ շառով ա տալի: Էդ մասին իրեք խալաթ ունիմ: վրա երկուսն էլ, ես ինչ կովի տէր եմ, որ ինձանից կով խլես: Ես դեռ տասնութ տարեկան եմ, մեր գովաթի տէրը հրէն իմ հերն ա, — դէպի ամբոխի առաջին շարքը ցոյց տալով, ասաց Սմբատը, որտեղ կանգնած էր նրա հայր Փարսաղանը, երկար թեքելով մուշտակը վրան զցած ու երկայն բուխտը: Մորթէ գլխարկը գլխին: Փարսաղանն ինքն էլ մի ժամանակ տանուտէր էր եղած, ազդեցիկներից էր, կրում էր «քեօխվա» տիտղոսը:

Առաջ կանչուեցին Սմբատի նշանակած վկաները. երկուսին ներս ուղարկեցին դատարանի սենեակը, իսկ երրորդին պահեցին: Սա դեղնած, նիհար, բայց օսկոտ դէմքով, նեղ ճակատով, մեծ-մեծ ճրպապոց աչքերով՝ քառասունն անց տղամարդ էր. գիւղում յայտնի էր «գրափառ» մականունով:

— Ակոփ, էս գործի մասին ինչ գիտես, ասա, ասա՝ հմա գրուստն ասա, — յորդոր եղանակով հարց առաջարկեց սուգիա Նստապետը:

— Պարոն դատաւոր, հրամանոցդ ինչպէս յայտնի ա, ես մի փետազործ մարդ եմ. էն առաւօտը որ համբաւ ելաւ թէ անցկացած իրիկունը Գործրանց Սարոյի կովը գողացել են, նրա առաջի օրը ես անտառումը կակալի ծառ էի կտրում. էն սաղ օրը

Մոսնանց Սմբատն ու էն սենեակի երկու տղէն էլ ինձ մօտ տաւար էին արածացնում: Իրիկունը երբ նրանք տաւարը բռնեցին դէպի գոմերը, ես էլ բանթող արի ու հեաները գնացի. հէնց գոմերը հասանք, տեսանք երկու մարդ Սարոյի կովը բշած տանում են, Սարօն էլ փողերը ձեռքում հուպ տուած կանգնած էր, ծախել էր. ասինք՝ «ո՞նց տուիր, թէ՛ քսանուիրեր մանէթի»:

— «Ախ, ան սուտիկ շան քղայ, բժու դու էն վախտը Գումբրի չիր կորած. փեշակ ա շինել իրան հմա ըլի. որդի մի գող, ես մարդասպան ըլի, դա խալաթութին կը տայ ու մեղաւորին անմեղ դուս կը բերի, շշնջացին ամբոխի միջից: Միւս երկու վկաներն էլ նոյնութեամբ հաստատեցին Ակոփի ցուցմունքը:

— Բա առնողնուն ճանաչեցիր ո՞չ, — բոլոր վկաներին խառը հարցրեց դատաւորը:

— Ո՛չ, պարոն դատաւոր, դէ նրանք վերեի կոմ մարդիկ էին, ինչ պէտք ա ճանաչէինք, ամենքի տեղ պատասխանեց «գրափառ» Ակոփը:

Սարօն՝ որ մինչև այդ ժամանակ բերանը բաց, ապշաց կանգնած էր՝ մէկէն գոչեց. «Աստո՛ծ, երար ո՞րդի ես...», ու գժի պէս դուրս փախաւ:

Վկաների ցուցմունքը գրի առաւ Լեոնը:

Որովհետեւ գործը շատ էր ձգձգուել ու իբրեւ թէ ժամանակն էլ արդէն ուշ էր, այդ պատրուակով վճռի գրելը յետաձգեցին: Ամբոխը տրտնջալով ցրուեց. մնացին պաշտօնական անձինք, Աթին և Փարսաղաներ: Վերջինս Աթին մի կողմի վրա հեռացնելով՝ աւանջում ինչ-որ փսփոսաց և ճանապարհ գցեց: Յե-

տոյ տանուտէրին ու գատաւորներին առաջարկեց, որ այն օրն և եթ իրիկունը գնան Փարսաղանի տուն, համ մի լաւ քէֆ անեն, համ էլ վճիռը գրեն վերջացնեն: Աթնի խօսքը բոլորի համար օրէնք էր. ամենքն էլ համաձայնուեցին, որոնց թւում և չեն:

VII.

Մի աստղալոյս և ցուրտ գիշեր էր: Մոսնանց օդայի բուխարին մի աւտօդաֆէ էր ներկայացնում. փայտի մի մեծ կոյտ ճարճատելով այլուում էր: Խարոյկի բոցը այնպէս էր բռնել, օդայի յատակից սկսած, բոլոր պատերն ու առաստաղը, ու բուխարու գլխի զարակի վրա դրած նաւթի ճրագի լոյսը բոլորովին նսեմացել էր: Նկատելի էր միայն ճրագի թանձր մուրը, որ ամպի պէս բարձրանալով առաստաղը ներկում էր սև պղտոր գոյնով: Փարսաղան բեօխվան էլ հէնց մի գլուխ ածխակոթերը դէս-դէն էր բզկոթում, կրակն աւելի բորբոքում:

Փողոցով անցնողների աչքերին հեռուից հիանալի տեսարան էին ներկայացնում բուխարուց ելնող կայծերի փայլուն փնջերը, որ կարծես լուսատուտիկների անհամար խմբեր լինէին թռչկոտելիս, բարձրը եթե բքում կորչելիս...

Օդայի երկու հանդիպակաց պատերի առաջ՝ տանու գործած սիրուն կապերաներով ու խալիչաներով ծածկուած տախտիկ էին դրած:

Մէկը միւսի յետից հաւաքուեցին գատաւորները, տանուտէրը, Աթին և չենը իր մատնանով ու գրիչ-մելանով: Յրտից ներս մտնելով՝ կրակի ճերմութիւնը դուր էր գալիս նրանց. դեռ առաջ մի «օխան» էին բացականչում կրակի դիմաց, ապա Փարսաղան բեօխվին «բարի ըիգուն» մաղթելով՝ բարձրանում էին տախտիկի վրա, ծալապատիկ շարւում:

Ուրախ էին ամենքը, բացի չենից. ասում էին, խօսում, ծիծաղում. բեանդխուղա Աթին առակաների տոպրակի բերանը բացել էր և էլ վերջ չկար:

Մէկը միւսի ետից ներս եկան Փարսաղանի մեծ որդի Մոսին ու Սմբատը՝ մի մօրթած չէփիչ (մեծ ուլ) կոնատակին:

— Համեշա սան գեալասան (միշտ դու գաս), Մոսի ջան, ասաց բեանդխուղա Աթին, չէփիչի վրա մի առանձին ախորժակով նայելով:

Չէփիչը կախեցին սեան վրայի մեխից ու սկսեցին աիկ հանել:

— Էդ լաւ ա, որ տիկ ես հանում, Մոսի ջան. արագի ես գինու տկճոր կըշինենք, — նորից խօսեց Աթին:

Չէփիչը մաշկելուց յետոյ, երբ սկսեցին միսը կտրատել, Փարսաղան բեօխվան իր ձեռքով փայծաղըն ու լիւրը հանեց, աղ արեց ու պցեց շեղջի վրա:

— Ասում եմ մշվանց խորակի եփելը մի քիւլլա-մա-խորոված անեմ, մէ-մէն արագ էլ պցենք ու մը քիչ մեղ պնդացնենք. ինչ էր ասում, տղերք:

— Էն ա՛, ասա ուզում ես հօրդ կանթեղը ձէթածես. ըլի, Փարսաղան բեօխվա, պատասխանեց Աթին թուրք կուլ տալով:

Երբ Ֆեմիդայի պաշտօնեաները իրանց «մը բիշ պնդացրին», քեանդխուղա Աթին առաջարկեց, որ մինչև կերակրի պատրաստուիլը վճիռը գրեն, վերջացնեն: Բոլորն էլ հաւանութիւն տուեցին: Վկաների ցուցմունքը նորից կարդացուեց, ապա սուղիա նահապետը Լեոնին հրամայեց աւելացնել մօտաւորապէս հետեւեալը, որ սովորել էր նախկին զրազիր Գիզուից. — «Մենք դատաւորներս, օրէնքի և վերոյիշեալ վկաների ցուցմունքի հիման վրա՝ վճռեցինք, Սմբատ Մոսինեանցին արդար ճանաչել»: Ապա երեք անգրագէտ դատաւորների տեղ էլ Լեոնը ստորագրւեց և իւրաքանչիւր ստորագրութեան տակ իրանց կնիքներով զրօշմեց:

Բողարթման պատրաստ էր արդէն. խորովածն էլ խորովում էր: Փարսագանի նորահարսը բուշուշքը թողած մինչև աչքերը և բերանը ղընչկալով պինդ կապած, լազանն ու ջրով լիբը տուշան ձեռքին, սրբիշն էլ բազկի վրայից կախած՝ հեղութեամբ առաջ եկաւ, ձեռքներին ջուր ածեց, բացի Լեոնից, որը հրաժարուեց ձեռքերը լուսնալուց, ապա մաւի նախշուն սփռոցը սփռեցին, կեր ու խումբ սկսեցին: Գինին ու օղին առատ էր: Լեոնը չէր խմում, միւսները բոլորը հարբեցին:

Սեղանն աւարտելուց յետոյ, քեանդխուղա Աթին առաջարկութեամբ, չէփշի մորթին վիճակ պցեցին: Վիջակը տարաւ Լեոնը: Որտեղից որտեղ՝ Լեոնի երեւակայութեան առաջ պատկերացաւ Քրիստոսի պատմութեանի վիճակարկութեան տխուր դորձողութիւնը...

— Ես հլէ մտքումս աղօթք անէի, որ մորթին գէինձ ընգնի գէ բի, Լեոն ջան, տկճորս փթել ա, հէնց խմանանք իմ որդին ես, արի ինձ բախշի, աղերսեց Աթին ու Լեոնի յօժարութիւնը ստանալով, մորթուն տէր դարձաւ:

Ամենքն էլ տան տիրոջը շնորհակալութիւն ու բարի գիշեր մաղթելով՝ ուրախ տրամադրութեան տակ ցրուեցին իրանց տները:

Ուրախ չէր Լեոնը:

Լեոնը շատ տխուր էր ու մտախոհ: Նրա բոլոր յոյսերը ի դերե ելան: Նա զգաց, որ գիւղում մնալն այլեւ աւելորդ է: Այո՛, զգաց, խո՛ր զգաց ու վշտացաւ:

Առհասարակ գիւղական կեանքը նա շատ էր սիրում. մանաւանդ իր հայրենի գիւղի մարուր օդն ու համով սառը ջրերը, նրա երբեմն ջինջ, երբեմն փոթորկալից երկինքը, նրա հովասուն, ծաղկալից սարերն ու կուսական անտառները, կանաչագարդ մարգագեղաններն ու ժայռոտ անդնդախոր ձորերն անգամ. բայց ի՞նչ արած, ի՞նչպէս մնալ, ինչո՞վ ապրել: Երբ նրա մտքի առաջ պատկերանում էր քաղաքի ժխրալից կեանքը, զարգանդում էր: Նա մինչև անգամ իր բոլոր համագիւղացիների հետ սիրում էր և այն պաշտօնական անձանց, որոնց անարգար վարմունքն ամեն բոպէ խռովայոյզ էր անում նրա սիրտը: Բնաւ չէր ցանկանում գիւղից բաժանուել: Նա ուրախութեամբ կըստարարէր հողագործութեամբ, բայց լծկան չունէր, հող չունէր, փող չունէր:

Մէկ մտքովն անցաւ առայժմ գիւղից հեռանալ և մի քանի տարի բազմ որոնել պանդխտութեան

մէջ, որտեղ մի փոքրիկ զրամագլուխ ձեռք բերելուց յետոյ, նորից վերագառնալ զիւզն ընդմիշտ մնալու համար. — զուցէ թէ այն ժամանակ կարողանար իրագործել իր իղէալները... Սակայն մէկ էլ իր մէջ փոքրոգութիւն ու եսասիրութիւն նկատելով, վերջնականապէս որոշեց մնալ գիւղում և իր բոլոր ոյժերը նուիրել գիւղացիների շահերին:

Առաւօտն անկողնից ելնելուն պէս, լուացուեց ու գրիչն առնելով վճռի մատեանից արտագրեց Սարգիս, Արզումանի և Խէչօյի գործի պատճէնները: Մատեանը տարաւ դատարան ու այնտեղից այդ գրկուած գիւղացիների մօտ դնալով՝ հասկացրեց նրանց ամեն մէկին, որ դատաւորներն անկանոն վրճիւ էին կայացրել թէ Սմբատին արդարացնելով և թէ Արզումանին ու Խէչօյին մեղադրելով, որ հէնց այդ պատճառով արտագրել է վճիռների պատճէնները, որոնց հիման վրա բոլորագրեր կը գրի նահանգապետի անունով, որպէս զի նրանք ստորագրեն և պոստով ուղարկեն:

Չնայելով որ Լեոնը գրելու համար վարձատրութիւն չէր պահանջում, մինչև անգամ պոստի ծախսերն էլ իր վրա էր ընդունում, բայց և այնպէս նրանք չօժարուեցին, վախելով տանուտէրի և սուգիւ նահապետի վրէժխնդրութիւնից:

Երբ առաջիկայ կիրակի օրը Լեոնը իր ժամանակին գնաց դատարան, բոլորովին հիասթափուեցաւ. — սուղիա նահապետն ու սև տանուտէրը վճռականապէս յայտնեցին, որ իրանք զրազրի պէտք չունեն և պարոն Լեոնը կարող է իսկոյն հեռանալ դա-

տարանից ընդմիշտ: Հէնց այդպէս էլ ասացին — «պարոն Լեոն»:

Լեոնը վերագարձաւ տուն և սկսեց իր շորերն ու անկողինը կապտել. պատրաստում էր բաղար գնալու. նրա միջագնած աչքերը գրեթէ ոչինչ չէին նկատում, հէնց այնպէս մերենայաբար էին շարժւում:

Նրա մայրը շատ աղերսեց, համոզելով որ հաբաղար գնալու մտադրութիւնից ետ կանգնի զոնէ առայժմ, սակայն Լեոնը չհամոզուեց:

Եւ Լեոնը իր իրերն էր կապտում ու կարգի բերում, իսկ նրա խեղճ մայրը վիզը ծուռ կանգնած՝ առատ արտասուներն էր թափում...:

ՆԱԶԼՈՒ ՏԱՆ:

(Լեոն յոգսվողական բարբառով).

Ուզում են քի ուրշի տան,
Քու կամքին մտիկ չի տան.
Թոկեն տանեն հեռու տեղ,
Էդ ոնց կըլի, Նազլու ջան:

Արի, արի, Նազլու ջան,
Շիշակ ջանս քի զուրբան:

Շատ լաւ գիտես դու, որ ես՝
Ո՞նց եմ վառուած սիրում քեզ.
Միթնի՝ դուրս արի բաղչէն,
Սիրով կրակուած ետըիդ տես:

Արի, արի, Նազլու ջան,
Շիշակ ջանս քի զուրբան:

Դռանդ զուլը ես եմ,
Բաղչիդ բըլբուլը ես եմ.
Խօսք ես տուել՝ կատարի,
Քու սիրած եարը ես եմ:

Արի, արի, նազլու ջան,
Չիշակ ջանս քի ղուրբան:

Նազլու, էդ քու նազերդ,
Թէլ-թէլ շէզլիկ մագերդ՝
Ինձ անդանակ մորթել են,
Առանց թոկի կապել են:

Արի, արի, նազլու ջան,
Չիշակ ջանս քի ղուրբան:

էդ քու շիմշատի բոյդ,
Նախշուն ծով-ծով աչքերդ,
Լերդ ու թորս էրել են,
Ուշք ու միտքս գերել են:

Արի, արի, նազլու ջան,
Չիշակ ջանս քի ղուրբան:

Հոգուդ մատաղ, նազլու եար,
Թխուած սըտիս արն ճար.
Էլ ինչ ունիմ աշխարհում,
Այ սաղ երկրի բարեբար:

Արի, արի, նազլու ջան,
Չիշակ ջանս քի ղուրբան:

Այ, էրնակ էր էն օրին,
Կանանչ ծառերի միջին,
Սառն ախպիրն էր բշբշում,
Մենք էլ ուրախ կրկնում:

Արի, արի, նազլու ջան,
Չիշակ ջանս քի ղուրբան:

էրնակ, էրնակ էն օրին,
Ինչ ծաղկած բաղչի միջին,
«Ջան գիւլում» էինք ասում,
Սիրի—սիրի խաղ անում:

Արի, արի, նազլու ջան,
Չիշակ ջանս քի ղուրբան:

Քի որ տեսայ էն օրը,
Բարութ լցուեց իմ փորը.
Առանց խօսիլ անց կացար,
Խելքս զլիսիցս տարար:

Արի, արի, նազլու ջան,
Չիշակ ջանս քի ղուրբան:

Նազլու, լաւ չի, անիլ մի',
Սաղ սաղ հոգիս հանիլ մի'.
Ես մի հետ տու՝ սպանի,
Ես էս ցաւից ինձ հանի:

Արի, արի, նազլու ջան,
Չիշակ ջանս քի ղուրբան:

1888 թ.



Ց Ա Ն Կ

	էրես
1. ԶԱՅՆԻԿԸ	5
2. ՔԵԱՆԴԽՈՒԴԱ ԱԹԻՆ -	22
3. ԳԻՒՂԻ ԱՅՐԻՆ	34
4. ԴԻԱԱՆԲԷԳԻՆ	68
5. ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԸ	87
6. ԳՐԱԳԻՐ ԼԵՒՈՆԸ ԵՒ ԳԻՒՂ. ԴԱՏ.	99

ՀՀ Ազգային գրադարան



NL0316980

16.795

